

4142

Զ. Լ Ի Լ Ի Ն Ա

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ

Դ Ե Պ Ի

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

301

L-52

Թ Ի Փ Լ Ի Ս — 1924

301

L-52

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՎ

Զ. Լ Ի Լ Ի Ն Ա

1008
3868

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ

Գ Ե Պ Ի

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

4036

Թարգմանեց

Շ. Գ. Բ. Ա. Գ. Ա. Շ.

պայմանագրով
Վ. Գրիգորյան
1/11 24

12572-mp

1503

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն «Մ Ա Ր Տ Ա Կ Ո Չ»
Թ Ի Ֆ Լ Ի Ս № 7 1924



2010

Այս գիրքը սպվում է
Ռուսաստ. Կոմմունիստ. Կուսակցության Անդրկովկ. Յեկրային
Կոմիտեյի պատվերով

45765-ախ

12001

30801-63
(42632-63)

«Ամբողջ նախորդ հասարակարյան պատմությունը դասակարգելի կռվի պատմություն է:

Բոլոր նախորդ շարժումները փոքրամասնության շարժումներ էին կամ շարժումներ հոգուս փոքրամասնության: Պրոլետարական շարժումը անագին մեծամասնության անկախ շարժում է հոգուս մեծամասնության:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՓԵՍՏ

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ ԴԵՊԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է կոմմունիստական հասարակությունը.— Տալ համառոտ տեսությունը մարդկության զարգացման պատմության և հետևել, թե ինչ աստիճաններով է անցել մարդկությունը նախնական կոմմունիստական ընտանիքից դեպի կոմմունիստական հասարակություն— ահա մեր նպատակը, վոր դրել ենք այս գրքի բույլի մեջ:

Յերբ մեզ կոմմունիստներին, հարցնում են— ի՞նչպես ենք պատկերացնում կոմմունիստական հասարակությունը, ի՞նչ հիմնական սկզբունքների վրա պիտի կառուցվի նա, — մենք պատասխանում ենք. «Կոմմունիստական հասարակությունը կառուցված կը լինի արտադրության և սպառման համայնացման վրա: Կոմմունիստական հասարակության բոլոր անդամներն անպայման պետք է աշխատեն, իսկ աշխատանքի արդյունքները պետք է բաշխվեն ըստ պահանջների»:

— Բայց ի՞նչպես պետք է վարձատրել աշխատանքը, — հարց կը տան մեզ. — ձեր տեսլով, կարող ե պատահել, վոր փողոց մաքրողն իր աշխատանքի համար ավելի կը ստանա, քան պրոֆեսորը: — Այո, կարող ե պատահել, — պատասխանում ենք մենք. — դա կախված կը լինի սրա կամ նրա պահանջների աստիճանից: Փողոց մաքրողը պարագում է ֆիզիքական աշխատանքով, վորի ժամանակ հարկավոր ե ուժեղացրած մտունը նրա կյանքի ու աշ-

խատուենակութեան պահպանման համար, և յիժե նրան անհրա-
 ժեշտ և յերկու կամ յերեք ճաշ, նա պետք է ստանա յերկու կամ
 յերեք ճաշ: Իսկ յիժե պրոֆեսորին պետք է մի ճաշ իր կյանքի
 ու աշխատուենակութեան պահպանման համար, նա կը ստանա
 միայն մի և վոչ թե յերկու կամ յերեք ճաշ, վորովհետև փնայած
 ճաշերը վոչ միայն ողուտ չեն կարող տալ նրան, այլ ընդհա-
 կատակը, կը փնասեն նրան»:

Կոմմունիզմի գաղափարն ըմբռնել չցանկացողը, ի հարկե,
 չի հասկանում այս: Մինչդեռ մեզ՝ կոմմունիստներին համար կոմ-
 մունիստական հասարակութեան կազմակերպութեան սկզբունքը
 հասկանալի ու պարզ է, ով չի աշխատում, նա չի ուտի, իսկ ով
 աշխատում է, նա կը ստանա այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է
 իրեն, համաձայն իր պահանջներին, անկախ նրանից, թե նա ին-
 չով և պարապում: Ամեն մի պիտանի աշխատանք կոմմունիստա-
 կան հասարակութեան մեջ անհրաժեշտ է ու հարգելի, և ամեն մի
 աշխատավոր հասարակութեան իրավահավասար անդամ է: Կոմմուն-
 իստական հասարակութեան մեջ չկա և չի կարող լինել ավելի
 կամ պակաս հարգելի մարդկանց բաժանումն, ինչպես չի կարող
 լինել նաև պատվավոր ու անպատիվ աշխատանքի բաժանումն: Յեթե
 աշխատանքը հարկավոր է և ոգտակար, նա գրանով էլ
 պատվավոր է:

Սրինակի համար այսպիսի մի դեպք: Քաղաքում տարածվել
 և խոլերա կամ մի այլ վորեւ համաճարակ հիվանդութիւն: Փիտ-
 նականները մտահոգված են գրա դեմ կռիվ մղելով, ուսումնասի-
 րում են նրա պատճառներն ու գալիս հետևյալ յեզրակացութեան.
 վորպեսզի հաղթանարվի սոսկալի հյուրը, անհրաժեշտ է մարբել
 ազրի ու արտաքնոցների փոսերը: Այս աշխատանքն իրենց վրս
 յեն վերցնում նույնպիսի ուսումնական և հասարակութեան ան-
 դամների առողջութեան պահպանումով շահագրգռված քաղաքա-
 ցիներ: Նրանք կատարում են մի աշխատանք, առանց վորի գիտ-
 նականի ամբողջ գիտութեանն անդոր կը հանդիսանար հաղթա-
 հարելու շարիքը: Հարց է տրվում, թե այդ յերկու տեսակի աշ-
 խատողներից ով ավելի ոգտակար, պատվավոր աշխատանք կա-
 տարեց: Մեր կարծիքով թե գիտնականը, թե բանվորը: Նրանք
 յերկուսն էլ կատարեցին մի գործ—հաղթահարեցին հիվանդու-
 թիւնը: Հետևարար նրանք յերկուսն էլ հասարակութեան համ-
 արժեք անդամներ են, ինչպես վոր համարժեք է նրանց աշխա-
 տանքը:

Սակայն, նախքան կոմմունիստական հասարակութեան մասին
 խոսելը, անհրաժեշտ է հետևել, թե ինչ աստիճաններով և ան-
 ցել մարդկութեան զարգացումը և վորոնք են այն պատճառները,
 վոր զեկավարում են մարդկութիւնը իր զարգացման ընթացքում:

Գոյութեան կռիվը վորպես հիմք ամեն կյանքի.—Մեր ամ-
 բողջ շրջապատը, ինչպես և մարդը, յենթակա յե անդադրում փո-
 փոխման ու զարգացման: Գլխավոր գործոճները, գլխավոր պատ-
 ճառները, վորոնք առաջ են բերում հիմնական փոփոխութիւններ
 ինչպես կենդանական ու բուսական, այնպես և մարդկանց աշխար-
 հում, հանդիսանում է գոյութեան կռիվը—տնտեսութիւնը: Բոլոր
 կենդանի արարածների զարգացումը պարզ ձևերից զեպի ավելի
 բարդ ձևերը՝ նույնպես արդյունք է գոյութեան կռիվի: Աշխարհիս
 ամենամեծ գիտնականներից Չարլզ Գարվինին աջողկեց հաստա-
 տել, վոր բոլոր կենդանի օրգանիզմների մեջ գոյութիւն ունի ցե-
 դային կապ, վոր բոլոր բույսերն ու կենդանիները, նրանց թվում
 նաև մարդը, չեն ծագել, ստեղծվել ինքնըստինքյան, մեկը մյուսից
 անկախ, այլ ընդհակառակը, առաջացել են մեկը մյուսից, սկզբնա-
 կան բճիճներից և հասարակ կենդանիներից մինչև բնութեան թա-
 գավորը—մարդը, աստիճանական դանդաղ փոփոխման պրոցեսի,
 միլիոնավոր տարիներինսկայական ժամանակամիջոցի ընթացքում:
 Գոյութեան կռիվ պրոցեսում ավելի թույլ անհատները վաճառնում
 են, իրենց տեղը զիջելով ավելի կատարելագործվածներին, ուժեղ-
 ներին, կյանքին ավելի հարմարվածներին: Ինչպես Գարվինն և
 նկարագրում, բնութեան մեջ ամեն ինչ կատարվել է գոյութեան
 կռիվ ազդեցութեան տակ: «Որգանական բոլոր եակները—կենդա-
 նիներ, բույսեր և մարդիկ—բոլոր ապրողները խառնվել և հյուս-
 վել են իրար հետ կատարել մահու կռիվ մեջ, ուր ամեն մի եակ
 կյանք և թեակսխում իր նմանների միլիոնավոր գիակների վրայով:
 Այս կատարել կռիվ պատճառը թագնվում է կենդանի եակների ի-
 բնեց կյանքը պահպանելու և բազմանալու ձգտումների մեջ»:

Գոյութեան կռիվը կենդանական յեվ բուսական աշխար-
 հում.— Յեթե հնարավորութիւն տրվի խատուտիկին իր հարյուրա-
 վոր հունտերով կամ խաշխաշին, վորի միայն մի գլխում մինչև
 յերեք հազար հունտ կա, թույլ տրվի ազատ կերպով զարգանալու,
 ապա փոքր ժամանակամիջոցում յերկրապնտի յերեսը ամբողջովին
 կըծածկվի այդ յերկու բույսերով: Այն ինչ մենք տեսնում ենք,

վոր խատուտիկի և խաշխաշի կողքին զարգանում են նաև ուրիշ բույսեր: Այս բույսերն անեղ կովից հետո իրավունք ձևոք բերին գոյություն ունենալու: Նրանց միջև տեղի ունեւր և ունի մի կռիվ, վոր վերջացավ վոչ խաշխաշի և խատուտիկի ոգտին, վորոնք հարկադրված եյին իրենց տեղը զիջել ավելի կենսունակներին, ավելի կայուն գրացիներին: Յեւ նոր բույսերը, բռնելով հաղթված խատուտիկի և խաշխաշի տեղը, անհոգ կերպով քայլում են իրենց յեղբայրակիցների դիակների վրայով: Ահա այդպես և գոյության կովի անդուծ որևնքը:

Կենդանական աշխարհում գոյության կռիվը տարվում է վոչ պակաս կատաղությամբ:

Յեթե զարգացման ազատություն տրվի փղին, վորն իր յերկու հարյուր տարվա կյանքով արտադրում է միայն յերեք զույգ ձագ, ապա 500 տարվա ընթացքում միայն մի զույգ փղեր կարտադրեն Դարվինի հաշվով 15 միլիոն ծագ: Սակայն գոյության կովի պրոցեսում փղի ձագերը բոլորը չեն ապրում: Ահա թե ինչու փղերը յերկրագնտի վրա ավելի քիչ են, քան կարող եյին լինել, յեթե կենդանական աշխարհում գոյություն չունենար գոյության կռիվը:

Փորելի զարգացման ու մահացման պրոցեսը տալիս է կենդանական աշխարհի գոյության կովի լիակատար պատկերը: Արխանգելսկի նահանգի սառցադաշտերում (սոնդրա) ապրում է փորելի մի գազանիկ Փորել (нестришка): Դրանք բազմանում են խիստ արագ—մի քանի անգամ տարվա մեջ և ամեն անգամ նրանք ունենում են 5—6 ձագ: Մի տարվա ընթացքում Փորելները զարգանում են արտասովոր կերպով: Իսկ ձմեռը վրա չե հասնում նրանց դժբախտությունը: Բույսերն ու թփերը ցրտից սառչում են: Ուտելիք չկա: Յեւ թափառում են խեղճ գազանիկները սառցադաշտերում: Իսկ մահն ամեն կողմից սպառնում է նրանց: Այդ ժամանակ Փորելները գնում են ուրիշ տեղ իրենց համար ուտելիք վորոնելու: Փորելները սառցադաշտերից փախչում են հազարներով, ամբողջ բանակներով: Իսկ նրանց բանակի յետևից գնում են թշնամական բանակներ: Գայիբը, ազվեաները, շները, արծիֆները, սպիտակ բույսերը, սև ու դեղին ագռաֆները խժուռ են նրանց անհամար թվով. ձայերը, դիշատիչ ձկները հավշտակում են այն Փորելներին, վորոնց ալիբը քշում տանում է գետերից անցնելու ժամանակ: Փորելներն էլ ավելի վոչնչանում են քաղցից ու հիվանդություններից: Հազարավոր

մահացածներ մնում են ճանապարհի վրա: Միայն ավելի ուժեղներն ու կյանքին ավելի հարմարվածներն են, վոր հաղթանակով են գուրս գալիս գոյության և ուտելիքի համար մղած այդ սուկալի կովից: Գոյության կռիվը չզիտե ոգտակարի ու միատակարի որևնքները: Ով ուժեղ է, նա էլ կը տանի հաղթանակը:

Ահա թե ինչու ավելի դիմացկուն, կյանքին ավելի հարմարված կենդանիները միշտ ավելի ու ավելի գրավում են քիչ հարմարված և թույլ կենդանիների տեղը: Ուժեղները կլանում են թույլերին, թույլերը կլանում են ավելի թույլերին: Կենդանական աշխարհում գոյության կռիվն ընթանում է անընդհատ, անվերջ, գիշեր ու ցերեկ, ձմեռ ու ամառ:

Մարդկային հասարակության գոյության կռիվը յեւլ գոյության կռիվը մարդկային հասարակության մեջ.—Մարդկային հասարակության մեջ ևս գոյության կռիվը խաղում է ամենանսկայական դերերից մեկը: Չնայած իր դանդաղ զարգացման, մարդը վոչ մի բացառություն չի կազմում կենդանական աշխարհում: Յեթե յերկրագնտի ազգաբնակիցներն անարգել կերպով բազմանար, յեթե գոյության կովում չանհետանային միլիոնավոր մարդիկ, ապա 2535 թվին, Դարվինի հաշվով, մարդկային ցեղը կը ծածկեր ամբողջ յերկիրը—ցամաքն ու ջուրը խիտ ամբոխով, կողք կողքի: Սակայն գոյության կռիվն այստեղ ևս կլանում է ավելի թույլերին: Յերեխաների մահացումն այնտեղ ավելի խիտ և, ուր գոյության կռիվն ուժեղ է: Գոյության կռիվն հանդիսացավ մարդկանց դեպի կուլտուրան մղող հիմնական գործոններից մին: Յեւ նույն այդ գոյության կռիվը քայքայեց նախամարդու յեղբայրական սերտ ընտանեկան հարաբերությունները, վերածելով մարդկանց յեղբայրական հարաբերությունը ակերբի ու սարուկների, շահագործողների ու շահագործվողների բաժանման:

Վոր գոյության կռիվը մարդկանց աշխարհում խաղում է անսովոր խոշոր դեր, այդ ամենից ավելի լավ կարելի չե տեսնել, յեթե հետազոտվի մարդու կյանքը նրա պատմական զարգացման առաջին աստիճանից մինչև մեր որերը:

Համաձայն Դարվինի ուսմունքի, մարդը կենդանական աշխարհում բացառություն չի կազմում: Մարդը բարձրագույն կենդանի չէ: Նրա մտտակու նախորդները մարդանման կառիկներն են: Գոյության կովի ընթացքում մարդը շնորհիվ այն հանգա-

մանքի, վոր ավելի հարմարված եր կյանքին, առանձնացավ, բա-
ժանվեց իր նախորդներից — կապիկներից և դարձավ բնության
թագավոր:

Ինչ նանապարհով.— Աստվածայունն այդ հարցին ուղղա-
կի և անմիջական պատասխան և տալիս: Աստված աշխարհը
ստեղծեց վեց որում: Նա ամեն մի արարածից ստեղծեց մի-մի
գույգ: Ստեղծեց սղամարդուն, իսկ նրան ընկեր ավավ կնոջը:
Աստված մարդկային գույգը սեղավորեց զբախտի մեջ ու ասաց
նրանց. «Ապրեցեք ձեր բավականություն և բազմացեք մեր փառ-
քի համար»: Յեվ միայն այն բանից հետո, յերբ սղամարդն հրա-
պուրված կնոջով՝ ճաշակեց չարի ու բարու կենաց ծառից, այ-
սինքն ցանկացավ սովորել, գայրացած աստված մարդուն վնդեց
զբախտից ու ասաց նրան. «Բո՛ւ ճակատի քրտինքով կուտես քո
հացը»: Աստված մարդուն, նրա հետաքրքրություն համար, ըստ
Աստվածաշնչի վկայության, գատապարտեց աշխատանքային
կյանքի:

Յեվ իրոք, նախամարդու զբուծյունը բոլորովին զբախ-
տային չեր: Մեզ հասած տեղեկությունները մարդու կյանքի
առաջին որերի մասին պատմում են հետևյալը. մարդն յերևան
յեկավ միայնակ կամ ամենաշատը՝ գույգերով: Յեվ վորովհետև
նա չունեւր վոչ սոււր յեղունգներ, վոչ սոււր ատամներ, վոչ ել
զազանային աչքի սրատեսություն ու արագավազ վտաներ, նա
ավելի քիչ հարմարված հանդիսացավ գոյություն կովին, քան
գիշատիչ կենդանիները: Մարդը, վորին մենք այժմ հպարտորեն
մեծարում ենք «բնության թագավոր» անունով, իր զարգացման
առաջին շրջանում վոչ միայն բնության թագավոր չեր, այլ նրա
ամենախոնարհ ստրուկն եր միայն: Վախենալով գազանների հար-
ձակումից և անկարող լինելով պաշտպանվել նրանցից, նախա-
մարդն ստիպված եր ավելի քաբայրներում, մեծ ծառերի խո-
տջների մեջ, ծառերի վրա կամ ստաջին վտանդի գեղբում մա-
ղբուցում եր ծառերն ի վեր, ուր այդպիսով նա գանձում եր գա-
զաններին անմատչելի սահմաններում: Հոտային կամ հասարակա-
կան բնագղը, վոր մարդը ժառանգել է իր նախորդ կապիկից,
այլև նախամարդու անսղանկանությունն ստիպեցին նրան, հնա-
բավորություն չափով, մերձենալ հենց իր նմաններին, մարդուն,
և կողմել իր տեսակի ընտանիք:

Նախնական ընտանիքի տնտեսական դրությունն ու նրա
կազմակերպությունը.— Նկարագրած շրջանում մարդը մնում եր
գլխավորապես արմատներով, պտուղներով, ուտելու հատիկներով,
մանր կենդանիներով ու ձկներով, վորոնց նա ձեռք եր բերում
անդին ձեռքով: Այդ շրջանում մարդը վոչ մի արտադրական
գործիք չունեւր: Նա վոչ ցանում եր, վոչ ել հնձում, այլ բնու-
թյունից ստանում եր միայն այն, ինչ վոր նա պատրաստի տա-
լիս եր:

Ուտելիք ձարելով պարագում էյին ընտանիքի բոլոր աշ-
խատունակ անդամներն առանց բացառություն, տղամարդիկ թե
կանայք. նրանք բոլորը պարագում էյին պտուղներ հավաքելով,
վորսորդություն, ձկնորսություն: Այդ շրջանում ընտանիքի բո-
լոր անդամները պետք է ամեն ինչ իմանային: Անպայման պետք
է բոլորն ել աշխատեյին, իսկ ով, բացի յերեխաներից, ուժա-
սպառ ձերունիներից ու պտուղներից, չեր աշխատում, նա չեր
ստանում ուտելիք:

Ձեռք բերված մթերքներն այս ընտանիքներում բաշխվում
էյին ընտանիքի բոլոր անդամների միջև ըստ նրանց պահանջների,
այսինքն՝ ընտանիքի բոլոր անդամներն ուտում էյին մինչև լավ
կշտանալը: Ինքը հասարակությունը շահագրգռված եր նրանով,
վորպեսզի այն զեպրեիւում, յերբ մթերքներն առատ էյին, բոլորն
ել ուտեյին մինչև կշտանալը, վորովհետև հասարակության կուշա
անդամը լավ վորոնող, ճարպիկ վորսորդ ու ձկնորս եր, իսկ հա-
սարակության քաղցած անդամը— վատ աշխատող և նրանից ըն-
տանիքը քիչ ոգուտ եր սպասում:

Ընտանիքի անդամների փոխադարձ հարաբերությունը յեղ-
բայրական եր: Այս հասարակության մեջ բոլորը պատկանում
էյին բոլորին. վոչ վոք այստեղ չեր ասում՝ ապա վորսն իմն է,
այս պտուղն իմն է»: Մինդի բոլոր մթերքները պատկանում էյին
ամբողջ հասարակությանը կամ ամբողջ ընտանիքին: Յեղբայ-
րությունն ու հովատարությունն այդ կոմունիստական ընտա-
նիքի հիմքերն էյին:

Այդ կոմունայի կամ կոմունիստական ընտանիքի թիվը
մեծ չեր: Իր նախնական ձեռք ցեղային խմբակը կազմված եր,
հավանականաբար, կին-մորից և նրա զավակներից: Ժամանակի
ընթացքում, շնորհիվ աշխատակցությունն ոգտակարությունն ու
անհրաժեշտությունն, ընտանիքի անդամների կապն ավելի ուժեղ
է գտնում: Սակայն ցեղային խմբակները մեծանում էյին մինչև

մի վորոշ սահման, վոր դնում էր նրանց անտեսական դրութիւնը, այսինքն մինչև այն ժամանակ, քանի տվյալ հողային հրապարակը բավարարում էր ընտանիքի բոլոր անդամներին անդի մթերքներով:

Գերբնակչութեան որևէրը վորպես կուլտուրայի առաջ-մղիչ.—Գերբնակչութեան որևէքն հանդիսացաւ նախնական հասարակութեան զարգացման ուլմը: Գերբնակչութեան որևէքը հիմնված է այն բանի վրա, վոր հողային վորոշ տարածութիւնը կարող է կերակրել միայն վորոշ թվով մարդկանց և վոչ ավելի: 2—3 դեպքաւորը բաժանելով շնչերի, որինակ, կարող է կերակրել 2—3 հողի ունեցող ընտանիք, բայց յերեք 10—12 հողուց բաղկացած ընտանիք: Վորպեսզի մի հողային տարածութեան վրա ապրող վորոշ թվով մարդիկ կերակրվեյին այն պայմանով, վոր վոչ ցանեյին և վոչ էլ հնձեյին, այլ ամեն ինչ ստանային բնութիւնից պարաստի ձևով, պետք էր, վոր այդ տարածութիւնը բավական ընդարձակ լիներ: Բայց վորովհետև նախամարդն այդ շրջանում փոխադրութեան վոչ մի յեղանակ չգիտեր, այդ պատճառով կոմունիստական ընտանիքը վոչ մի հնարավորութիւն չուներ տարածվելու լայն հողային ընդարձակ տարածութեան վրա: Դրա հետևանքն այն յեղով, վոր նախնական ընտանիքները հնարավորութիւն չունեցան մեծանալու: Որինակի համար, միջին գոտու մի քառակուսի մղոնի վրա այն ժամանակներում, յերբ մարդը բնութեան խոնարհ ստրուկն էր, կարող էր կերակրվել 20—30 հողուց վոչ ավելի: Այդ պատճառով միութեան մեջ այն ժամանակներում մանում էյին միայն այն մարդիկ, վորոնք արդեն կապված էյին միմյանց հետ արենակցական կապերով: Սակայն այդ արենակցական ընտանիքները կամ միութեաններն ևս ժամանակ սուսմանակ բաժանվել ու կազմել են նոր ընտանիքներ, աղջկային միութեաններ: Ընտանիքի այդպիսի բաժանման պատճառն այն գիտակցութիւնն էր, թէ յեթե ընտանիքի անդամների թիվն աճում է այն նորմայից ավելի, վոր կարող է կերակրել տվյալ հողային տարածութեան վրա ապրող մարդկանց, ապա մարդիկ այդ տարածութեան վրա քաղցից կարող են մեռնել:

Այդ հիմնական որևէքը—գերբնակչութեան որևէքը կամ ամբողջ ցեղի անդամներին լիովին սնունդ մատակարարելու հարցը—հանդիսանում է այն առաջմղիչը, վոր ստիպում էր մարդուն զարգացնել և կատարելագործել իր տեխնիկան և զարգացման ճա-

նապարհով առաջ ընթանալ: Վորովհետև բացարձակ գերբնակչութիւնը իր հետ բերում է սով, հիվանդութիւններ և ցեղի անդամների մահացութիւն, ուստի բնական է, վոր մարդը դուրս է գալու նախնական մարդուն հատուկ անշարժութեան բխացումից և ստեղծված ծանր դրութիւնից մի յելք վորոնում: Առաջին այդպիսի յելքն հանդիսանում է ցեղի անդամների մի մասի տեղափոխութիւնը դրացի հողային մի այլ տարածութիւն: Այնուհետև աստիճանաբար ստամոքսի անողոք հարցից դրդված՝ մարդը կատարելագործում է իր տեխնիկան: Սակայն այդ ամբողջ առաջադիմութիւնը կատարվում է անորինակ դանդաղութեամբ, վորովհետև մարդու ամբողջ ուշադրութիւնը, նրա ամբողջ ազատ ժամանակը կլանվում է սնունդ հայթայթելու հոգսով:

Տեխնիկան կոմունիստական ընտանիքի շրջանում.—Այն բոլորը, ինչ վոր ունենք տեխնիկայի շրջանում, վորպես արգասիք գիտութեան ու կուլտուրայի, այդ բոլորը նախամարդը գտել է ուղղակի պատահաբար, մի շարք միտքինակ ու կրկնվող յերևույթներ գիտելու միջոցով: Նախամարդը նախորոք հիմնված գիտելիքներ չունի: Ամեն բանի մասին նա պետք է մտածել ինքն իր անդարգացած խելքով և անտեսական ամենալատթար պայմաններում: Այդ շրջանում գոյութեան կոնվը կարեվեր ծանր է: Չկա վստահութիւն հաջորդ որվա մասին, չկա պաշար վաղվա համար, վորովհետև նախամարդը դեռ չի հասել մթերքները սե որվա համար պահելու գիտակցութեան և կարողութեան: Մարդը ամբողջ որը և բոլոր որերը, նույնիսկ իր ամբողջ կյանքը գործադրում է միայն այն բանի վրա, վոր կերակուր գտնի: Նախամարդու հոգեկան զարգացման համար այդպիսի պայմաններում չափազանց քիչ ժամանակ է մնում:

Այն գործիքները, վոր մարդը իր զարգացման առաջին աստիճանի վրա ոգտագործում է, իրստ աննշան են: Պատահական միջոցով էր, վոր մարդն իմացավ, թէ մահակը կամ քարը կարելի յէ գործադրել վոչ միայն իրրև ինքնապաշտպանութեան գործիք, այլ և իրրև պարեն ձեռք բերելու միջոց: Պարզապես պատահաբար դիտչելով սուր քարի, նույնիսկ վոտն արյունոտելով և առաջին անգամ նույնիսկ ուշադրութիւն չդարձնելով այդ յերեվոյթի պատճառի վրա, այլ այդ յերևույթի մի շարք կրկնումներից հետո միայն մարդը կարողացավ հասկանալ, վոր սուր քարը

կարում և և նա կարող և պիտանի լինել իրեն ուսելիք ձևեր բերելու համար:

Դարձյալ դիտվածով եր, վոր նախամարդը հասկացավ, թե ծակ քարի մեջ անցրած մահակը կարող եր սգտագործվել, ինչպես մեր այժմյան կացինը կամ մուրճը: Սակայն, կրկնում եմ, մարդն ուղղակի պատահաբար մտածեց այդ գործիքները հնարելու և գործադրելու մասին: Ընդհանրապես նախամարդու կյանքում պատահականությունը խաղում և հսկայական դեր:

Ահա թե ինչպիսի պատմվածք և գրել Վ. Ավետարիուսը («Северное Сияние» № 1—2) առաջին կացինի մասին.

«Աղջիկ թիրան և տղա Ոմդոն խիտ բարեկամ էյին իրար:

«Թիրան հաճախ ասում եր՝ գնանք ձուկ վորսալու:

«Այն ժամանակ գետակներում մեծ քանակությամբ ձկներ կային: Յերկար ճիպտաներով գինված, նրանք նստում էյին կանաչի վրա, իսկ յերբ մի վորևե մեծ ձուկ բարձրանում եր ջրի յերեսը արևի տակ տաքանալու, նրանք ճիպտի ամենաուժեղ մի հարվածով խիտում էյին նրա գլխին ու վորսը դուրս բերում ջրեց ուտելու:

«—Գնանք վորսի, — ասում եր Ոմդոն:

«Յեզ անա նրանք խիտ անտառում մահակներով թագնվում էյին ծառի յետևը, լուռ նայելով հսկում էյին փոքրիկ գազանիկներին—սկյուսի կամ նապաստակի, վորոնք ընկնում էյին նրանց ուժեղ հարվածների տակ:

«Այդպես մի անգամ թիրան և Ոմդոն խաղում էյին մի քարայրի առջ, քարեր նետելով վորոշյալ մի նշանի: Այդտեղ Ոմդոն ձեռքն ընկավ տարորինակ մի մեծ քար: Քարի մի կողը սուր եր, իսկ մյուս կողը հաստ և ծակ: Դա արհեստականորեն շինված քար չեր, մարդն այն ժամանակ գես չեր հասել այդպիսի վարպետություն: Վորպես զի նետելու համար հարմար լինելը, Ոմդոն մահակը մացրեց կայծքարի ծակի մեջ: Սակայն, յերբ նա այնուհետև վրա բերեց մահակը, քարը վայր չընկավ, վորովհետև մահակը պինդ ամրացել եր նրա մեջ: Ոմդոն վաչ մի կերպ չկարողացավ դուրս քաշել մահակի ծայրը: Այն ժամանակ նա քարի սուր կողով հարվածեց մի մեծ ծառի բնին: Յեզ ինչ,— ծառը կոտրվեց: Այդպիսի հրաշք չէյին տեսել վաչ Ոմդոն և վաչ էլ թիրան:

«— Ապա մի անգամ ես, — ասաց թիրան:

«Ոմդոն կրկնեց հարվածը: ուրիշ մի հաստ ճյուղի, և կտորված ճյուղը գետին ընկավ:

«— Տուր ինձ տեսնեմ, — ասաց թիրան և, վերցնելով քարով մահակը, յերկու ձեռքի ճարպիկ մի հարվածով ձեզրեց հաստ վտար միանգամից: Նա վախեց նոր գործիքը նույնիսկ բաց թուլեց ձեռքից:

«Ոմդոն վորպես տղա, ի հարկե, ցույց չտվավ, թե վախեցավ, սակայն դողաց և մահակը նորից վերցնելու քաջություն չունեցավ: Դա ինչ-վոր կախարդված մի բան եր: Յեզ նա վախեց գնաց թագնվեց քարայրում, կարծելով թե մահակը կը թռչի գետնից և կը նետվի իր վրա:

«Թիրան և՛ վազեց իր ընկերոջ յետևից, և յերկուսն էլ նրստեցին քարայրի մուտքի առջ, աչքերը հառած քարին, վորի մեջ այդպիսի հրաշագործ ուժ կար: Սակայն այդ քարը, ինչպես և բոլոր մյուս քարերը, տեղից չշարժվեց:

«Յեզ հանկարծ մի մուտց յերկուսին էլ ցնցեց և սախեց յերկուսին էլ յետ նայել: Անտառային մի սոսկալի գազան, մի անագին արջ անտառի խորքից գալիս եր գետի նրանց, ագահաբար շնչելով ողբ: Պետք եր փախչել: Բայց դազանն իսկույն կը հասնի նրանց: Պետք է պաշտպանվել:

«— Մահակով քարը, — գոռաց թիրան:

«— Մահակով քարը, — կրկնեց Ոմդոն, և նետվեց նոր գնաքի վրա, վորը կտորում եր ճյուղերը և վորից նրանք այնպես վախեցան:

«Իր վրա յեկող տղային տեսնելով, արջը մանչալով բարձրացավ յետին թախիբի վրա: Թիրան սարսափից սկսեց գոռալ, իսկ Ոմդոն գոռնատ, բայց վճռական, փայլուն աչքերով, իր գնաքը բարձրացրեց գլխից բարձր և ամբողջ ուժով հարվածեց արջի գլխին: Դարձյալ հրաշք կատարվեց. անեղ անտառային գազանի գոնդը, վորի հետ հասակավորներն անգամ չէյին համարձակվում կովի մտնել, թնայունով ձեղքվեց և ինքը գազանը յերկրվեց: Արջն ալկի բարձր մրմուռով շարժվում եր առաջ, սակայն աչքերի մեջտեղին հասցրած մի նույնպիսի շեշտակի հարված ևս վերջ տվավ կովին. թախիբը շարժելով, ուղղակի ննարան փրճուրկով, արջն ընկավ իրեն հողթողի փոտքերի մոտ, հենց այն բուպէյին, յերբ թիրայի հայրն ու մայրը մոտենում էյին քարայրին:

«Մի քանի սր շարունակ ամբողջ բնասնիքը յերկրպագելով կախարգական գնաքին, վորը վճուել եր տղայի ու արջի կոխիլը:

չեր համարձակվում զիպչել մահակով քարին: Հետզհետե բոլորն սկսեցին դեպի նա վերաբերվել ավելի վստահությամբ, նույնիսկ վերջում ելին նրան իրենց ձեռքը, իսկ այնուհետև այնչափ հանդգնեցին, վար սկսեցին ողտադրծել նրան տնային զանազան կարիքների համար:

«Յե՛վ այդպես գտնվեց ատաշին կացինը: Այնուհետև նրա գործածությունը ասարածվեց նախնական ցեղերի մեջ, և այդ ժամանակից մարդիկ կարողացան վոչ միայն ավելի շատ խիզախ կերպով պաշտպանվել վայրի գազաններից, այլ և իրենց համար բնակարան շինել և հեշտությունը ուտելիք ձեռք բերել»:

Շատ կարելի չէ, վոր այդ գյուղան արված եր խաղացող յերեխաների միջոցով, ինչպես և կարելի չէ, վոր կրակի ուժի գյուղը պատկանում և կհոջը, վորպես ընտանիքի ավելի նստակյաց անդամի:

Մակայն կրակի ուժի գյուղի մեջ ևս պատահականությունը խաղում և վոչ պակաս դեր Պետք եր, վոր պատահաբար կարծակը խփեր պողատու ծառերին, այնուհետև անհրաժեշտ եր, վոր կրակով խորովված պտուղներն ընկնելին մարդու ձեռքը, վորպեսպի նա կարողանար կուտնել, թե խորովված խնձորը կամ արմասն ուրիշ համ ունեն և ավելի լավ են ուտվում, քան հումերը:

Մակայն, կրկնում ենք, մարդկային կուլտուրայի ատաշին շրջանում տեխնիկայի զարգացումն հանդիսանում և ավելի պատահականություն արդյունք, քան թե նախորդ սերնդի նախորդ մշակված ու կուտակված գիտություն արգասիք:

Խոսքի ստղծերը սոցիալական - աշխատանքային նշանչյուններից.—Նախնական շրջանում մարդու զարգացման նշաններին պետք և վերաբերվի նաև խոսքի ստղծերի ծագումը: Ընդամին այստեղ պետք է յնկնադրել, վոր խոսքի ստղծերը հանդիսանում ելին սկզբում բացառապես ձայնավոր հնչյունները, վորոնց սղությունը նախամարդը արտահայտում եր իր զգացումները—հիացմունքը, սարսափը, հաղթությունը, վախը և այլն: Ժամանակի ընթացքում այդ հասարակ միատեսակ ձայնավոր հնչյունները միացան, իսկ այնուհետև նրանց հետ միացան նաև մի քանի բաղաձայն հնչյուններ: Վայրենու, ինչպես և յերեխայի ատաշին խոսքերը իրիստ պարզ են: Մամա, պապա, նանյա, գադյա խոսքերը կազմված են մի ձայնավորի և մի բաղաձայնի կրկնությունից: Նախամարդու վերստրդական ու զինվորական

կանչն եր ոճոհո: Լիովին հասկանալի չէ, վոր նախամարդու ուղեղը չունի հնչյունների և խոսքերի այնպիսի պաշար, վորպիսին ունի այժմ զարգացման կուլտուրական աստիճանի վրա գտնված մարդու խոսքը, և նա ամենից ավելի մոտենում է յերեխայի թոթովանքին: Բաղմահազար տարիներ ելին պետք, վորպեսզի ստեղծվեր այն բազմակողմանի խոսքը, վորով այժմ ողտվում են աշխարհի կուլտուրական ժողովուրդները:

Նախնական ցեղի ներքին կազմը.—Նախնական ցեղի ներքին կազմն արտահայտվում է բոլոր անդամների լիակատար իրավահավասարությունը: Բոլորն աշխատում են միատեսակ, բոլորն էլ իրենց աշխատանքի համար ըստ պահանջի մթերքներ են ստանում: Չկան տերեր և ստրուկներ: Չկան ճնշողներ ու ճնշվողներ: Բոլորն էլ հավասար են: Բոլորը յեղբայրներ են իրար: Յեղի զարգացումն ընթանում է իրիստ գանդալ, շնորհիվ այն պահպանողականություն, վոր հասուկ է ամեն մի անդամից մարդու: Ամեն ինչ կատարվում է սովորույթի ու ավանդության հիման վրա: Այդպես ելին անում ծեր պապերը, այդպես էլ պարտավոր ենք անել մենք: Անձի անհատականության զարգացումը ծայրաստիճան թույլ ու աննշան է: Նախնական հասարակության մեջ կո՞չ դերը նույնն է, ինչ վոր և աղամարդունը: Բոլորն էլ հավասարակերպ աշխատում են իրենց փոքր ցեղի բարորություն համար, վորովհետև ցեղի բարորությունից է կախված ամեն մի անդամի բարբորությունը: Յեթե ցեղը անդի պարեն ունի, նշանակում և կուշա կը լինի և՛ ամեն մի անդամ: Յեթե ցեղը պարեն չունի,—սովից կը մեռնեն նրա բոլոր անդամները: Չի կարող պատահել ընտանիքի մեջ այնպիսի դրություն, յերբ մի անդամ ուտում է, իսկ ուրիշները սովից մեռնում են: Նախնական ընտանիքի կոմունիզմն էլ հենց նրանումն և կայանում, վոր բոլորն էլ անպայման աշխատում են ցեղի բարորության համար, և ցեղի բոլոր անդամներն ստանում են իրենց պահանջի համաձայն: Նախնական արտադրությունն ու բաշխումն ունեն վորոշ կոմունիստական բնույթ: Այդ հասարակության մեջ մասնավոր սեփականության նշույն անգամ չկար:

Նախնական հասարակության հոգեբանությունը.—Նախնական հասարակությունը տերեր և ստրուկներ չգիտեր: Մակայն, նախնական հասարակության անդամները բոլորովին ազատ մար-

դիկ չէին: Մարդուն ճշում եր բնութեան դաժան իշխանութիւնը, նա բնութեան հլու ստրուկն եր: Նույնիակ ցեղի մեջ, ուր իշխում եր յեղբայրութեանն ու հավասարութեանը, մարդն իր անձնական կամքը չուներ: Նրա փոքրն ու ձեռքը կաշկանդված էին ցեղի կամքով, և փոշ միայն նրա կենդանի անդամների, այլ և մեռածների կամքով:

Կովի և աշխատանքի սովորական ձևերն ու յեղանակները փոխանցվում էին սերնդից սերունդ: Նրանց մի փոքր խախտումը նկատվում եր փորպես հանցանք ավանդութեան դեմ: Ամենաչնչին նորամուծութեաններն անգամ սարսափ էին ներշնչում: Սովորութի ու յժը թագավորում եր բոլորի վրա, յիս պահելով, կասեցնելով զարգացումը:

Մեռածներն իշխում էին կենդանիների վրա:

Դեպքերով ցեղի նեղ շրջանում, ճնշված լինելով բնութեան ու յժերից, նախամարդը չեր կարող ունենալ լայն շրջանայեցողութեան: Նրա հոգեկան պաշարը խիստ խեղճ է և հանգում է դործնական գիտելիքների աննշան քանակի: Մարդը, գտնվելով բնութեան իշխանութեան տակ, անկարող եր թափանցել նրա գաղտնիքների մեջ: Ինչպէս առարկաներին, բոլոր յերևութիւններին նա նայում եր իր ոգուտի և փաստի տեսակետից: Թե քարը, փորով նա իր փոքրն եր վերափորում, թե արեւը, փոր այրում եր, նրա համար միատեսակ խորհրդավոր կակներ են, փորոնք սակցում են շարն ու բարին: Դեռ այս շրջանում նախամարդը կրօնի և աստուծո մասին գաղափար չուներ:

Բթամտութեան, նեղսրտութեան, վախ նորամուծութեանից — անա նախնական հոգեբանութեան ատանձնահատկութեանները: Թվում եր, թե նախամարդու այդպիսի գծերը հազիվ թե կարող լինեյին նպաստել նրա զարգացման և բնութեան ստրուկից բնութեան թագավորը դարձնել նրան: Սակայն ամեն մի առաջդիմութեան տարեբային գիմազութեանը հաղթահարվում եր սովի նույնպիսի տարեբային ու յժերով: Սովը մարդուն զրգում եր գործունեութեան, հաղթահարում եր պահպանողականութեանը, հպատակեցնում եր մեռածներին, սովը նպաստում եր սուսջադիմութեանը և տեխնիկայի զարգացմանը:

8986
1001
38668
ՊՇՄ
159-25924-67
30801-67


Գ Լ Ո Ի Խ II.

ՆԱԿԱԴԵՏԱԿԱՆ - ՑԵՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆԳ

Մնանապահութեան յեկ հողագործութեան ծագումը.— Գերբնակչութեան որենքը, ավելի ճիշտ՝ գոյութեան հարցը ստիպեց մարդուն առաջ շարժվել, իր համար ուտելիք ձարելու գործում նոր ճանապարհներ ու յեղանակներ գտնել Այստեղ եւ, ինչպէս ընդհանրապես նախամարդու ամբողջ կյանքում, պատահականութեանը խաղում է հսկայական դեր:

Անասնապահութեան գործում եւ պատահականութեանը խաղաց իր դերը: Նախամարդը գիտակցական ճանապարհով չի կարող հասնել այն բանին, թե անասուններին կիսով չափ, յեթե փոշ ամբողջովին, ընակալցնելը փորոշ չափով իր գոյութեանն սպառնում է: Սկզբում նա կենդանիներին ընակալցնում է միայն հաճույքի համար: Յեկ միայն սովի ծայրահեղ աստիճանն է մղում վայրենուսն մտածելու այն մասին, թե ընտելացած կենդանուն կարելի չե գործածել ուտելու համար: Հոստահատական գրութեանից յեկնելու այն միջոցը, փորին նախամարդը պատահաբար հանդիպեց, առաջին քայլն եր, փորով նա իմացավ, թե անասուններին սխտեմատիբարաբ ընտելացնելը կարեւոր է ոչ տակար բան է: Սակայն անասունները մարդուն ոգտակար են փոշ միայն այն ժամանակ, յերը նրանց մորթում են ուտելու համար, այլ և ոգտակար են կենդանի ժամանակ իրենց կաթով: Ներկա դեպքում գործյալ անհրաժեշտ է անազին գիտողութեան, վորպեսզի հասկանային, թե կենդանին իր կաթով կերակրել կարող է փոշ միայն իր ձագերին, այլև մարդկանց:

Հարկավոր էին մի շարք տանյակ տարիներ, փորպեսզի նախամարդը զար այն գիտակցութեան, թե միեւնոյն ուտելու հատիկները, արմատները կամ պտուղները բնում են միեւնոյն տեղում, միեւնոյն ծառի վրա: Ավելի եւ շատ ժամանակ գործադրեց նախամարդը, փորպեսզի բմբունի այն կապը, փոր կա պա-




տահաբար գետին ընկած հացահատիկի և նույն տեղում բուսած հացահատիկի կամ պտղի համապատասխան բույսի միջև:

Ամենից ավելի հավանականն այն է, վոր այդ դյուտը պատկանում էր կնոջը, վորը համենայն դեպս նստակյաց կյանք էր վարում, քան տղամարդը, վորովհետև կինը հարկադրված էր, բացի ուտելիք վորոնելուց, կատարել նաև մայրական պարտականություն:

Սակայն պատահաբար հողի մեջ ընկած հացահատիկի և կանախավոր հողագործությունը պարտապետ միջև սարեր ու ձորեր կային: Անհրաժեշտ էր վորոշ չափով դիտողություն համոզվելու համար, թե հողի վրա ընկած ցորենը, բացի բացառիկ դեպքերից, չի կարող բերք տալ, իսկ այն ցորենը, վոր ձգված է հողի մեջ և հողով ծածկված, կարող է բերք տալ: Դրա համար ևս, ինչպես և ամեն դիտելիքի, վոր ձեռք է բերվում դիտողության միջոցով, պետք էլին բազմաթիվ տարիներ:

Այդ դիտողության արդյունքն հանդիսացան հողագործության առաջին սաղմերը և յերկրագործական գործիքների ստեղծումը: Հողագործության առաջին ժամանակաշրջանում նախամարդը մատներով փորում է հողը և նրա մեջ հատիկ ձգում, իսկ հետագայում արդեն հսկայական առաջադիմական քայլեր է անում, գործածելով ծառի սրածայր ձյուղեր: Այդ ձյուղերը խրելով հողի մեջ, նա ստանում է մի բիշ ավելի խոր փոսիկ, ուր ձգում է հոնտը: Ծառի սրածայր ձյուղը նախամարդու հողագործական առաջին գործիքն էր: Այդ գործիքը վորչափ էլ նախնական լիներ, համենայն դեպս տեխնիկայի զարգացման գործում հսկայական առաջադիմություն էր: Այդ սրածայր ձյուղը նախահայրն է մեր յերկրագործական մեքենայի:

Անցումը թափառական կյանքից դեպի նստակյաց կյանքը.—Հողագործություն չիմացող նախամարդը վոշ ցանում է, վոշ հնձում, այլ սնվում է միայն այն պտուղներով, վոր բնությունը տալիս է պատրաստի ձևով: Այդ պատճառով, յերբ մի հողամասում նա կերել պրծել է բոլոր պտուղները, հարկադրված է լինում անցնել ուրիշ հողամասեր, վորտեղ գետ պտուղներ կան. այդպիսով նա թափառում է անդադար: Անասնապահության ու հողագործության ծագումով նախամարդը միանդամից նստակյաց չի դառնում: Նա անցյալի նման թափառում է տեղից տեղ՝ ուտելիք վորոնելու արդեն վոշ միայն իր համար, այլ և



իր հոտի համար: Սակայն այնուամենայնիվ նախնական ցեղը այժմ անդադար շարժման մեջ չի գտնվում: Նա շնորհիվ հողագործության մի տեղում մնում է մինչև այն ժամանակ, վոր հողի մեջ ցանված ցորենը հոնձ տա: Յեվ միայն հոնձը հավաքելուց հետո ցեղը շարժվում է դեպի նոր տեղ:

Այն ժամանակ, յերբ մինչև անասնապահության ու հողագործության ծագումը վորոշ հողամասում կարելի յեր կերակրել 20—30 մարդու, այժմ շնորհիվ հողագործության և անասնապահության՝ նույն հողամասը կերակրում է 70—80 մարդու: Այժմ ցեղի կյանքն արդեն ամբողջովին կախված չէ պատահականությունից: Այժմ, թեև մասնավոր չափով, ցեղի պահանջները բավարարվում են հողագործության կաթնային և մսային պարեններով: Վաղվա որվա հարցն արդեն այնչափ չի սարսափեցնում նախամարդուն, ինչպես նրա պարպացման առաջին շրջանում: Հողագործությունն ու անասնապահությունը հավելյալ պաշար էլին տալիս հաջորդ որվա համար:

Հետագայում նախնական հասարակությունն իր զարգացման ընթացքում մի տնտեսության մեջ է միացնում հողագործությունն ու անասնապահությունը և հաճախ մի տեղում նստելով՝ թափառական կյանքից անցնում է նստակյաց կյանքի: Մթերքների հավելման հետևանքով նշանավոր չափով ավելանում է ցեղի բնակչը, հասնելով արդեն 200—300 մարդու և ավելի: Յեղի թվի այդպիսի աճումին նպաստում էր վոշ միայն հողագործության միացումը անասնապահության հետ, այլ և անասունները փոխազրույթյան համար ոգտագործելու կարողությունը: Ուղտերով, ձիերով, յեղնիկներով ձամբա գնալը նախնական ցեղին հնարավորություն է տալիս տարածվելու հողային ավելի ընդարձակ տարածության վրա և գրանով ավելի մեծ տարածություն ուղտագործելու վորսորդություն անելու, դաշտերը մշակելու, հոտերն արածացնելու համար:

Նստակյաց կյանքը հնարավորություն է տալիս կատարելագործելու յերկրագործական գործիքները և անասունների ու յվը կերտելու վոշ միայն ձանապարհորդելու, այլ և յերկրագործության համար: Այդ ժամանակից մարդկանց աշխատանքի արտագրականությունն զգալի կերպով մեծանում է: Հավելյալ մթերքը, այսինքն ավելցուկը, վոր պետք չէ քաղցը հագեցնելու ավյալ մոմենտում, դառնում է մշտական յերևույթ, և մարդու գոյությունը կարելի յէ մեծ մասամբ ապահովված համարել:

Աշխատանքի ըստանումը.—Աշխատանքի բաժանումը առաջ յեկավ շատ վաղ, ուտելիք ձեռք բերելու ժամանակ, չնայած, վոր բոլոր նախամարդիկ պետք է իմանային անեկ ամեն բան: Աշխատանքի առաջին բաժանումն սկսվեց տղամարդու և կնոջ մեջ: Կապված լինելով ծննդաբերութեամբ և յերեխաների հոգսով, կինը չէր կարող միշտ մասնակցել վորսորդութեան և պատերազմի: Նա փնայ տանը, պտուղ հավաքելով և յերեխաներին հայելով:

Յերեխաներ կերակրելու հոգսը կնոջը մղում էր մի շարք գյուտեր անելու: Անպայման պղալու գործերն ու հավանքը հնարելու պատիվը պատկանում է կնոջը: Վորպետոյի պլինդ հացահատիկները յերեխաների համար ավելի հարմար լինելին ուտելու, մանրում էլին քարերի վրա, աչնպես, ինչպես այդ անում են կապիկները պլինդ ընկույզները ջարդելու համար: Հացահատիկները ջարդելու համար մանրելու հասարակ քարը ժամանակի ընթացքում փոխվեց հավանդի և ապա ձեռքով աղալու գործիքի: Այդ կատարվեց այն ժամանակ, յերբ կինը կռահեց, թե հացահատիկն ավելի հեշտ է մանրվում, յերբ դրվում է յերկու քարերի մեջ սեղ:

Այն ժամանակ, յերբ կերակուր ձեռք բերելու ասպարիզում բնդարձակվեց մարդու գործունեությունը շրջանակը, ընդարձակվեց նաև կնոջ գործունեությունը ուտելիքները վերամշակելու, պատրաստելու և պահելու գործում: Հենց այդ ժամանակից էլ կատարվում է աշխատանքի խիստ բաժանումը տղամարդու և կնոջ միջև:

Հասարակական աշխատանքի արտադրականություն բարձրացումը և տեխնիկայի զարգացումը հասարակությունը տալիս են առաջին խթանը աշխատանքի բաժանման առանձին անդամների կամ առանձին խմբակների միջև: Առաջին անգամ բաժանվում են անասնապահները, նրանցից հետո վորսորդները, զինվորները և այլն:

Պատերազմը վորպես արտադրությունն սուսնձին ճյուղ.—Նախնական ցեղը բազմանդամ չէր և կազմված էր գլխավորապես արևնակցական ազգականներից: Յեղբայրությունն ու փոխադարձ օգնությունը սահմանափակվում էլին ցեղի նեղ շրջանակում: Այն մարդուն, վոր չէր պատկանում ավալ ցեղին, համարում էլին թշամի, և նրան շատ անգամ վորսում էլին, վորպես գազանի:

Պատերազմի գլխավոր պատճառն հանդիսանում է ուտելիքի պակաս քանակը: Անտառի վորսի համար, գետի, լճի ձկների հա-

մար մի ցեղ հարձակվում է մյուսի վրա: Մասնավանդ մարզագետիկներին համար խիստ հաճախ էլին պատահում պատերազմներ թափառական խաշնարածների միջև:

Պատերազմը թեև վարում է ամբողջ ցեղը բոլոր տղամարդկանցով, հաճախ և բոլոր կանանցով, այնուամենայնիվ վորպես աշխատանքի հատուկ մի ճյուղ՝ նա պահանջում է հատուկ պատրաստություն և կազմակերպություն: Ամբողջ ցեղի կամ նրա մասերի մասնակցությունը պատերազմին բավական չէ. պատերազմի համար անհրաժեշտ է պատրաստվել, կազմակերպվել: Պատերազմը ամեն անգամ ուժեղ ցեղերը չեն սկսում: Հաճախ հարձակվող կողմերը հանդիսանում են վոչ թե ավելի ուժեղ, այլ ավելի թույլ և սոված ցեղերը: Հրապուրվելով զրացիների հարուստ հոտերով կամ այլ հարստություններով, մի ցեղ հարձակվում է մյուսի վրա: Պատերազմի յեկքը կախված է այն բանից, թե վոր աստիճան կազմակերպված և նախապատրաստված է այն:

Պատերազմն այդ պատճառով էլ հրապարակ հանց, սկզբում գուցե նույնիսկ ցեղի համար անհայտ, ավելի քան իսկ թաղ ու խելամիտ, ավելի անվախ ու փորձված ցեղի անդամին: Նա իր վրա վերցրեց աշխատանքի ամենաթվալը, ամենապատասխանատու մասը: Նա ազգակիցների հրամանատարն էր. նա հրամայում էր, նրանք հպատակվում էլին:

Այսպիսով պատերազմի և վորսորդության ասպարիզում հանդես յեկավ մի մարդ, վորն իր վրա վերցրեց կառավարությունն ու կազմակերպչական դերը: Այդ ղեկավարի առաջին իշխանությունը, վոր առաջ է յեկել վտանգի մոմենտին, շարունակում է պատերազմը կամ ընդհանուր վորսորդությունը վերջացնելուց հետո ևս կատարել մի քանի հասարակական ֆունկցիաներ, վորոնք են վորսի բաժանումը և բաշխումը:

Աշխատանքի ղեկավարի առանձնացում.—Ամեն մի համայնքում հենց սկզբից գույություն ունեն վորոշ բնդհանուր շահեր, վորոնց պահպանումը հանձնվում է հասարակությունն առանձին անդամների: Այդպիսիք են՝ վիճելի խնդիրների լուծումը, վերահսկողությունը ջրամբարների վրա, մի քանի կրոնական պարտականություններ և այլն: Այն անձինք, վորոնց վրա նման պարտականություններ են դրված, պարվում են վորոշ լիազորություններով: Այդ անձինք ներկայանում են իբրև պետական իշխանությունն սազմեր:

Ուշժերի արտադրութեան աստիճանական մեծացումը և ազգարնակութեան խտութեանը ստեղծում են մի գեղարուճակով շահերի ընդհանրութեան, ուրիշ գեղարուճակով շահերի ընդհանրութեան աստիճանի համայնքների միջև:

Անասնապահութեան և հողագործութեան ծագումը, տեխնիկայի զարգացումը ավելացնում են ցեղի արտադրականութեանը, իսկ զրա հետ միասին այլազան և դառնում նաև աշխատանքը:

Նախնական կոմունիստական ընտանիքը չգիտեր հավելյալ աշխատանք, բոլորը՝ ինչ վոր ձևով եր բերվում, իսկույն եկեթ ուտվում վերջանում եր: Բնական ե, վոր այն ժամանակ չեր կարող խոսք լինել հասարակական աշխատանքների ղեկավարի և միջերջները բաշխողի մասին: Յեղի բոլոր անդամները միասին ձևով ելին բերում անդղի միջերջները և ամենքը սպառում ելին միասին: Այժմ բանը բոլորովին այլ ե, յերբ կատարվում են հարյուրավոր դանազան աշխատանքներ, վորոնք նպատակահարմար բաշխվում են առանձին աշխատողների միջև, յերբ միջերջները չեն գործածվում միանգամից, այլ նախորոք բաշխվում են մի շարք ամիսների համար: Այստեղ առանց հատուկ պաշտոնատար անձերի յոլլա գնալ չի կարելի: Այդ պարտականութեանները ստանձնում են ցեղի ամենաավագագույնները, վորպես ուղիքի փորձված մարդիկ:

Պաշտոնատար անձանց հպատակվում են, վորովհետև առանց հպատակութեան կյանքի մեջ չի կարելի կիրառել մի վորեկ հազմակերպչական ծրագիր: Այդպիսով արտադրութեան բնագավառում առաջին անգամ ծագում ե իշխանութեանն ու հպատակութեանը:

Սկզբում՝ պաշտոնատար անձինք ամբողջովին առաջնորդվում են ցեղի ընդհանուր շահերով: Նրանք բաշխում են աշխատանքը, սահմանում են աշխատակցութեան և աշխատանքի բաժանման ձևերը. նրանք կազակերպում են վոչ միայն արտադրութեանը, այլ և բաշխումը: Ընդհանուր անտեսութեանը վարող պաշտոնատար անձը վորոշում ե՝ 1) հասարակական պարենների աջմասը, վոր կարելի յե անմիջապես գործածել, 2) աջն մասը, վոր անհրաժեշտ ե առաջիկա արտադրութեան համար—սերմերը, և 3) աջն մասը, վոր անհրաժեշտ ե պահել ապագայի համար—հասարակութեան պաշարը: Պաշտոնատար անձինք, չնայած նրանց աշխատանքի հատուկ բնույթին, վոր պահանջում ե աստիճանի խելամուտութեան, սկզբում համարյա վոչնչով չեն տարբերվում ցեղի

բոլոր մյուս անդամներից: Նրանք ղեկավարվում են գլխավորապես նախնիքների ավանդներով ու որինակներով: Նրանք համարյա թե ինքնուրույնութեան չեն ցուցահանում: Սակայն, այնուամենայնիվ, պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի անդամները ժամանակի ընթացքում փոքր առ փոքր սկսում են ամբողջ ցեղից առանձնանալ: Բայց խմբի միութեանը շարունակում ե իշխել ամբողջ ցեղի վրա, դրանց թվում նաև պաշտոնատար անձանց ընտանիքների վրա: Վորովհետև ցեղի մեջ գլխավոր պաշտոնատար անձն ընտրվում եր ամենաավագագույնը, նահապետը, սպա և նրա ընտանիքը բնականաբար սկսեց առանձնանալ և ստանալ ավելի մեծ նշանակութեան: Ամենից ավելի մոտ լինելով նահապետին, այդ ընտանիքի անդամներն ամենից հեշտ ել սովորում ելին հասարակական կազմակերպչական աշխատանքները: Այդ պատճառով ել նրանց միջավայրից ամենից հաճախ ընտրվում են պաշտոնատար անձինք, հասարակական դանազան աշխատանքներ կատարելու համար: Ժամանակի ընթացքում պաշտոնատար անձի դերն հաճախ հորից անցնում ե վորդիներին, իսկ այնուհետև դառնում ե մի ընտանիքի ժառանգութեան:

Վոչ ինքը պաշտոնատար անձը, վոչ նրա ընտանիքը վոչնչով չեն առանձնանում: Նրա իշխանութեանը չի կրում իր վրա շահագործման կամ ճնշման հետքեր: Ամբողջ ցեղի անդամները առաջվա նման հավասար են: Ամեն ինչ արտադրվում ե ցեղի բարորութեան համար և ամբողջովին բաշխվում ըստ պահանջների: Այդ ժամանակ վոչ ոյն անձինք, վորոնք կատարում են հասարակական պարտականութեաններ, վոչ ել նրա ընտանիքը չեն ստանում նրանից ավելի, ինչ ստանում են ցեղի մյուս անդամները:

Սակայն, համենայն դեպս պաշտոնատար անձանց ջոկվելը առաջին ետադն ե, վոր տանում ե գեղի մարդու շահագործման, տերերի և ստրուկների ծագման, մարդկանց՝ դասակարգերի բաժանման ուղին: Հասարակական աշխատանքների առաջին կատարողները վոչ շահագործողներ և վոչ ել իշխողներ են, այլ միայն հետագայում, ի հարկե վոչ թե միանգամից, այլ մի շարք դարեր անցնելուց հետո, հասարակական ծառայութեանը կատարողից դառնում են քաղաքական իշխող, շահագործող և թագավոր:

Յեղային համայնքների փոխնարարերութեանը.— Յեղի թվական մեծացումով, նրա մի մասը աստիճանաբար և սեղա-

փոխվում եր ուրիշ հարևան հողային տարածութիւն, ուր հիմ-
նովում եր իր անկախ տնտեսութեամբ: Հիմնականցիկ և նրանց
բաժանվող մասի կապերը լիովին չեյին կտրվում: Այնտեղ, ուր
մի ցեղի ուշժերն անբավարար եյին այս կամ այն աշխատանքը
կատարելու համար, ազգակցական համայնքները միանում եյին
միասին գործելու համար:

Այդպիսի համագործակցութեանն հանդիսանում եր վոր-
տորութիւնը և ընդհանուր պատերազմը:

Նման ձեռնարկների գլխին կանգնած են բոլոր մասնակից
ցեղերի ղեկավարները, վորոնք իրենց միջկց ընտրում են մի
ընդհանուր ղեկավար կամ առաջնորդ: Վորսի կամ պատերազմի
ավարտումով ղեկավարների և ցեղերի կատարելիք պարտականու-
թիւնները չեն վերջանում: Նրանք տևում են դեռ վորոշ ժամա-
նակ, այսինքն մինչև պատերազմի կամ վորտորութեան ավարտի
բաժանումը:

Ազգակցական ցեղերի միջև, բացի զինվորականից, տեղի
չեն ունենում փոխանակական փոխհարաբերութիւններ: Վորովհե-
տե ցեղի մեջ հովելյալ աշխատանքը համարյա թե սովորական
յերևույթ և դառնում, ուստի և առաջանում են արտադրութեան
ավելցուկներ: Յիվ վորովհետե տարբեր ցեղերի մոտ այդ ավել-
ցուկները դանազան են լինում, նայած այն բանին, թե տվյալ
ցեղի մեջ ինչն և գերազանցում—հողագործութիւնը թե անաս-
նապահութիւնը, ուստի ցեղերի միջև ծագում և նախնական փո-
խանակում: Այդ փոխանակումը հետևանք և հասարակական աշ-
խատանքի առաջին անկազմակերպ բաժանման, այսինքն հե-
տևանք վոչ թե ցեղի առանձին անդամների, այլ ցեղային խմբերի
միջև տեղի ունեցող աշխատանքի բաժանման:

Սահապետական ցեղի առանձնատնտեսուկ գծերը.— Առան-
ձին համայնքների կյանքում հասարակական աշխատանքի բաժա-
նումը և ցեղային խմբերի միջև փոխանակութիւնը առանձին դեր
չեն խաղում: Ամեն մի ցեղ անցյալի նման շարունակում և ան-
կախորեն արտադրել իր համար բոլոր անհրաժեշտը:

Յիվ այնուամենայնիվ նահապետական ցեղի կազմակերպու-
թիւնն արդեն զգալի կերպով տարբերվում և նախնական կոմ-
մունիստական ընտանիքի կազմակերպութիւնից. 1) նահապետա-
կան ցեղի մեջ պաշտոնատար անձանց աշխատանքն առանձնապա-
կատարողի աշխատանքից. 2) աշխատանքի բաժանումը և աշխա-

տակցութիւնը ցեղական խմբի մեջ ամրագնդված յերևույթ և և
կատարվում և վոչ միայն աղամարդու և կոշ միջև, այլև ցեղի բոլոր
անդամների միջև. 3) աշխատանքի բաժանումը հաճախակի յերե-
վույթ և դառնում վոչ միայն ցեղի անդամների միջև, այլև ազ-
գակցական խմբերի միջև, և 4) ցեղական խմբերի միջև ծագում և
փոխանակում:

Փոխանակման ծագումը.— Նախնական փոխանակումը կա-
տարվում և պատահաբար յերկու դրացի ազգակցա-
կան խմբեր կամ նույնիսկ նրանց յերկու անդամներ փոխանա-
կում են իրենց պարեմները: Այդ ձևի փոխանակման մեջ կազմա-
կերպման հետք անգամ չկա: Փոխանակման համար անհրաժեշտ և
յերկու պայման—նախ այն, վոր թե մեկ և թե մյուս ցեղերը
պետք և ունենան ավելցուկ և յերկրորդ՝ այդ ավելցուկը, վոր ու-
նի մի ցեղ, անհրաժեշտ պիտի լինի մյուս ցեղի համար:

Սովորաբար փոխանակումը կատարվում և անասնապահ և
հողագործ խմբերի միջև: Փոխանակման այդ ձևը ամենապարզն և,
վոր կարելի չե տեսնել նույնիսկ նախնական կոմունիստական
ընտանիքի մեջ: Այդ փոխանակման ժամանակ գոյութիւն չունի
շուկա, ուր բերվում և փոխանակման ապրանքը: Փոխանակութեան
այդ հասարակ ձևը, վոր պատահական ընույթ և կրում և հիմնված
և համարյա թե բացառապես համայնքների միջերկրները իրար հե-
տ փոխանակողների ցեղային փոխհարաբերութիւնների վրա, ար-
տադրութեան զարգացման ընթացքում փոխում և իր ընույթը,
անցնելով փոխանակութեան ընդարձակածավալ ձևի:

Մարդկային հասարակութեան զարգացումն ընթացավ անհա-
վատար և վոչ միատեսակ արագութեամբ: Այն ժամանակ, յերբ մի
քանի ցեղեր մի շարք դարերի ընթացքում մնացին բարբարոսական
ամենավայրենի աստիճանի վրա, ուրիշները համեմատաբար արագ
կերպով առաջ շարժվեցին կուլտուրական ճանապարհով: Այսպես,
սրինակ, առաջագիւտ ցեղերը, արիացիք և սեմիտները, պարապում
եյին գլխավորապես անասուններ ընտելացնելով և հոտերին նա-
յելով: Այդ խաշնարած ցեղերը, մնացած բազմաթիւ ցեղերից բա-
ժանվելով, առաջ բերին հասարակական աշխատանքի առաջին
խոշոր բաժանումը:

Սաշնարած ցեղերը ձեռք եյին բերում վոչ միայն շատ անդի-
միկերքներ, այլև այդ միկերքները խիտտ բազմատեսակ եյին: Նրանք
ուներին կաթ և միս: Բացի դրանից, անասնատրտնութիւնը նրանց

տալիս եր կաշի, բուրդ, մազ, վորով ավելացավ և բազմատեսակ գարձավ գանազան գործվածքների պատրաստումը:

Հում նյութերի ստատուիթյունն ստաջ բերնց տեխնիկայի զարգացում, և անշուշտ այդ ժամանակ ևր, վոր մարզիկ հնարեցին շուրհակային դազվանը, սկսեցին հալել և մշակել գանազան մետաղներ—պղինձ և անագ, վորոնց միացումից ստացվում և բրոնզ: Նախամարդը բրոնզից սկսում և պատրաստել գործիքներ և զենք: Այդ ժամանակներում դեռ չգիտեցին պատրաստել յերկաթ: Այդ շրջանին և վերաբերում վոսկու և արծաթի գործածուիթյունը գլխավորապես զարգարանքի համար:

Յեղի սալքած տեղի բնական վոչ միատեսակ պայմանները և նրա ձևք բերած հատուկ տեխնիկական փորձառուիթյունը մոցընում են վորոչ այլազանուիթյունն ստանձին ցեղերի արտադրուիթյան մեջ: Արտադրուիթյան այդ այլազանուիթյունն ստաջ և քաշում ուժեղացած փոխանակումն ցեղերի միջև: Այժմ արդեն մթերքների փոխանակուիթյուն և կատարվում վոչ միայն ազգակցական, սպա նաև միմյանց ոտար համայնքների միջև:

Վորովհետև փոխանակումը կատարվում և արդեն վոչ թե միայն յերկու խմբերի, այլև մի շարք խմբերի միջև, ուստի փոխվեց նաև փոխանակման կազմակերպուիթյունը: Այն ժամանակ, յերբ փոխանակումը կրում և պարզ, հասարակ ձև, շուկա գոյուիթյուն չունի, իսկ յերբ փոխանակումն ընդարձակ ծավալ և ստանում, սահմանվում է մի հատուկ տեղ, վոր շուկա յե կոչվում, ուր բերվում են փոխանակման համար յեղած բոլոր մթերքները: Փոխանակման հասարակ ձևի ժամանակ փոխանակվում եր միայն յերկու մթերք, որինակ անասունն անմիջապես փոխանակվում եր հացի կամ արտադրուիթյան վորեև այլ գործիքի հետ, իսկ փոխանակման ընդարձակված պահուն գործը բարդանում է:

Շուկայում յերևում են որդեն վոչ թե յերկու, այլ մի քանի ապրանքներ, այն է՝ արտադրուիթյան գանազան գործիքներ, հացահատիկներ և անասուն: Յեկ այդ պատճառով հաճախ ստացվում է այսպիսի մի դրուիթյուն. հացահատիկի տիրոջը յենթադրենք անհրաժեշտ և կացին կամ նետ, բայց արտադրուիթյան գործիքների տիրոջը հացահատիկ պետք չե, նա կարիք ունի անասունի: Իսկ անասունի սեփականատիրոջն արտադրուիթյան գործիքներ պետք չեն, նրան անհրաժեշտ և հաց: Ի՞նչ պետք և անել:

Այդ ժամանակ հանգես և գալիս փոխանակման փողային ձևը: Վորովհետև անասունն անհրաժեշտ է համարյա բոլորին— ա-

նասունը դառնում է փոխանակման միջոց, այսինքն այն առանձին ապրանքը, վորի հետ հաճուիթյամբ փոխանակում են ուրիշ ապրանքներ: Այն ապրանքը, վորի հետ կարելի յե փոխանակել բոլոր ապրանքները, կոչվում է փող:

Առաջին շրջանում, հատկապես թափառաշրջիկ համայնքներում, փողն հանդիսանում է անասունը: Մետաղի կամ մետաղային գործիքների յերեւալուց հետո մետաղի փողերը ասպարեզից հեռացնում են անասուն-փողը: Թեև անասունը անհրաժեշտ է բոլորին, սակայն ավելի ևս անհրաժեշտ են մետաղային գործիքները: Այն ժամանակ, յերբ անասունը դժվար բաժանվող և դժվար փոխադրվող փող է հանդիսանում, մետաղները կարելի յե դյուրուիթյամբ տեղափոխել, իսկ վոր ամենագլխավորն է, նրանք բաժանվում են ամենափոքր մասերի, մինչդեռ վոչ մի դիպքում չեա կարող մասերի բաժանել վոչխարը, կովը կամ ձին:

Փողի ձևով հրապարակ յեկավ նախ պղինձը, անագը կամ նրա խառնուրդը—բրոնզը, իսկ այնուհետև ալմիվ մետաղները—վոսկին ու արծաթը: Մետաղ-փողերը չեն ձուլվում և չունեն վոչ մի ձև: Հաշվի ժամանակ մետաղի կտորները կշռում են: Այն ժամանակ, յերբ անագն ու պղինձը գործ են տծում ցեղի անգամները գլխավորապես արտադրուիթյան գործիքների համար, ալմիվ մետաղները գնում են բացառապես զարգարանքի համար:

Կուլտուրական ստոր աստիճանի վրա կանգնած նախամարդը խիստ սիրում է վառ գույներն ու փայլուն զարգարանքը: Յեկ մարդկային խմբակի կամ նրա առանձին անձի կուլտուրական աստիճանը վորչափ ցածր է, նույնչափ նա սիրում է փայլուն զարգարանք: Նախամարդը վառներկերով նկարում է իր մարմինը, փայլուն մետաղների կտորներն անց է կացնում շրթունքներին, քթին անցնում և մատանի: Ժամանակակից կիսա-կուլտուրական կիմն ևս ներկում է իր այտերն ու շրթունքները, սևացնում աչքերը, ախանջին անցնում վոսկու և արծաթի գինտեր, վրայից կախում է ամեն տեսակ հնչուն մետաղներ և իրեն այդ պահուն յերեւակայում է փայլենի նախամարդուց շատ ստաջ անցած:

Յեղային-նահապետական շրջանի հոգեբանուիթյունը.— Տեխնիկայի զարգացման, անդի մթերքների քանակի աճումի հետ բնուիթյան իշխանուիթյունը մարդու վրա հետզհետե թուլանում է: Թուլանում է նաև ցեղի իշխանուիթյունը նրա առանձին անդամների վրա: Սակայն նրանց փոխարինելու գալիս և նոր իշ-

խանութիւն, — հասարակական կարեւոր պարտականութիւն կատարող նահապետի իշխանութիւնը: Յեղական խմբի ըստը անդամները հպատակվում են նրան:

Աշխատանքը կազմակերպողի և միեւրոյնը բաշխողի իշխանութեան ծագումով կորչում է նաև բաշխման հավասարութիւնը: Թեև այժմ ես միեւրոյնը բաշխվում են ցեղի անդամների միջև համաձայն նրանց պահանջներին, և այն անձինք, վորսը հասարակական պարտականութիւն են կատարում, իրենց ընտանիքների հետ ավելի միեւրոյնը չեն ստանում, քան ցեղի ամեն մի ատանձին անդամ, բայց նրանց ու նրանց ընտանիքներին այնուամենայնիվ տրվում են լավ կտորներ: Բայց դրանում չի կայանում անհավասարութիւնը: Անհավասարութիւնը կայանում է նրանում, վոր բոլոր միեւրոյնների տերը սկսում է դառնալ աշխատանք բաշխողը և միեւրոյնների ծախսողը:

Առետրական շուկայի ծագումով, ցեղի ավագը դուրս բերելով միեւրոյնը փոխանակելու, այդ միեւրոյնը նա ատանում է վոչ թե իրը հասարակական աշխատանքի արդյունք, այլ իրը իր սեփական միեւրոյնը: Յե՛վ փոխանակման պրոցեսում մի ցեղի ավագը ստում է մյուս ցեղի ավագին. յես ուզում եմ իմ միեւրոյնը փոխանակել քո միեւրոյնների հետ:

Այն ժամանակից, յերբ նահապետ-ավագի իշխանութիւնը ժառանգական է դառնում, ավագը ջոկվում է ցեղի անդամների ընդհանուր մասսայից: Նրա մեջ առաջանում են անձնական շահեր, վորոնց նա դատում է ցեղի շահերից բարձր: Նահապետը սովորելով հասարակական միեւրոյնի վրա նայել վորպես իր միեւրոյնի վրա, աստիճանաբար դառնում է վասնավոր սեփականատեր:

Աշխատանքի բաժանումով և աշխատակցութեան ծագումով, ցեղի ատանձին անդամների և ցեղային խմբերի միջև կապն ամբողջովում է: Այժմ ցեղի ատանձին անդամները և ատանձին խմբերը, շնորհիվ աշխատանքի բաժանման, ստանց իրենց ցեղակիցների չեն կարող գոյութիւն ունենալ:

Նահապետ-ավագի միանձնական իշխանութեան ծագումով, այնուամենայնիվ անդամների փոխադարձ հարաբերութիւնը առաջվա նման մնում է յեղբայրական: Նահապետն իրեն վոչ տեր է դրում և վոչ էլ սեփականատեր: Հասարակութեան անդամները չեն զգում իրենց վոչ սարուկ և վոչ էլ շահագործվողներ: Այդ բացատրվում է նրանով, վոր վոչ ավագը, վոչ էլ ընդհանրապես ցեղի անդամները չունեն վոչ մի զրգապատճառ հին սովորույթը

խախտելու: Չնայած ցեղի անասական վիճակի բարելավման, անդամները նահապետի հետ բազմազարդան հին սովորույթին պինդ փարված են մնում առաջվա նման:

Քննական Փետիշիզմ.— Կախումը բնութեանից թուլանալու հետ մարդիկ այլևս չեն սարսափում բնութեան ուշտերի առաջ: Իսկ յերբ վերանում է սարսափը, դարձանում է հետաքրքրութիւնը: Մարդը ջանում է բացատրութիւն տալ բնութեան մի քանի հարցերին: Առաջին— նախնական կոմմունիստական ընտանիքի շրջանում մարդն արտաքին աշխարհում չեր զանազանում կենդանին ու մեռածը: Ամբողջ շրջապատը նրան թվում է այնպես կենդանի, ինչպես ինքն է: Բարձրից ընկած քարը վիրավորում եր նրան, դետը դուրս եր գալիս ակերից, քամին խշխշացնում եր ծառերի տերևները, լուսինը յերևում եր և անհետանում, արևը տաքացնում եր կամ այրում— նշանակում է այս բոլոր առարկաներն ապրում և գործում են մարդու պես և դրանք բոլորը չար և բարի ետկներ են՝ համապատասխան իրենց վարմունքին:

Նահապետական ցեղի միջից ատանձնացնելով նահապետ-ավագի դերը, ցեղը մի տեսակ բաժանված է յերկու մասի— մեկը՝ վերին, զեկավարող և հրամայող, յերկրորդը՝ գործադրող, յենթաթարկվող: Հասարակական կցանքի յերկուութիւնը իր հերթին մարդկանց դիտակցութեան մեջ առաջ և բաշում հասկացողութիւն մարդկային բնութեան և առհասարակ բնութեան մասին:

Ինչո՞ւ ցեղակին հաջորդում է դիշերը: Մ՞ը է գնում արևը: Ինչո՞ւ ամպերը ծածկում են արեգակը: Ի՞նչ են ամպերը: Ինչից է առաջանում հիվանդութիւնը: Աջո՞ղ է, թե անաջող վորսը: Ի՞նչ բան են մահը, քունը, յերազը:

Մարդու արթնացող միտքն սկսում է վորոնեկ բոլոր այս հարցերի պատասխանը: Չկարողանալով բացատրել յերևույթների մեծ մասը, մարդը նրանց մեջ մտցնում է մի ուշտ, վորին անվանում է հոգի և գործել տալիս այդ հոգուն:

Մարդը ցերեկով գործում, շարժվում, յայլում է: Գիշերը նա մեռնում է, — քունը նման է մահվան: Առավոտյան նորից բուկըսում է շարժվել: Ակներև է, վոր մարդու մեջ ապրում է ինչ-վոր մի ուշտ, վոր որվա ընթացքում նրա անդամները դնում է շարժման մեջ: Մարդը ցերեկով ուշապնաց ընկավ, — նրանից ժամանակախորապես հեռացավ գործող ուշտը: Մարդը մեռավ, — այն

ույժը, վոր մարդուն ստիպում եր շարժվել, գործել, խոսել, հեռացավ յերկար ժամանակով: Բայց նա կարող ե վերադառնալ: Սորհրդավոր ույժը—հոգին—հեռացավ մեռելից, բայց նա հեռացավ տնակից, նա աներևույթ կերպով գտնվում ե այստեղ, կենդանի մարդկանց մեջ: Նայած հանդամանքներին, նա կարող ե գործել չարիք ե բարիք:

Մեռածների հոգիների նկատմամբ ունեցած հավատը հարկազրեց յերկրագեղու նրանց ե խնդրելու նրանց վոգորմածությունը, վորպեսզի նրանք չարիք չգործեն: Մեռածներին ցույց են տրվում ամեն տեսակ մեծարանքներ, վորպեսզի նրանց հոգիները չզայրանան: Մեռածին հազցնում են բոլոր ամենական շորերը, նրա հետ դնում են նրա գործիքները կամ գենքերը, նույնիսկ կերակուր, վորպեսզի նա ամեն բույս, յերբ կամենա նրա հոգին, վերադառնա դարձյալ կենդանիներէ մեջ:

Այստեղից առաջացավ հարության ե հանդերձյալ կյանքի հավատը:

Բայց նախամարդը հոգի յե տալիս, վոչ միայն շնչավոր, այլ ե անշունչ առարկաներին: Բարը վերեկից ընկալ ե վիրավորեց մարդուն: Մարդը սուր քարով վոտքն արյունոտեց: Գազանի վրա շեշտակի նետոված բարը վոտանցից ազատեց մարդուն կամ նրա տնային անասունին: Նշանակում ե քարի մեջ ես հոգի կա, վորը չարիք կամ բարիք ե գործում: Պետք ե շահել քարի հաճությունը ե նա չի կարող չարիք գործել: Նրան աղերասանք են ուղղում, նրան տալիս են կերակրի մի մասը—գոհ են մատուցում նրան:

Արևը կյանքի աղբյուրն ե, նրանից ե գալիս տարությունը, լույսը, նա յե բացնում կանաչները: Նշանակում ե արեգակի մեջ կա բարության հոգի: Գիշերն ու ձմեռը չար ույժեր են: Տիրում, անասուններում ե ջրերում ապրում են չար ե բարի ույժեր—ալքեր, քաջքեր, դեեր, հավերժահարսներ:

Նախամարդն իրեն անհասկանալի բոլոր յերևույթները կենդանի ե մեռած բնության մեջ բացատրում ե տվյալ առարկայի մեջ գոյություն ունեցող չար կամ բարի հոգով: Այդ հոգին նա վորոնում ե քարի, գազանի, բույսի ե մարդու, բոցի ե ջրի մեջ: Այդպես ե ծագում իրերի հոգին—անսխիզմը:

Բոլոր առարկաների ե յերևույթների այդ հոգևորումը կատեցնում եր մարդու հոգեկան դարգացումը: Յերևույթների հոգին թույլ չեր տալիս իմանալ յերևույթների պատճառները: Այդպես ե կամենում նրա հոգին—հեռեհարար այստեղ խոսք անդամ չի

կարող լինել պատճառներն իմանալու մասին: Այժմ մենք ասում ենք՝ աստված այդպես ե կամենում ե հնազանդարեն տանում ենք մարդկանց ձեռքով մեղ վրա դրված լուծը: Բնական Ֆեաիշիզմը, այսինքն հոգևորումը, առարկաների ե բնության յերևույթների մեջ հոգի մոցնելը այնպիսի մի հայացք եր բնության վրա, ըստ վորի իրերի հարաբերությունները ներկայանում էյին վորպես մարդկանց հարաբերություններ:

Իրերի հոգևորումը, նրանց չարիք ե բարիք գործելու հատկություն տալը առաջ ե բերում հոգևորած իրերին սիրաշահելու ցանկություն: Նրանց դիմում են աղոթքով, խնդրում են, վոր վոգորմած լինեն: Նրանց սիրաշահում են նվիրաբերություններ անելով: Թե աղոթքները, թե նվիրաբերությունները կատարվում են հանդիսավոր պարագաներում, ընդամին ամեն մի մահկանացվի իրավունք չի արվում կատարելու այդ նվիրաբերումները ե դեպքին համապատասխան աղոթքը: Այդ կատարում են ցեղի մեջ ամենից ավելի հարգի կամ հատուկ ընդունակությունների տեր մարդիկ:

Հասկանալի յե, վոր վոչ քարը, վոչ արևը, վոչ լուսինը, վոչ ամպերն ու քամին նրանց նվիրաբերումներից չեն ոգտվում: Այդ ընծաները վայելում են շաման կամ մոգի կոչված նույն այն պաշտոնատար անձինք, վորնք հոգևորած առարկայի առաջ կատարում են նվիրաբերության արարողությունը: Վորչափ ուժեղ ե հոգևորած առարկան, այսինքն վորչափ բարի կամ չար ե, նույնչափ ավելի շատ են ընծաներ մատուցում նրան:

Ամեն մի շաման կամ մոգ ընականարար շահագրգռված ե նրանով, վոր այն առարկան, այն եակը, վորի մոտ նա պաշտոնավարում ե, նկատվի վորպես ամենակարեորը, վորպես ամենահոգորը, այն ժամանակ շամանի տեղն ավելի արդյունավետ կըլինի: Աղոթքին ե նվիրաբերություններին ավելի մեծ հանդիսավորություն տալու համար կրոնական արարողությունների կատարողները զարդարում են իրենց կուսքը, հատուկ շենք, տաճար են կառուցում նրա համար:

Այդպես են ծագում տաճարներն ու հոգևորականությունը:

Գ Լ Ո Ւ Խ III.

Կ Ի Ն Ն Ա Ն Յ Յ Ա Լ Ո Ւ Մ

Կնոջ և սարուկի դրութեան մեջ նմանութեաններ շատ կան: Կինն ավելի առաջ սարկացալ, քան գոյութեան ունեւ սարկութեանը: Այդ բացատրվում է գուտ անասական կախումով, վորի մեջ արմատացած է նաև սոցիալական կախումը:

Յեղի տնտեսական պայմանների, արտադրութեան և բաշխման յեղանակների փոփոխումից և կախված նաև սեռերի հարաբերութեանների փոփոխումը:

Նախնական ընտանիքի ձևերի հարցի նկատմամբ Աստվածաշունչը նույնպիսի ուղղակի և վճռական պատասխան է տալիս, ինչ վոր և աշխարհի ստեղծագործութեան մասին: Նա մարդկութեան զարգացման բոլոր ետապների վրա նայում և վորպես կատարելագործված և լիովին վերջացած ձևերի վրա:

Աստվածաշունչն ասում է.— Աստված ստեղծեց Ադամին և Նրան ընկերուհի տալով Յեվային: Յեվային Աստված ստեղծեց Ադամի կողից նրա համար, վորպես զի նա, վորպես նրա մի մասը, միանար և հպատակվեր նրան: Այնուհետև Աստված նրան հրամայեց՝ «աճեցեք և բազմացեք: Յեվ ծնվեցին Ադամի ու Յեվայի տղաները:

Իսկ Ադամի և Յեվայի տղաները վճրտեղից կին վերցրին իրենց համար: Աստվածաշունչը այս հարցին տալիս է խիստ խառնաշփոթ պատասխան.— մի մեկնութեամբ՝ Ադամն ու Յեվան ունեցին վոչ միայն տղաներ, այլև աղջիկներ: Այսպեղից էլ պիտի հանել յեղբակացութեանը: Անշուշտ Ադամի և Յեվայի տղաներն ամուսնացել էին իրենց բույրերի հետ: Սակայն յեկեղեցին այդպիսի անաստվածութուն թույլ տալ չի կարող: Հրապարակ է գալիս յերկրորդ մեկնութեանը.— Ադամի և Յեվայի տղաներն իրենց համար կին առան հարևան ցեղերից: Սակայն հարևան ցեղերը վճրտեղից ստացվեցին: Չէ՞ վոր նույն Աստվածաշունչի ասելով

աստված ստեղծելով աշխարհը, ստեղծեց միայն Ադամին ու Յեվային և ուրիշ վոչ մի մարդու:

Անշուշտ Աստվածաշունչի ասածն ընտանիքի ձևերի մասին, վորոնք հաստատված են մեր կապիտալիստական դարի յեկեղեցու կողմից, նույնչափ քիչ է համապատասխանում իրականութեան, վորչափ և այն, թե աստված աշխարհն ստեղծեց վեց որում: Մարդկային հասարակութեան զարգացման պատմութեանը, դարերի ընթացքում ուսումնասիրող հեղինակավոր գիտնականների տվյալների համաձայն, ամուսնութեան և ընտանիքի ձևերը տվյալ հասարակութեան տնտեսական ազդեցութեան տակ փոխվում էին նույնպես, ինչպես փոխվում էր և ինքը հասարակութեանը, նախելով թե վոր աստիճան նա ապահովված էր սննդի միջոցներով:

Նախնական ընտանիքի ձևվերը.— Այն ժամանակ, յերբ մարդը զեռ ապրում էր բարանձափների մեջ, ծառերի խոռոչներում կամ ծառերի վրա, կապիկների նման մարդիկ ևս ապրում էին զույգերով: Սակայն այն ժամանակվա զույգը մեր ժամանակվա զույգի նման չէր: Այդ շրջանում իշխում է սեռային հարաբերութեանների լիակատար ազատութեան, և ամեն մի կին կարող է պատկանել ամեն մի տղամարդու: Այդ շրջանում կինն ու տղամարդը միանում են, կապիկների և ուրիշ կենդանիների նման, յերեխաներ ծնելու միայն մի ժամանակամիջոցում: Դրանից հետո ամեն մի տղամարդ և կին ազատորեն բաժանվում են, մինչև նոր միութեանը, դարձյալ մի յերեխա ծնելու ժամանակամիջոցով:

Հավանական է, վոր յերբ ընդհանուր նախահայրերից ծագում առած մի քանի մարդիկ միայն յերևան յեկան, նրանք այնպես էլ, ինչպես մի ընտանիք, միասին մնացին: Սեռական հարաբերութեանների լիակատար ազատութեանը վորոշ ընտանիքի սահմանների մեջ, յերբ ամեն մի կին պատկանում էր ամեն մի տղամարդու, տալով կոմունիստական ընտանիքի առաջին ձևի սկզբնավորութեանը: Այդ ընտանիքներում վոչ միայն քույրերն ու յեղբայրները, այսպես նաև հայրերն իրենց աղջիկների, մայրերն իրենց տղաների հետ միավորվում էին մի վորոշ շրջանում յերեխաներ ծնելու համար: Դրա մասին վկայում է նաև բերլիական ասացվածքը Դովտի և նրա աղջիկների մասին, վորոնք յերեխաներ ծնեցին իրենց հորից:

Արյունակցական ընտանիք. — Այստեղ արդեն ամուսնական խմբակները բաժանվում են ըստ սերնդի: Այդպիսի ընտանիքի սահմաններում բոլոր պապերն ու տատերն իրար ամուսիններ և կանայք են, բոլոր հայրերն ու մայրերը՝ միմյանց ամուսիններ ու կանայք, բոլոր տղաներն ու աղջիկները՝ իրար ամուսիններ ու կանայք, այսինքն ամբողջ սերնդի բոլոր քույրերն ու յեղբայրներն իրար ամուսիններ են: Արյունակցական ընտանիքում սեռական կամ, ինչպես մեզանում ասում են, ամուսնական կապեր չեն կարող ունենալ միայն ծնողներն իրենց զավակների հետ:

Այդ տիպի ընտանիքը կազմված է սերնդի առաջին զույգից, վորոնք իրար քույրեր և յեղբայրներ են, և հետագա ժառանգներից, վորոնց ամեն մի սերունդը միմյանց յեղբայր ու քույրեր են, ուստի և ամուսին ու կին: Այդպիսի ընտանիքի միությունը լուծվում է դյուրությամբ:

Ամենից հավանականն այն է, վոր բերլիական Ադամի և Յեվայի ընտանիքը նույնպես արյունակցական ընտանիք էր, ուր Ադամի և Յեվայի բոլոր զավակները — նրանց տղաներն ու աղջիկներն իրար ամուսին ու կանայք էյին: Աբրահամը Սառայի մասին (գլուխ 20) ասում է. «Այո, նա իմ իսկական քույրը, իմ հոր աղջիկն է, բայց վոչ իմ մոր աղջիկը, և դարձավ իմ կինը»:

Արյունակցական ընտանիքը մեռավ, իր տեղը զիջելով պոլիտալուա-ընտանիքին (պոլիտալուա — ընկեր, մտերիմ):

Այն ժամանակ, յերբ արյունակցական ընտանիքը թույլ չի տալիս ծնողների և նրանց զավակների սեռական կապը, պոլիտալուա-ընտանիքը բացասում է յեղբայրների և քույրերի կենակցությունը: Այդպիսով կանայք իրենց համար ամուսին են վերցնում ուրիշ ընտանիքից, կամ ուրիշ ցեղից:

Ամուսնացող զույգերը ծնողներին և մի մորից ծնված քույրերին ու յեղբայրներին առանձնացնելով վորոշ նպատակի էյին հետապնդում: Մի կամ մի քանի սերնդի քույրերը կազմում էյին մի անտեսություն, նրանց յեղբայրները — ուրիշ անտեսություն: Այդ հնարավորություն էր տալիս ընտանիքը նորմայից բարձր չձանրարեննելու: Ամեն մի անտեսություն ստանում էր հողային տարածություն, վորի վրա տեղավորվում էր նա և դրանով թուլացնում գերբնակչության վտանգը:

Հետևաբար ընտանիքի ձևերի փոփոխումը գլխավորապես զեկավարվում էր անտեսական որհնքով: Սակայն, այդ գուտ տընտեսական պահանջը, կրճատել ընտանիքի անդամների թիվը, ի-

վերջո հանդավ այն հասկացողության, թե մի մորից ծնված զավակների միջև անվայել է սեռական հարաբերությունը: Սակայն, վայելչության և անվայելչության հասկացողությունը խիստ առաձգական է: Այն, ինչ վոր վորոշ զարաշրջանի անտեսական փոխհարաբերության ժամանակ համարվում է վայելուչ, անտեսական ուրիշ դրության ժամանակ համարվում է վերին աստիճանի անվայելուչ: Յեկեղեցին բանադրում է այն մարդկանց, վորոնք արյունախառնությամբ իրենց արատավորել են, բժշկականությունը նախազգուշացնում է, թե սերունդը հիվանդոտ կըլինի: Սակայն, յեթե չլիներ մի վորոշ զարաշրջանում մի արգանցից ծնված քույրերի և յեղբայրների սեռական միությունը, գոյություն ունենալ չէր կարող նաև ինքը մարդկային հասարակությունը:

Պոլիտալուա-ընտանիքի ազգակցական հարաբերությունները այսպես են: — Իմ մորաքրոջ յերեխաներին մայրս անվանում է իր զավակները, հորաքրոջս յերեխաներին հայրս անվանում է իր յերեխաները: Նրանք բոլորն իմ քույրերս ու յեղբայրներս են:

Քեռուս յերեխաներին մայրս անվանում է իր յեղբորվորդիք կամ աղջիկները: Իմ հորեղբոր յերեխաներին հայրս անվանում է իր յեղբորվորդիք: Նրանք բոլորը միասին իմ հորեղբոր տղաները կամ աղջիկներն են: Մորաքրոջս ամուսինը միաժամանակ իմ մոր ամուսինն է: Հորեղբայրներին կանայք միաժամանակ իմ հոր կանայքն են: Սակայն, մորեղբայրներս և հորաքույրերս գուրս են ձգվում ընտանիկան համայնքից. նրանք ուրիշ ցեղի անդամներ են:

Բայց վորովհետև յեղբայրներն ու քույրերը չեն կարող ամուսիններ և կանայք լինել, ուստի ամուսինն ու կինն այլևս մի ցեղային խմբակի չեն պատկանում, այլ նրանք զանազան նախածնողներ ունեն: Յեղական խմբակից այդպիսի առանձնացումը տեղի յե ունենում աստիճանաբար — սկզբում բացառության ձևով, իսկ այնուհետև վորպես կրոնով սրբազործված որենք: Բայց այդ ընտանիքի կապը քանդվում է դյուրությամբ:

Սեռական հարաբերությունների արգելումով, նախ մերձավոր և ապա հեռավոր ազգականների միջև խմբական միությունը վերածվեց զույգավոր ընտանիքի:

Չույգավոր ընտանիքը հիմնվում է մի զույգի յերկարատև կենակցության վրա: Այդպիսի զույգեր գոյություն ունեն նաև պոլիտալուա-ընտանիքի ժամանակ, յերբ ամուսինը բազմաթիվ

կանանց միջից ընտրում ե մի գլխավոր կնոջ: Վերջինս համար այդ ամուսինը մյուս մնացածների մեջ պատահարար նույնպես առաջինն էր: Այս միությունն ևս քանդվում ե դուրսությամբ:

Արյունակցական ազգականների կենսակցության հետագա արգելումը կանգ չի առնում նաև մի արգանդից ծնված քույրերի ե յեղբայրների ամուսնական միությունը արգելելու վրա: Նա շատ առաջ ե դնում և տարածվում և ամենահեռավոր ազգականների վրա: Այդ արգելումը անհնար դարձրեց խմբական ամուսնությունն ու նրան փոխարինեց պատահական ընտանիքով: Ընտանիքի այս ձևի ժամանակ տղամարդն ապրում ե մի կնոջ հետ, բայց նա իրավունք ունի բազմակնություն: Սակայն տնտեսական պատճառներով նա քիչ ե ոգտվում այդ իրավունքից: Բայց դրա համար ել պատահական ընտանիքի կնոջից պահանջվում ե հավատարմություն և նա իր դավաճանություն համար խիստ կերպով պատժվում ե, սակայն, չնայած դրան, միությունը քանդվում ե հեշտություն:

Անցումը պունալուա-ընտանիքից դեպի պատահական ընտանիքն այնուամենայնիվ առաջ ե յեկել զուտ անտեսական նկատառումներով: Ցեղի արտակարգ աճումը վատացնում ե ամբողջ ցեղի ընդհանուր անտեսական դրությունը: Անհրաժեշտ ե սահմանափակել ծննդաբերությունը կամ ցեղը բաժանել առանձին ինքնուրույն խմբերի: Դրան համարում են խմբական ամուսնություն արգելումով:

Անհետաքրքրական չե մատնանշել ամուսնական կապերի մեջ խորին հնությունից մնացած ավանդները, վորոնք հասել են մինչև մեր որերը, վորպես կրոնով սրբազործված որենքներ:

Ազգականների մեջ ամուսնություն կնքելու արգելումը պահպանվում ե մինչև մեր որերը, սակայն նրա ձևերը տարբեր են զանազան ազգությունների մեջ: Բրիտանական յեկեղեցին արգելում ե սլավոններին և կաթոլիկներին ամուսնական միություն կնքել ամենահեռու ազգականների միջև: Լութերական յեկեղեցին, վոր նույնպես քրիստոնեական ե, ամուսնությունը թույլատրում ե նույնիսկ հորեղբոր աղջիկների կամ քույրերի միջև: Հրեական կրոնն ևս թույլ ե տալիս ամուսնություն կնքել քեռորդիների (աղա և աղջիկ) միջև, բայց նա թույլ ե տալիս ամուսնությունը նույնպես մի կողմից քեռու և մյուս կողմից քեռու, այսինքն մորեղբոր (բայց վոչ մորաքրոջ) աղջկա միջև: Հետևաբար այստեղ

մնացել են դեռ պունալուա-ընտանեկան հարաբերություններ, յերբ իմ մորեղբոր դավակներն իմ քեռորդիներն են:

Անհետաքրքրական չե ընդգծել, վոր վերոհիշյալ բոլոր ձևի ընտանիքների մեջ միությունը քանդել չափազանց հեշտ ե: Զույգերը յերկուստեք ազատ համաձայնությունով միանում և բաժանվում են: Իսկ այդ պատճառով ել վոջնչով հիմնավորված չե յեկեղեցու պնդումը, թե՛ չի կարելի քանդել ամուսնությունը, այլ միայն այն ժամանակ, յերբ վրա յե համարում մահը: Ճիշտ ե, այժմ ևս, յերբ ամուսնությունն հայտարարվում ե անլուծելի, նրա կապերը պարտադիր են գլխավորապես չքավորություն—բանվորների և գյուղացիների համար:

Չնայած ամուսնական ուխտի խախտման համար սահմանված պատժի խստություն, հարուստներին միշտ հնարավորություն ե տրվել լուծելու ամուսնությունը: Դրա համար պետք եր բավականաչափ կաշառք տալ սլավոն յեկեղեցու պետին կամ կաթոլիկ յեկեղեցու պապին, և այն ժամանակ բոլորը, ինչ վոր անթույլատրելի յե, թույլատրելի կը դառնար:

Ի՞նչ եր ամուսնական հարաբերությունների յեվ ընտանիքի ձևերի փոփոխման պատճառը.—Տնտեսությունը, անտեսությունը և դարձյալ անտեսությունը: Զուտ անտեսական պատճառներն հասցրին այն բանին, վոր նախնական զույգի կենսակցությունն իր տեղը զիջեց արյունակցական ընտանիքին: Այդ կացությունն իր տեղը զիջեց արյունակցական ընտանիքին: Այդ կացությունը եր նրա համար, վոր մարդկանց անհրաժեշտ եր միանալ, վորպես զի միասին ուտելիք ձեռք բերելին և զազաններից պաշտպանվելին:

Արյունակցական ընտանիքն իր տեղը զիջում ե պունալուա-ընտանիքին խիստ մեծացած ընտանիքի անդամների թիվը կրճատելու անհրաժեշտությունով: Ընտանիքի բաժանված մասնատանում ե իր հողային տարածությունը, հիմնում իր անտեսուստանում ե յեր հողային տարածությունը, հիմնում իր անտեսությունը և այդպիսով ցեղը պաշտպանում գերբնակչության հետ կապված բոլոր դժբախտություններից:

Պունալուա-ընտանիքից պատահական ընտանիքին անցնելը, յերբ արգելվում եր սեռական միություն ամուսնական ազգականների միջև, հետևանք եր այն բանի, վոր անհրաժեշտ եր համարված սահմանափակել ծննդաբերությունը, վորը կանխել եր տեխնիկայի զարգացմանը, դրա հետ նաև սննդի մթերքների քանակությունը:

Վոչ կրօնը, վոչ ել բարոյականութիւնն այստեղ դեր չեն խաղում: Ռեֆորմատորը, վերանորոգիչը գերբնակչութեան որեւնքն ե, այսինքն ընտանիքի և ցեղի անտեսական բորորութեան հարցը:

Կնոջ իրավական դրութիւնը նախնական ընտանիքում.— Խմբական ընտանիքում անհնար է ճշտութեամբ ցույց տալ հայրականութիւնը: Վորովհետև դժվար է ճշտութեամբ իմանալ, թե ով է իսկական հայրը, մինչդեռ զավակները իսկական մոր ու լինելը միշտ կարելի չէ իմանալ, ուստի և զավակներն ու ցեղը կրում են մոր, այլ վոչ հոր անունը: Կոմմունիստական և նահապետական ցեղի մեջ հարգանքը դեպի կին-մայրը, մանավանդ նրա առաջին շրջանում, խիստ մեծ է:

Սովորաբար անային անտեսութիւնը անորինողը կինն էր, թեև բոլոր պաշարներն ընդհանուր էին: Կոմմունիստական ընտանիքի մեջ կինը ցեղի խմբերի կամ ընտանիքի ղեկավարն ու պետն է: Նա հաշտաբար և դատավոր է և վորպես հոգևորական՝ կատարում է կրօնական արարողութիւններ: Կինը ներկայացուցիչ է ժողովներում և սրբազան կրակը պահպանող: Այն հսկայական աշխատանքը, վոր նա կատարում է ընտանիքի ոգտին, ցեղի անդամներին հարգանք է ներշնչում դեպի ինքը: Ծիշտ չէ բուրժուական գիտնականների—կապիտալիզմի հավատարիմ ծառաների այն հայտարարութիւնը, թե կինը հասարակական կյանքի առաջին շրջանում ևս տղամարդու ստրուկն էր:

Կին-մոր կամ մայրական իրավունքի տիրապետութեան ժամանակաշրջանում ընտանիքի հատկանիշն է կոմմունիզմը, զույրի ընդհանրութիւնը:

Ժառանգութեան իրավունքը.— Քանի դեռ կենսական միջոցների արտադրութիւնը գտնվում էր ստորին աստիճանի վրա և բավարարում էր միայն ամենամահրաժեշտ պահանջները, տղամարդու և կնոջ գործունեութիւնը համարյա թե բոլորովին չէր տարբերվում իրարից:

Տեխնիկայի զարգացումով և ցեղի արտադրութեան ուժեղացումով, կնոջ և տղամարդու միջև աշխատանքը բաժանվեց: Ամուսնուն բաժին ընկավ ուտելիք և դրա համար արտադրութեան միջոցներ, այսինքն կացին, նետ, ձկնորսական պարագանք և այլն ձեռք բերելու աշխատանքը, կնոջը բաժին ընկավ, զլխավորապես,

կերակուր պատրաստելու հոգսը. նրա արտադրութեան գործիքներն էին անային ամանեղենները: Ամուսնալուծման ժամանակ ամուսինը վերադառնալով իր ցեղի մեջ, իր հետ տանում էր արտադրութեան գործիքները: Ամուսնու մահից հետո նրա արտադրական գործիքներն ևս անցնում էին նրա ցեղին, իբր նրա կնոջ յերեխաների ժառանգութիւն, վորոնց արյունակցական ազգականութիւնը նա կարող էր հաստատել: Իսկ նրա սեփական յերեխաները կամ, ավելի ճիշտ, նրա կնոջ յերեխաները նրանից վոչինչ չէին ժառանգում, վորովհետև նրանց հայրականութիւնը խառն ամուսնութեան ժամանակ հաստատել անհնար կամ խիստ դժվար էր:

Քանի դեռ արտադրութեան գործիքները թե տղամարդու և թե կնոջ համար խիստ բիշ էին, ցեղը չէր հոգում, թե հանգուցյալի ունեցվածքի ժառանգորդն ով կըլիներ:

Սովորաբար մոր արտադրութեան գործիքները մնում էին նրա ցեղին, իսկ տղամարդու արտադրութեան գործիքները վերադարձվում էին իր ցեղին, նրա ցեղապետունուն և նրա քույրերին:

Անասնապահութեան և հողագործութեան, այսինքն ուտելիքի նոր աղբյուրների մուծումով, վորոնց սեփականատերն այն ժամանակ տիրող սովորույթի համաձայն համարվում էր տղամարդը, վերջինիս դրութիւնը փոխվում է: Նրա հարստութեան մեծացումով ընտանիքի մեջ մեծանում է նաև նրա ույժն ու նշանակութիւնը, և հարց է ծագում ժառանգութեան իրավունքի մասին: Բայց այդ հարցը ծագում է վոչ միանգամից, այլ աստիճանաբար: Դեռ յերկար ժամանակ հայրը շարունակում է իր մեծացող հարստութիւնը ժառանգաբար հանձնել վոչ թե իր զավակներին, այլ ցեղին:

Ցեղը սկսում է հետաքրքրվել ժառանգութեան իրավունքով այն ըմնից հետո, յերբ նա անցնում է նստակյաց կյանքի, յերբ ավելանում է հավելյալ աշխատանքը, յերբ աշխատանքը բաժանվում է ցեղային: Խմբի մեջ, յերբ ծագում են միջցեղային հարաբերութիւնները, ազգայինների փոխանակութիւնը, շուկան, դրամը յեվ մասնավոր սեփականութեան ստղծերը:

Այժմ ցեղն այնքան էլ անտարբեր չէ, թե ամուսնալուծութիւնից կամ տղամարդու մահից հետո ով պետք է ոգտվի նրա բոլոր հարստութիւններից: Ցեղը շահազրկված է նրանով, վոր ամուսնու սեփականութիւնը մնա ցեղի մեջ, յեվ հանուն սեփականութեան ու ժառանգութեան գլխավայր դարձվեցին բոլոր

հին հասկացողութիւնները, փոխվեց ցեղի ամբողջ իրավա-
կարգը յեվ իշխանութիւնը մորից անցավ հորը:

Մայրական իրավունքը իր տեղը զիջեց հայրական իրա-
վունքին:

Կատարվեց առաջին մեծ հեղափոխութիւնը, վոր լինելով
զուտ անասական հարցերի հետեանք, իր հետ բերավ մինչ այդ
չլաված քաղաքական հեղաշրջում, բերավ Ենգելսի ասելով՝ կնոջ
համաշխարհային-սլատական պարտութիւնը:

Կին-մայրը, վոր հասարակութեան առաջին անդամն էր, նրա
իրավահավասար անդամը, դառնում է ստրկուհի: Տղամարդ-սե-
փականատիրոջ հայրական իրավունքի և ախրապետութեան մու-
ծումից հետո կինն հեռացվում է խորհրդի ժողովից, զրկվում վոչ
միայն ղեկավար ազգեցութիւնից, ապա նաև ձայնի իրավունքից:

Հայրական իրավունքի գործադրումով կինն հավասարվում
է առարկայի և անասունի: Տասներորդ պատվիրանը, վոր վերա-
բերում է տղամարդուն, հայտարարում է վորտչակի, թե՛ մի ցան-
կա վոչ մերձավորի կնոջը, վոչ նրա յեզը, վոչ նրա ծառան, վոչ
եւ այն բոլորը, վորոնք պատկանում են նրան: Անասունը և կինը
— համարժեք են:

Միամուսնական ընտանիք.— Իշխանութիւնն հորն անց-
նելով, հեղաշրջում է կատարվում նաև ընտանեկան հարաբերու-
թիւնների մեջ: Սեփականատեր-ամուսնուն անհրաժեշտ է ու-
նենալ անկասկածելի ծագումով զավակներ, վորովհետև նրանք
վորպես արշակունիքական ժառանգներ՝ հանդես են գալիս հայրա-
կան սեփականութեանը ախրապետելու:

Միամուսնական ընտանիքը խիստ տարբեր է պատահական
ընտանիքից: Ընտանիքի այդ ձևի ժամանակ ամուսնալուծութեան
իրավունքը պատկանում է բացառապես ամուսնուն: Դարձյալ տղա-
մարդուն է տրվում ամուսնական հավատարմութիւնը խախտելու
բացառիկ իրավունքը: Վախենալով ընտանիքի մեջ մտցնել ուրիշի
յերեխան, վորին հարկ կը լինի տալ ժառանգութեան մի մասը,
ամուսինը և նրա շահերի պաշտպան որենադրութիւնն ու յեկե-
ղեցին խիստ կերպով պատժում են կնոջը ամուսնական հավա-
տարմութիւնը խախտելուն համար: Բայց նույն ամուսինը կե-
նակցելով իր կնոջ հետ, չի վարանում իր յերեխան մտցնել ուրիշի
ընտանիքը:

Ինչպես տեսնում ենք, ամուսնական միութեան և նրա լուծ-

ման ազատութիւնը, ինչպես և կնոջ ստրկական կախումն ամուս-
նութեան մեջ և այն հանգամանքը, վոր կինը զրկված է ընտանե-
կան կապերը քանդելու իրավունքից, — այս բոլորը հիմնված է զուտ
անասական փոխհարաբերութիւնների վրա: Ընտանիքի վերո-
հիշյալ բոլոր ձևերում վոչինչ չկար վոչ աստվածային և վոչ եւ
հակաստվածային:

Յեկեղեցին իր յարլիկը փակցրեց ընտանիքի ամուսնական
ձևերին նրանց ծագումից շատ ուշ: Կանգնելով միշտ ավելի ու-
ժեղների կողմը, այս պարագայում ամուսնու կողմը, յեկեղեցին
աստուծո անունից կնոջը հրամայում է հնազանդ լինել ամուսնուն,
լինել նրա հավատարիմ կինը, հավատարիմ լինել նրան նույնիսկ
այն պահուն, յերբ նա ազատորեն գավաճանում է նրան: Ամուս-
նալուծութեան անկարելիութիւնը կնոջ համար ամուսնուն ցան-
կալի յե մանավանդ նրա համար, վոր նա ինքը ոգովում է սե-
ռական հարաբերութեան ազատութիւնից, իսկ յեկեղեցին ոգնու-
թեան է գալիս մարդուն նրանով, վոր այդ իրավունքից զրկում է
կնոջը: Յեվ այս բոլորն արվում է աստուծո անունից, նրան փառա-
բանելով:

Փ. Ենգելսը իր «Անտի-Դյուրինգի»-ի մեջ այսպես և նկա-
րագրում մայրական իրավունքի շրջանի ցեղական կենցաղավա-
րութիւնը:

Ազգաբնակչութիւնը ցրված և սակավ է: Ամեն մի ցեղ ապ-
րում է մի տեղում, նրա յետևում թողնված և հողային մեծ տա-
րածութիւն, վորը նշանակված է վորսի համար. դրա յետևում
կա սահմանային չեղոք անտառ, վորը մի ցեղ բաժանում է միու-
սից: Աշխատանքը բաժանված է միայն կնոջ և տղամարդու միջև:
Տղամարդը մարտնչում է արտաքին թշնամու հետ, գնում է վորսի,
ձուկ վորսում, կերակուրի համար հում նյութեր և ձարում և այդ
ձուկ վորսում, կերակուրի համար հում նյութեր և ձարում և այդ
պարագայում համար պիտանի գործիքներ պատրաստում: Կինն
հողում է անային անտեսութեան համար, կերակուր և պատրաս-
տում, գործում է կտորներ և կարում հագուստ: Թե սա, թե նա
անկախ կերպով աշխատում են իրենց զբաղմունքի սահմաննե-
րում՝ տղամարդն անտառում, կինը տան մեջ: Իր զբաղմունքի համար
տղամարդու ամբողջ պատրաստած գործիքները կազմում են նրա
սեփականութիւնը: Կնոջ իր պարագայում համար պատրաստա-
ծը ևս նրա սեփականութիւնն է: Ձենքեր, վորսորդութեան և
ձկնորսութեան պարագաները տղամարդու սեփականութիւնն են,
անային ամանեղենները — կնոջը: Տնային անտեսութիւնը կոմուն-

նիստական ե բաղկացած մի կամ շատ ընտանիքից, վոր յերբեմն համնում եր մինչև 700 անդամների (Ամերիկայի հ. - արև. ասիերում): Ինչ վոր միասին արտադրվում և սպառվում և, նա կազմում և ընդհանուրի սեփականություն—տուն, բանջարանոց, նավակ:

Կոմմունիստական ընտանիքի տնտեսական կենցաղավարու-
թյունն այգպես և: Նրան համապատասխան և նաև քաղաքական կառուցվածքը, վորը ենդելսն իր «Ընտանիքի և սեփականու-
թյան զարգացման» մեջ ընտրողում և հետևյալ կերպով.

Վոչ գինվորներ կան, վոչ ժանդարմներ, վոչ պոլիցիականներ. չկան աղնվականներ, ցարեր, փոխարքաներ, նահանգապետներ. չկան դատարաններ, բանտեր, դատավարություններ, այլ ամեն. ինչ իր կարգովն և գնում: Ամեն մի վեճ կամ կռիվ վճռվում և հենց նրանց միջոցով, վորոնց նա վերաբերում և,—տոհմին, ցե-
ղին կամ մի քանի տոհմերի: Գործերը վճռում են նրանում շահա-
զրգուվածները և մեծ մասամբ հաղարավոր տարիների սովորույթով: Չկան մեր բարդ և խառնաշփոթ կառավարչական սխտեմները, չնայած տնտեսության հասարակական ընույթին: Չկան չքավոր-
ներ, կարիքավորներ: Կոմմունիստական տնտեսությունն ու ցեղը ծերերի, հիվանդների և պատերազմի մեջ խեղանդամվածների վերաբերմամբ կատարում են իրենց պարտականությունները: Ամենքը, ի բաց չառած նաև կանայք, ազատ և հավասար են: Ստրկության համար դեռ հիմքեր չկան, չկան նաև ստրկացած ցեղեր:

Բնորոշ պայման հանդիսանում և քիչ զարգացած արտա-
դրությունը և դրա հետևանքով մեծ հողային տարածության վրա
նոսր ազգաբնակչություն և մարդու լիակատար հսկատակումը իրեն
չըջապատող, բայց ոտար արտաքին ընություն: Մարդկության
հետագա զարգացման համար անհրաժեշտ եր քանդել նախնական
կոմմունիզմը, — և նա քայքայվեց:

Ամենաստոր բնագրներ—անարդ անկշտություն, կոպիտ վա-
յելքների ծարավ, զգվելի ժլատություն, հասարակական սեփա-
կանություն ավաղակային յուրացումն ուղեկցում են հասարակա-
կան կյանքի նոր շրջանին—քաղաքակրթության: Դեռ դասակար-
գերի չբաժանված հին հասարակության հիմքերը տատանվում
եյին ամենասամթալի միջոցներով: Այդ միջոցներն եյին գողու-
թյուն, բռնություն, խորամանկություն, դավաճանություն:

Բերեն առաջին մեծ հեղափոխության հետևանքներն այս-
պես և բնորոշում.

Հին մայրական իրավունքի ժամանակ չկային գրված որենդե-
ներ: Հարաբերությունները պարզ եյին և սովորույթը պահպան-
վում եր սրբություն: Չկար հասարակական սեփականության խախ-
տումն, վորովհետև ցեղի բոլոր անդամները նրա պահպանությամբ
շահագրգռված եյին:

Նոր, ավելի բարդ կարգերում գրված իրավունքը դարձավ
ամենակարևոր պահանջներից մին: Անհրաժեշտ դարձան նաև այդ
իրավունքը վարելու հատուկ որգաններ: Իրավական հարաբերու-
թյունները դարձան ևլ ավելի բարդ և խառնաշփոթ:

Այդ բոլոր նորությունները բացատրվում են նրանով, վոր
մասնավոր սեփականության ծագումով անհրաժեշտ դարձան նաև
որենքներն ու հիմնարկությունները, վորոնք պահպանում են այդ
անհատական սեփականությունը յուրայինների հարձակումից: Կոմ-
մունիստական ցեղի մեջ ամեն ինչ պատկանում և բոլորին: Ամ-
բողջ հարստությունը հասարակության հարստությունն և: Մաս-
նավոր սեփականության ծագումով հարստությունը հասարակու-
թյան սեփականությունից դառնում և մի անձի կամ մի ընտա-
նիքի սեփականություն: Յեվ այդ տնտեսական հեղափոխությունը
իր հետ բերում և քաղաքական այն հեղափոխությունը, վորը
բանդելով կոմմունիստական ցեղը, իր հետ բերեց կնոջ մեծա-
պույն պարտությունը:

Գ. Լ. ՈՒԽ IV.

**ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԿ-
ՎՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՆԻՆԵՐԸ**

Ստրկութեան ծագման արտադրական պայմանները.—
Խաշնարած սեփականատերերից և հասարակական պարտականու-
թյուններ կատարող պաշտոնական անձերից դասակարգեր կազ-
մելու սկզբնավորութեան հետ միասին կատարվում էր նաև ուրիշ
պրոցես, այսինքն՝ ստրկութեան ծագման պրոցեսը:

Նահապետական ընտանիքի ներսում աշխատանքի բնական
բաժանումը և մասնավոր սեփականութեան վարձացումը իրենց
զարգացման ընթացքում պահանջում էին գործադրել մի կամ
մի քանի կողմնակի բանվորական ուշժեր, վորոնք ցեղի ան-
դամներից չէին: Այդ կատարվում էր այնտեղ, ուր համայնական
հողի մշակումը իր տեղը զիջեց վարելահողերի առանձին ընտա-
նիքի ձեռքով մշակմանը, հողեր՝ վորոնք ձեռք էին բերվել պատե-
րագմով, ճահիճները ցամաքեցնելով, ծառերը կտրելով: Այդ հո-
ղամասերը չանցան հասարակութեան ձեռքը, այլ նրանց մի վորսե
կերպ ձեռք բերողների սեփականութունը դարձան: Այդպիսի
բանվորական ուշժերը, վորոնք ստացվում էին զրօից, տալիս
էին այն պատերազմները, վորոնք տարվում էին անդադար և
այն ժամանակից, յերբ կազմակերպվեցին հասարակական առան-
ձին խմբեր:

Սկզբում պատերազմավորներն անպետք էին, վորովհետև
չկար հավելյալ աշխատանք, և ուտելիքը հաճախ չէր բավում
նույնիսկ ցեղի անդամներին: Այդ պատճառով նրանց սպանում,
յերբեմն էլ ուտում էին նրանց միսը: Այժմ արտադրական աշ-
խատանքի ուշժի զարգացումով պահանջվում էր աշխատող ձեռ-
քերի մեծ քանակ, և նրանք ստացան վորոշ արժեք: Ուտտի սկսե-
ցին խնայել նրանց կյանքը, վորպեսզի ոգավեն նրանց աշխա-
տանքով:

Այսպիսով անտեսական առաջադիմութեան ջնտրհիվ առաջ է
գալիս ստրկութունը:

Հպատակվող համայնքի անդամները, կանայք և տղամար-
դիկ, դառնում էին ստրկներ:

Մինչև այն ժամանակ, քանի դեռ հասարակութունը կազմ-
ված էր բացառապես արյունակցական ազգականներից, խոսք չէր
կարող լինել ցեղի անդամներից մեկի կամ մի մասի շահագործ-
ման մասին մեծի—նահապետի կողմից, վորովհետև համայնքը դեռ
չէր ջոկել իր միջից ազատ ավելորդ բանվորական ուշժեր: Վերա-
կանգնել բանվորական ուշժը դժվար էր, դրա համար պաշտոնա-
տար անձինք, ապա նաև ամբողջ ցեղը շահագրգռված էին պա-
հելու ամեն մի առանձին աշխատողի, վորը գնահատվում էր խիստ
բարձր:

Ստրկութեան—բանվորական ուշժի նոր աղբյուրի—կիրա-
ռումով զրուցյունը փոխվեց խիստ կերպով: Շարքից դուրս
ընկած բանվորին կարելի չէ փոխարինել նոր ստրուկով:
Այսպիսով մարդն անարժեք է դառնում: Նա դառնում է արտա-
դրութեան հասարակ գործիք, նույնիսկ ավելին. նա դառնում է
ապրանք:

Վոչնչանում է ստրկին լրիվ կերպով բավարարելու, նրա
ուշժերի և ցեղի պահպանման հարցը: Անպետքանում է մի ստրուկ,
նրան փոխարինում են ուրիշով: Սակայն, դրա փոխարեն հրա-
պարակ է գալիս բանվորից—ստրուկներից ավելի շատ ոգուտ
կորոզելու հարցը: Ստրկին ստիպում են աշխատել անհամար ժա-
մեր: Նրան կերակրում են կիսաքաղց պրությամբ, չեն հոգում
նրա ուշժերը և նրա աշխատունակութունը պահպանելու մասին:
Ստրկատիրական հասարակութեան մեջ այլևս խոսք չկա հասա-
րակութեան բոլոր անդամներին նրանց պահանջների համաձայն
մթերքները հավասար կերպով բաշխելու մասին:

Հրապարակ է գալիս ուրիշի աշխատանքի շահագործումը
վոչ թե ամբողջ հասարակութեան բարորութեան համար, այլ
միայն նրա մի մասի—սեփականատերերի մի խմբակի համար:

Նահապետի սեփականատեր դառնալը.—Արտադրակա-
նութեան զարգացումով, ավագի—նահապետի դերը դառնում է
բազմակողմանի և ամբողջ ցեղի կյանքում սկսում է ստանալ
ավելի մեծ նշանակություն: Բացարձակապես անհնար է դառնում
բարդ անտեսութունը վարել առանց կազմակերպչի: Առանձին

համայնական խորքերի միջև ծագած աշխատանքի բաժանումը և զբանով առաջ յեկած փոխանակումը նահապետին զարձնում են բոլոր մթերքների տերը և նրա բաշխողը: Նա յե բաժանում մթերքները ցեղի անդամների միջև, նա յե շուկա դուրս բերում մթերքները՝ փոխանակելու համար: Յեվ փոխանակման ընթացքում մթերքը ցեղի սեփականությունից, հասարակական սեփականությունից դառնում է նահապետի սեփականություն:

Շնորհիվ ծագում առած փոխանակման, նահապետ-սեփականատերը շահագրգռված է ավելի շատ մթերքներ ստանալու: Նա և նրա ընտանիքը չեն կարող ուտել ավելի շատ պարեններ, քան ցեղի մյուս անդամները, սակայն նրանք կարող են փոխանակել այդ պարենները ուրիշ իրերի հետ, վորոնք պիտանի յեն տնային կարիքների և զարդարանքի համար: Մթերքների բաշխման մեջ ծագում է անհավասարություն: Շնորհիվ իրերի այդպիսի դրուծյան, նահապետն ու նրա ընտանիքն իրենց նյութական բարրությունը և հարստությունը սկսում են առանձնանալ ամբողջ ցեղից: Նահապետ-ղեկավարը դառնում է շահագործող՝ պարազիտ: Նա վոչ միայն ոգտվում է իր ցեղակիցների և ստրուկների աշխատանքից առանց վճարելու, ապա նաև կազմակերպչական աշխատանքը դնում է ստրուկների ուսերին: Աշխատանքի ամբողջ կազմակերպչական աշխատանքը, կռավարելը և բաշխելը նահապետը մասառմաս տալիս է ամբողջությունը մի շարք ավելի ընդունակ գործիչների, վորոնք նահապետի անունից կատարում են ամբողջ գործը:

Անձի դրուծյունը խմբում յեվ հասարակություն մեջ.— Մասնավոր սեփականություն և ստրկություն ծագումով, բոլորովին անարժեք է դառնում աշխատողի անձնավորությունը: Հասարակություն ծաղկման համար անհրաժեշտ է դառնում յերեք տեսակի գործիք. անշունչ գործիքներ—կայքին, դանակ և այլն, արտադրական շնչավոր գործիքներ—տնային անասուններ, և խոսուն գործիքներ—մարդիկ-ստրուկներ:

Ստրուկն արտադրական գործիք է, վորը կարող է իր աշխատանքով տալ շահ և հավելյալ մթերք: Ստրուկը գնահատվում է նաև վորպես արտադրական գործիք: Տերը նրան ապրեցնում է մինչև այն ժամանակ, քանի նա աշխատանքի ընդունակ է: Յերը ստրուկն այլևս ույժ չունի աշխատելու, շարտվում է փողոց, վորպես մաշված, անպետք գործիք: Սակայն այն ժամանակ, յերբ

զգուշ տերը խնամքով է վերաբերվում իր գործիքի հետ, վորովհետև նա թանգ արժե կամ դժվար է ձեռք բերվում, ընդհակառակը ստրկի վերաբերմամբ ամենափոքր զգուշություն անգամ չի բանեցնում: Ստրկին քիչ են կերակրում, բայց ստիպում են աշխատել շատ: Ստրուկը՝ վորպես բանվորական ույժ, շուտով մաշվում է, սակայն այդ չի տխրեցնում վոչ վորի: Անպետք սցած ստրկին փոխարինում են նորով, վոր ձեռք է բերվել պատերազմում կամ դնված է՝ ինչպես ամեն տեսակի իրեր: Այդ վերաբերմունքը դեպի բանվոր-ստրուկը տարածում են նաև նրա ընտանիքի վրա: Նահապետական հասարակությունը չի շահագրգռված ստրկական ցեղի պահպանությունը և նրա բազմացումով: Ստրուկը դառնում է իր, ապրանք. նրան ծախում են, շուկայում փոխանակում, նրան նվիրում են ուրիշին: Յեվ այդպես են վարվում վոչ միայն ստրուկների հետ, ապա նաև նրանց ընտանիքների հետ, վորոնց ծախում, փոխանակում են ուրիշ ապրանքների հետ, մեծաքանակ կամ հատ-հատ, ծնողներից հեռացնելով յերեխաներին, մարդուն կնոջից, այնպես, ինչպես անում էյին անցյալ ժամանակներում—ճորտատիրական իրավունքի ժամանակ մեզ մոտ Ռուսաստանում կալվածատերերը գյուղացիների հետ:

Ստրկի տերը, նրան ճնշողը, շահագործողն այնուամենայնիվ դառնում է վոչ թե ամբողջ նահապետական ցեղը, նրա անդամները, այլ միայն նահապետն ու մի խումբ պաշտոնատար անձինք, վորոնք կատարում են հասարակական պարտականություններ, վորոնք մասնավոր սեփականություն հետ իլի են տնտեսական և քաղաքական իշխանությունը: Այժմ արդեն ցեղի արյունակցական անդամներն ևս դառնում են ստրուկներ:

Ծագում առած իշխող դասակարգն այժմ ազատ է տնորինել վոչ միայն ստրկի կյանքն ու մահը, այլ և իր ցեղակիցների—հասարակություն արմատական անդամների կյանքն ու մահը: Նահապետն ու նրա ողնականները վոչ միայն բաշխում են աշխատանքը, հետևում վոր նա կատարվի, վոչ միայն անում են կարգադրություններ, այլ և աշխատանքը չկատարողներին պատժում են:

Նահապետը, վորպես սեփականատեր, շահագրգռված է այն բանում, վոր արտադրականությունն ավելանա, այսինքն ավելի շատ հարստություն ստանա, իսկ գործադրությունը, մխտումը քչանա:

Այստեղից առաջ է գալիս ստրուկների կիսաքաղց դրուծյունը, և ամբողջ հարստությունն անցնում է իշխող դասակարգի մի փոք-

բաթիվ խմբակի ձեռքը: Իրերի այդպիսի դրուժյան հեռանքն է մի կողմից՝ սեփականազուրկների, սովածների, չբավորների ծագումը, մյուս կողմից՝ կուշտերի, ավելորդ, առատ մթերքներ ունեցողների—հարուստների ծագումը:

Նախնական կոմունիստական ցեղը, վոր չգիտեր մասնավոր սեփականություն, չգիտեր տեր և ստրուկ, չգիտեր նաև հարուստների և աղքատների բաժանումն: Նահապետական ցեղը, վորի մեջ մասնավոր սեփականությունն արգեն մեծ դեր է խաղում, հասարակությունը բաժանում է տերերի և ստրուկների, հարուստների և աղքատների:

Մասնավոր սեփականությունն անարժեք է դարձնում անձնավորությունը վոչ միայն ցեղի, հասարակության, այլ և իր ընտանիքի մեջ: Ընտանիքի գլուխը, նահապետը նրա հայրն ու իշխանն է: Նա ազատորեն սնորհնում է իր կնոջ ու յերեխաների կյանքն ու մահը: Նահապետը հրամայելով կնոջը խիստ հավատարիմ լինել ամուսնական հարկին, իրեն վերապահեց ամուսնական հավատարմությունը խախտելու, մի շարք կանայք ձեռք բերելու իրավունքը: Յեվ նա այդ իրավունքից ոգավում է իր շահախնդրական-սեփականատիրական նպատակների համար: Նա իր զավակներին ու կանանց ծախում է, ինչպես ամեն տեսակի մի ապրանք, և վոչ վոք չի կարող այդ արգելել նրան, վորովհետև դա նրա սեփական—մասնավոր սեփականություն իրավունքն է:

Միջխմբական հարաբերությունները.— Հասարակական առանձին խմբակների միջև աշխատանքի բաժանումը և փոխանակումը առաջ բերին առանձին ցեղային համայնքների մեջ արտադրության մասնագիտացումն: Կազմվեցին համայնքներ, վորոնք պարապում էին բացառապես անասնապահությանը, հողագործությունը կամ արտադրական գործիքներ շինելով: Մասնագետ արհեստավորների առանձնացումը ցեղի ներսում հետագայում հանգավ այն բանին, վոր ամբողջ ցեղի, համայնքի մեջ համայնքի բոլոր անդամները գլխավորապես պարապում էին տվյալ արհեստով:

Այդպիսի պայմաններում փոխանակումը պատահական յերեվոյթից կենսական անհրաժեշտություն դարձավ: Մի շարք հասարակություններ այլևս գոյություն ունենալ չէին կարող առանց արտադրած մթերքների կանոնավոր փոխանակման: Փոխանակման կենդանացումը առաջ բերեց ձուլածո փողերի պահանջ, վորոնք փոխարինում են մաս-մաս կշռվող փող-մետաղներին: Զանազան

արժողությունն ձուլածո դրամը շատ թեթևացրեց և պարզացրեց փոխանակումը կամ առևտրական գործառնությունը:

Ուժեղացրած փոխանակումը առաջ բերեց յերկու նոր դասակարգ—արհեստավորներ և առևտրականներ: Իր պարապմունքով արհեստավորը մասնագիտանալով՝ դարձավ անփոխարինելի մարդ արտադրության զարգացման ու ծաղկման գործում և սեփականատիրոջ—հարուստի ու նրա ընտանիքի համար: Մշտական փոխանակումը պահանջեց մի խումբ մարդիկ, վորոնք մասնագիտացան փոխանակման գործում և իրենց ապրանքները ծախելու համար վորոնում էին շուկաներ: Աշխատանքի հետագա բաժանման ընթացքում մասնագետ - առևտրականը վորպես փոխանակման կազմակերպիչ անհրաժեշտ դարձավ:

Ընդհանուր պատերազմական և վորսորդական ձեռնարկությունների մեջ մի շարք ազգակցական ցեղերի հանդես գալը ստեղծեց այդ հասարակությունների մեջ յուրահատուկ քաղաքական միություն: Այդպիսի միությունների նպատակն է միասին պաշտպանել միությունն ընդհանրապես և առանձին ցեղերը մասնավորապես: Առևտրական փոխհարաբերությունները և առևտրական կապերն իրենց հերթին ստեղծում են միություններ, վորոնք ծագում են ուրիշ խաղաղ առևտրական հարաբերություններից:

Տերերի յեվ ստրուկների դրուժյունը.— Մտրուկները սեփականատիրոջ շահագործական հակումների շնորհիվ վերածված էին արտադրական հասարակ գործիքների և բնականաբար զրկված էին զարգանալու ամեն մի հնարավորությունից: Տերերի ձգտումը՝ նրանցից ստանալ հնարավորության չափ շատ և տալ վորչափ հնարավոր է քիչ, ունեցավ իր ազդեցությունը: Մտրուկների մեջ թագավորում էր ճնշումն ու լիակատար բթացումը: Յեվ շնորհիվ այդ բթացման՝ նրանք ցույց տվին իրենց ազատատաղրական կովում աննշան գործունեություն: Իսկ ազատազրական ամեն մի թույլ փորձ, վոր կատարվում էր ստրուկների կողմից, տերերը ճնշում էին խստությունը:

Ճնշելով ստրկական ազատազրական և ինքնագործունեություն ամեն մի փորձ, տերերն իրենց վրա վերցրին զիտություն զարգացման իրավունքը: Յեղի իշխող մասը իր մտավոր աշխարհայեցողության հորիզոնն ընդարձակեց մեծացնելով ու ծավալելով արտադրությունը, թափառելով տեղից-տեղ և զրացի համայնքների հետ առևտրական կապերի մեջ մտնելով: Արտադրու-

թյան զարգացումով մարդու կախումը բնությունից ել ավելի-
 թուլանում է: Բնական Ֆեախշիզմը, վոր ծագել էր մարդու՝ բնու-
 թյան յերևույթները բացատրելու անզորությունից, իր տեղը զի-
 ջում է գիտությանը: Շատ բաներ, վորոնք նախամարդուն թվում
 էին անհասկանալի, խորհրդավոր, գերբնական, մարդու համար
 դառնում են հասարակ, հասկանալի և պարզ, այն մարդու, վոր
 հարստացել է փորձի և գիտության վորոշ պաշարով:

Հավելյալ մթերքների բացակայությունը մարդուն վազվա
 որվա մասին վատահույսություն չէր տալիս: Ուտելիքի վորոնումը
 կլանում էր նրա ամբողջ ժամանակը, և վոչ մի ազատ ժամ չէր
 թողնում զարգանալու համար: Սննդի մթերքների օտառությունը
 և այն հանգամանքը, վոր շնորհիվ ստրկության տերերն ազատ-
 վեցին կերակրվելու մասին մտածելուց, հնարավորություն տվին
 նրանց իրենց ազատ ժամանակը նվիրելու գիտությանը:

Հասարակության իշխող մասը համարյա թե բացառապես
 զբաղվում էր տեխնիքական պարագմունքներով, ուսումնասիրում
 և զարգացնում էր ճարտարապետությունը, կառուցելու գործը,
 մետաղի մշակման յեղանակները և այլն: Բայց ժամանակի ըն-
 թացքում տեխնիքական պարագմունքները, վորպես արտադրա-
 կան, այսինքն ստրկական աշխատանքին ծառայող պարագմունք-
 ներ, թուլանում են տերերի մոտ: Նրանք ուսումնասիրում են
 մատենատիկա, աստղագիտություն, փիլիսոփայություն, արվեստ:
 Այնուամենայնիվ տերերի գործնական գիտությունները հան-
 գում են ստրուկներին ոգտագործել իմանալուն: Առևտրական
 զբաղմունքն ևս տերերը արհամարհում են, համարելով սուտուրը
 անարժան և ստորացուցիչ մի բան իրենց համար: Սակայն նույն
 այդ տերերը բոլորովին ստորացուցիչ չեյին համարում պարապել
 վաշխառությամբ:

Տերերի սիրած պարագմունքն ու ժամանցն էյին խնձույթ-
 ները, բանաստեղծությամբ զբաղվելը և քաղաքական թեմաների
 մասին զրույցներ կազմելը, վորոնք նրանց դարձրին պարազիտ-
 ներ բառիս ամենալայն իմաստով:

Ստրկատիրական հասարակությունների անկման պատ-
 ճառները.—Ստրկատիրական հասարակության անկման պատճառ-
 ները շատ են: Այդ պատճառներից են՝—բանվոր ձեռքերի պակա-
 սությունը, ստրուկներին չափից ավելի շահագործելու հետևանքով
 մահացությունը, տեխնիկայի զարգացման ընթացքի թուլացումը,

վոր հետևանք էր գործնական գիտությունները տեղ ստրկատերերի
 վերացական գիտություններով հրապուրվելու, սեփականատի-
 բոջ և նրա ընտանիքի պարազիտային գերը, վոր կոմունիստա-
 կան հասարակության ազատ աշխատակցության տեղ առաջ մղեց
 ստրկատերերի և ստրուկների, շահագործողների և շահագործ-
 վողների հասարակություն: Նախամարդու ազատ հասարակու-
 թյունը փոխարինվեց ստրկատիրական մեծ հասարակությամբ,
 ցեղային համայնքի անդամների նյութական և հոգեկան ճնշումով
 հանդերձ:

Հասարակության բաժանումը տերերի և ստրուկների՝ թու-
 լացրեց ցեղի՝ ռազմական ույժը: Կոմունիստական ընտանիքի
 գլխավոր ռազմիկները ցեղի անդամներն են: Այժմ ցեղը բաժան-
 վում է պարազիտ-տերերի, վորոնք ավարներ ձեռք բերելու
 համար թեև շահագրգռված են պատերազմով, բայց ամենափոքր
 ցանկություն անգամ չունեն պատերազմի գնալու: Պատերազմ վա-
 բել ստրուկների ոգնությամբ անկարելի յե, վորովհետև նրանք
 շահագրգռված չեն իրենց շահագործողների և ճնշողների հաղթու-
 թյամբ: Գյուղացիք ևս վորպես ազատ գաս՝ յերբեք շահագրգռ-
 ված չեն պատերազմով. պատերազմը նրանց հնարավորությունից
 զրկում է վարել իրենց տնտեսությունը և վոչ մի շահ չի տալիս,
 վորովհետև պատերազմի ավարը հարուստ ստրկատերերը բաժա-
 նում են իրենց մեջ:

Տերերի բարորության ուժեղացումով ազբատանում է ժո-
 դովուրդը և գլխավորապես գյուղացությունը: Գյուղացիք պատե-
 րազմներից, ինչպես և իրենց շահագործման ուժեղացումից աստի-
 ճանարար քայքայվելով, իրենց գույքից, հողից զրկվում և դառ-
 նում են պրուլետարներ, այսինքն արտադրական միջոցներից զբրկ-
 ված մարդիկ:

Հոգեվորակալ ություն յ՛վ ստրկություն.—Ստրկության
 ծագումն առաջացնող և ստրկատիրական հասարակությունն անկ-
 ման հասցնող տնտեսական պատճառները հետևյալներն են: Այդ
 բոլոր տնտեսական գործոնները շատ հեռու յեն յեկեղեցու հայ-
 բերի այն հավաստիացումներից, թե ինքը տեր աստվածը աշ-
 խարհն ստեղծելու ժամանակից ի վեր սահմանել է, վոր աշխար-
 հում պետք է լինեն հարուստներ և աղքատներ, տերեր և ստրուկ-
 ներ: Կապիտալի վարձու ծառաները—կղերը—ամբիոնից շահագործ-
 վողներին հնազանդություն քարոզելով, հակասում են նույնիսկ

Աստվածաշնչին, վորով նրանք միշտ առաջնորդվում են, յերբ դա նրանց անհրաժեշտ է ժողովրդի զիտակցութիւնը մթազնելու համար: Կղերը բանվոր դասակարգին ներշնչում, նրանից պահանջում են — ճակատիդ քրտինքով աշխատիր քո տիրոջ—կապիտալիստի համար: Համբերիր և լսիր, յերբ նա բեղ ճնշում է, յիրբ նա սղորակի նման ծծում է քո ամբողջ հյուսթն ու արյունը, վորովհետև այդպես է կամենում քո աստվածը: Հաշտվիր, խոնարհվիր, մի արանջա, մի ապստամբիր, դուր է քո աշխատանքը, վորովհետև աստված ինքն է հրամայել դարե-ցդար, աշխարհի ստեղծագործութիւնից մինչև նրա վախճանը, վոր լինեն ստրուկներ և տերեր, հարուստներ և աղքատներ:

Բայց վճռեղ է ասել աստված այդ բանը: Վճռեղ է նա հրամայել հարյուրավոր և հազարավոր միլիոն բանվորներին և գյուղացիներին, վոր ծառայեն մի խումբ կապիտալիստների և կալվածատերի, մեզ հայտնի չէ:

Աստվածաշնչի մեջ աշխարհի ստեղծագործութեան մասին ասված է.— աստված ստեղծեց Ադամին ու Յեվային: Իսկ թի ըստեղծված էին ստրուկներ, վորոնք պարտավոր էին աշխատել Ադամի և Յեվայի համար, այդ մասին վոչ մի տեղ վոչինչ չի ասված: Ադամին և Յեվային դրախտից վոնդելու առասպելի մեջ ևս ստրուկների մասին վոչինչ չի ասված: Ընդհակառակն այնտեղ ասված է, թի՛ ձեր ճակատի քրտինքով պետք է ուտեք ձեր հացը, այսինքն դուր ինքներդ, և վոչ ստրուկները ձեզ համար, պետք է աշխատեք, վորով կարողանաք կերակրվել: Նոյը ևս ստրուկներ և ծառաներ չունի վորովհետև ջրհեղեղից հետո ազատեց միայն նա և նրա ընտանիքը:

Նախնական կոմունիստական հասարակութեան մեջ ևս չկային ստրուկներ: Նահապետական հասարակութեան մեջ ևս մինչև մասնավոր սեփականութեան ծագումը ստրուկներ չկային: Միայն մասնավոր սեփականութեան ծագումով, հասարակութեան սկսում է բաժանվել տերերի և ստրուկների, շահագործողների և շահագործվողների:

ՖԵՈՂԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Փնդալլական հասարակութեան հիմքերը.—1) Նահապետական հասարակութեան հիմքերն էին հոտերի մասնավոր սեփականութեան ծագումը և մի համայնքի սահմաններում գյուղացիական արհեստավորական արտադրութեան դարգացումը:

2) Ազգաբնակչութեան աճումով հողային տարածութիւնը քչանում է, և թափառաշրջիկ ցեղերն ստիպված են լինում ավելի ու ավելի նստել մի տեղում: Արտատեղիների պակասութիւնը սահմանափակում է հոտերի մեծացումը: Հողագործութիւնը անասնապահութեան ոժանդակիչ աշխատանք լինելուց սկսում է համայնքի գործունէութեան կենտրոնը դառնալ:

3) Փոխանակման և ստրկութեան ծագումը առաջ բերեց աշխատակցութեան սիստեմի խախտումն, վոր հիմնված էր բացառապես արյունակցական ազգականութեան վրա: Յեթի ընդհանուր վորստրութիւնները կամ պատերազմները միասին վարելը կատարվում էին ցեղակից խմբերում, ապա արտադրական և փոխանակական ընդհանուր ձեռնարկները կապում էին արդեն նաև իրար վոչ ցեղակից խմբերին:

Համայնքը, վորի մեջ մտնում են այժմ հազար և ավելի մարդիկ, կազմվում է մի կամ մի քանի գյուղերից: Այդ համայնքի ըրտր անդամները միասին տիրում են անտառներին, արտատեղիներին և ջրերին: Իսկ այդ շրջանում գաշտերը մեծ մասամբ սկսում են մասնավոր սեփականութիւն դառնալ: Սովորաբար այդպիսի համայնքը վարում է բնական տնտեսութիւն, այսինքն արտադրում է իրեն անհրաժեշտ բոլոր բաները: Նա ունի իր լերկրագործական մթերքները, իր հում նյութերը, վորոնք մշակում են իրենք իսկ գյուղացի արհեստավորները և ստրուկները:

դամները մասին արած այդ բոլոր հոգացողութիւնների համար վճարում են իրենք հասարակութեան անդամները, այսինքն գյուղացիական ընտանիքները:

Գյուղացիական վճարի սկզբնական ձևը համայնքի անդամների և համայնքի իշխան-ֆեոդալի միջև կատարվում է աշխատանքային հատուցումով կամ ճորտական աշխատանքով: ճորտատիրական իրավունքի շրջանում գյուղացիները ֆեոդալների համար ճորտական աշխատանք են կատարում վորոշյալ քանակութեամբ:

Հում նյութերը, վորոնք ստացվում էյին անասնապահութիւնից և հողագործութիւնից, վերածախվում էյին համայնքի մեջ: Սկզբներում համայնքի անդամ գյուղացիները և նրանց ընտանիքը միաժամանակ հողագործներ և անասնապահներ էյին: Ժամանակի ընթացքում, տեխնիկայի զարգացման հետ արհեստն սկսում է ավելի ու ավելի առանձնանալ յերկրագործութիւնից: Առաջանում են հատուկ դարբիններ, ջրաղացպաններ, ջուլհակներ, կոշկակարներ և այլն: Ֆեոդալական տնտեսութիւնը կարիք ունի բանվորական ձեռքերի վոչ միայն յերկրագործութեան ասպարեզում: Նա շահագրգռված է նաև արդյունաբերութեան մշակած արդյունքներով թե անմիջապես իր ընտանիքի, թե վոխանակման համար: Արհեստավորի աշխատանքով շահագրգռված ֆեոդալը շահակետ չի համարում ճնշել արհեստավորին: Այդ պատճառով արհեստավորներին նա տալիս է վորոշ գյուրութիւններ, սակայն նրանց պահում է իրենից կախված դրութեան մեջ: Արհեստավորը պետք է ֆեոդալին վճարե վորոշ գումար—փող և կամ իր աշխատանքի արդյունքի վորոշ քանակը նրան պիտի տա:

Այդպիսի պարտականութիւնը կոչվում է արհեստի տուրք: Սակայն, ֆեոդալական շրջանում արդեն ծագում է համայնքի անդամների ֆեոդալից կախված լինելու յերրորդ ձևը, այն է ֆեոդալին անձամբ ծառայելը: Սովորաբար ֆեոդալի ծառայողները համայնքի ամենաաղքատ անդամներն էյին: Նրանց կախումը ֆեոդալից հասավ ամենաբարձր աստիճանի, վորովհետև նրանք վորպես սեփականազուրկներ՝ ապրում էյին բացառապես տիրոջ վորումութեամբ: Իրանք տնային ստրուկներ էյին, վորոնք հավաքված էյին վոչ թե ստրուկներից կամ ուրիշ նվաճված համայնքներից, այլ անմիջապես իրենց ցեղի անդամներից:

Ֆեոդալական շրջանում լիակատար պարտութեամբ գրեկոր-

վում է հարուստների և աղքատների, տերերի և ստրուկների բաժանումը:

Համայնքի անդամների կախումը ֆեոդալից, վոր իր վրա չէ վերցնում գրացի ցեղերի հարձակումից պաշտպանելու պարտականութիւնը, հնարավորութիւն է տալիս ֆեոդալին համայնական ամբողջ հողի սեփականածները կամ տիրապետողը համարվելու: Ֆեոդալը տերն է ցեղի, իսկ մնացած անդամները—նրա հպատակները:

Մասնավոր սեփականութեան և ֆեոդալի իշխանութեան ուժեղացումով ցեղի առանձին անդամների միջև ցեղային կապերը թուլանում և նրանց փոխհարաբերութիւնները փոխվում են: Կոմմունալ ընտանիքի գույքը համայնական է: Վոչ վոք չի շահագրգռված նրան թալանել կամ վոչնչացնել, վորովհետև ընտանիքի բոլոր անդամները, համաձայն իրենց պահանջների՝ ստանում են իրենց անհրաժեշտ միջերքները: Կոմմունալ տնտեսութեան մեջ հանցանքի հասկացողութիւնը կամ հանցանքը, քիչ բացառութիւններով, գոյութիւն չունի: Ընտանիքի այն անդամը, վոր կախում էր վորոշ սովորույթը, տարերային սարսափ էր ազդում, և նրան ինքնապաշտպանութեան զգացումից զրոյված՝ վրոչնդում էյին համայնքից, զրանով մատնելով նրան սովամահութեան:

Մասնավոր սեփականութեան ծագումը իր հետ բերում է այդ համայնական սեփականութեան կախումն: Սեփականատիրոջ շահերը կախողի հետ արդեն կովում են վոչ թե տարերայնորեն, այլ կազմակերպված:

Մշակում են սեփականատիրոջ գույքը պաշտպանող հատուկ որենսդրութիւն: Ստեղծվում են մի շարք ինստիտուտներ և հիմնարկներ, այսինքն որենսդրական մարմիններ, դատարաններ և բանտեր, վորոնք ունեն իրենց հատուկ նպատակը—պատժել սեփականատիրոջ առանձնաշնորհումն ու իրավունքը կախողներին: Գաղափար է կազմվում որինականի և անորինու մասին: Ընդամին որինական է համարվում չքավորի գույքի հափշտակումը, մի քանի անձի կամ առանձին ընտանիքի հարստութեան ուժեղացումը ցեղի մեծամասնութեան հաշվին: Ապորինի է համարվում ամբողջ կամբի կամ համայնքի իրավունքների պաշտպանութիւնը մի անձնավորութեան—սեփականատեր - ֆոդալի վոտնձգումների դեմ:

Ֆեոդալը գանում է վոչ միայն ամբողջ համայնական հողի տերը, նա վոչ միայն հավաքում է տուրքերը, ճորտական աշխա-

տանքի և հողային տուրքի ձևով, նա դառնում է նաև սրենսդիր և բարձրագույն դատավոր, նա ինքն է գրում որենքները, ինքը հաստատում նրանց և ինքն էլ կիրառում նրանց կյանքի մեջ:

Փետրալական հասարկութայն մեջ խմբային հարաբերությունները.—Փետրալական կառավարքը, վոր հիմնված է բնական տնտեսութայն վրա, այսինքն մի տնտեսութայն, ուր բոլոր պահանջները բավարարվում են իրենց իսկ սեփական համայնքի արտադրութայնը, տնտեսապես անկախ է: Փետրալը պաշտպանում է գյուղացիներին, բայց վորպես ամենախոշոր սեփականատեր, նա ինքը կարիք ունի պաշտպանութայն: Փետրալական համայնքներն անդադար պատերազմական դրութայն մեջ են գտնվում: Ավելի թույլ ֆետրալներին անհրաժեշտ է ուժեղ ֆետրալների կամ մի ուժեղ ֆետրալի դաշնակցութունն ու ոգնութունը: Այդ ավելի ուժեղ ֆետրալը, վոր իր իշխանութայն տակ համախմբում է ավելի թույլ և փոքր ֆետրալներին, կոչվում է սուվերեն: Այդ սուվերենը ապագա արքան կամ թագավորն է լինելու:

Կոմունիստական ընտանիքի բարորութայն ուժեղացումը բնականորեն իր հետ մտցրեց ընտանիքի բոլոր անդամների դրութայն բարելավումն: Ամեն ինչ արտադրվում և ձեռք եր բերվում ցեղի անդամների միջոցով և ցեղի անդամների համար: Բոլորովին այլ կերպ է դրված գործը մասնավոր սեփականութայն ծագման ժամանակ: Տխնիկայի շրջանում ամեն մի քայլ առաջ առաջ է բերում անդի մթերքների ավելացումն: Սակայն կատարելագործված տխնիկայի արդյունքից ոգավում է վոչ թե ավելի ջեղը, այլ նրա մի փոքր մասը, սեփականատերները: Համենայն դեպս համայնքի մեացած անդամները, ֆետրալի և նրա ընտանիքի հզորութայն ուժեղացումով, դառնում են ե՛լ ավելի շատ կախված նրանից: Սակայն ֆետրալները քիչ են հոգում ցեղի սեփականագուրկ անդամների մասին: Նրանք զբաղված են պատերազմներով և սուվերենի ու թագավորի պալատն այցելելով: Նրանք ավելի շատ զբաղված են իրենց անհատական պահանջների բավարարումով, քան թե ցեղի աղքատացող անդամների կարիքներով:

Անհրաժեշտ էր մի նոր կազմակերպութուն, վոր իր հովանավորութայն տակ առներ ցեղի աղքատ անդամներին և նրանց ոգնութայն հասնելու: Այդպիսի կազմակերպութուն հանդիսացավ կաթոլիկ յեկեղեցին:

Կաթոլիկ յեկեղեցին.—Յեկեղեցու հասարակական դերը զարգացավ մի շարք դարերի ընթացքում: Վորչափ խորն էր ընկնում ստրկատիրական հասարակութունը, նույնչափ լայն ծավալումն և սերտ կազմակերպութուն էր ստանում կաթոլիկ յեկեղեցին: Յեկեղեցին իրերի բերումով հարկադրված յեղավ իր վրա վերցնել կազմակերպչական գործունեյութունը՝ բավարարելու համար հասարակութայն այն ընդհանուր պահանջները, վորոնց մասին հոգ չէր տանում անդադար պատերազմող և քայքայվող ֆետրալական աշխարհը:

Կաթոլիկ յեկեղեցին հանդես և գալիս տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի ասպարեզում հենց այն ժամանակ, յերը համայնքի անդամների դասակարգային շահերը լարվեցին առանձնապես: Փոքրթիվ մարդկանց հարստութայն և մասնավոր սեփականութայն մեծացումը բերավ իր հետ ժողովրդի ահագին մասսաների քայքայումն և աղքատութուն, իսկ կաթոլիկ յեկեղեցին միակ կազմակերպութունն էր, վոր իր վրա վերցրեց այդ սեփականագուրկները հոգացութունը: Յեկեղեցին պարապելով բարեգործութայնը, վոչ միայն տալիս, այլ և ստանում էր: Յեկ նա ստանում էր ավելի շատ, քան տալիս էր աղքատներին: Յեկեղեցին իր ցույց տված ինամքի համար ստիպում էր ճշտութայնը վճարել: Ոգավելով այն հանգամանքից, վոր իր բարեգործութայն շնորհիվ ժողովրդական մասսաների վրա ահագին ազդեցութուն էր ձեռք բերել, յեկեղեցին դարձավ քաղաքական և տնտեսական կենտրոն: Հարուստ սեփականատերերից և թագավորներից ստանալով մեծամեծ նվերներ և հողամասեր, նա անմիջանկարծապես կորցում էր աշխատավոր ժողովրդից «տասանորդ», այսինքն ամեն մի գյուղացու հունձի մի տասներորդական մասը: Այդպիսի պայմաններում յեկեղեցու ամբարները միշտ էլ լի էյին, և նրա համար վոչինչ չարժեր ժամանակ առ ժամանակ բանալ այդ ամբարները ժողովրդի համար, յերը դրա փոխարեն ստանում էր հարյուրապատիկ ավելի:

Թե յեկեղեցու տնտեսական հզորութունը վորչափ էր ուժեղ, կարելի չէ դատել յեկեղեցական գույքերի այն-ցուցակներից, վոր կազմված էյին Ֆրանսիայում Մեծ Հեղափոխութայն ժամանակ: Համաձայն այդ տվյալների կոմբեղիում յեկեղեցուն էր պատկանում ամբողջ հողերի 1/3-ը, այսինքն ամբողջ հողի յերեք չորրորդից ավելին, Ենգոյում և Արտուայում—յերեք չորրորդը, Ֆրանչիսնում, Ռուսիյանում և Ելգասում կեսը և այլն (Լուի Բլան

— «Ֆրանսիական Հեղափոխութեան Պատմութիւն»): Գերմանիայում 1786 թվին յեկեղեցուն պատկանում եր 1,424 քառակուսի մղոն հողային տարածութիւն:

Հետեւաբար յեկեղեցին ֆեոդալական խոշոր սեփականատերերից մեկն եր հանդիսանում Նա ևս վարում եր ֆեոդալի նըման իր ճորտական հողագործական անտեսութիւնը: Նրա մոտ ևս գյուղացին գտնվում եր ճորտական կախումի մեջ: Յեկեղեցին մի ձեռքով տալիս եր, իսկ մյուսով հարյուրապատիկ ավելի յեր հավաքում նույն այդ սարուկ-դուղացիներէ: Շնորհիվ իր անտեսական հողորութեան, նա խաղում եր քաղաքական խոշոր դեր: Յեկեղեցին ոգնութիւն եր ցույց տալիս վոչ միայն աղքատացած առանձին գյուղացիներին կամ քաղաքացիներին, այլև ոգնում եր անդադար պատերազմող ֆեոդալներին: Անցնելով սրա կամ նրա կողմը, նա կանխորոշում եր պատերազմի յերջը: Յեկեղեցին, շնորհիվ իր հզորութեան, հաճախ իր պայմաններն եր թելադրում թագավորներին կամ դառնում եր թագավորի խորհրդատուն կամ ղեկավարը:

Յեկեղեցին ուժեղ եր վոչ միայն իր անտեսական և զինվորական հզորութեամբ, այլև այն ժամանակների կուլտուրական կենտրոնն եր: Յեկեղեցին շինում եր դպրոցներ, ժողովրդին սովորեցնում եր, առաջ մղում տեխնիկան: Նա պարագում եր վոչ միայն հողագործութեամբ, այլև ծաղկեցրեց արհեստները: Յեկեղեցին սովորեցրեց գերմանացիներին հողագործութեան ամենալավ յեղանակը: Հողերական անձինք ծանոթացրին նույն այդ գերմանացիներին արվեստի և կատարելագործված արհեստների հետ: Յեկեղեցին հովանավորում եր քաղաքներին և աջակցում առևտրի զարգացմանը:

Խոշորագույն շուկաները մեծ մասամբ կառուցված եյին յեկեղեցիներէ մեջ կամ նրանց մոտ: Յեկեղեցին հոգ եր տանում ամեն կերպ այն մասին, վոր գնողներին քաշեր այդ շուկաները: Յեկեղեցին հոգում եր նաև առևտրական մեծ ճանապարհների մասին: Յեկեղեցու համար առևտրական հարաբերութիւններն այնքան կարևոր եյին թվում, վոր նա անհրաժեշտ եր համարում հրեաների հետ հարաբերութեան մեջ մտնել, վորպես բարձրագույն կուլտուրայի ներկայացուցիչների հետ, յերկար ժամանակ պապերը հրեաներին պաշտպանում և աջակցութիւն եյին ցույց տալիս, ուրախութեամբ իրենց մոտ եյին ընդունում նրանց յեվ աշխատում եյին գրավել իրենց կողմը, համարել վ նրանց ըստ ըրագույն կուլտուրայի ներկայացուցիչներ: Միայն այն ժամանակ

յերբ քրիստոնյա վտճառականները սովորեցին վարել իրենց առևտրական գործերը և կազմակերպեցին առևտրական ձեռնարկներ հրեաներից վոչ վատ, այն ժամանակ սխրվեց հալածանքը հրեաների դեմ, վորպես քրիստոնեաների դեմ մրցողներ:

Բայց յեկեղեցին իր գործունէութեան մեջ առաջնորդվում եր վոչ միայն դեպի մերձավորը տածած սիրո գրգռմանը: Նա հետապնդում եր նաև իր անձնական նպատակները: Յեկեղեցին ըմբռնեց, թե վորչապ ուժեղ անտեսական գրութիւն ունենա, նույնչապ ել ուժեղ կը լինի իր քաղաքական իշխանութիւնը: Այդ պատճառով յեկեղեցին ցուցահանեց անչապ ազահութիւն հողային սեփականութիւն կուտակելու գործում: Հողերն հափշտակելով, նա վորպես ֆեոդալ, թեև հողերական, հպատակեցրեց իրեն այդ հողի վրա սպորողներին: Հողային կալվածքներով և «տասանորդներով» չբավականանալով, յեկեղեցին բարեպաշտական գործերի համար կազմակերպեց տուրքերի ամենալայն սխտեմ: Այդ տուրքերը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծանում և ծանրլում եյին դառնում աշխատավոր ժողովրդի վրին:

Վոչ միայն ժողովրդական լայն մասնաների, այլև ֆեոդալների և թագավորների վրա ազդելու համար հարկավոր եր, վոր յեկեղեցին ամուր, կանոնավոր կազմակերպութիւն ունենար: Միացման այն տիպը, վորի մեջ նա ձուլվեց, խիստ կենտրոնացած եր, բանակի նման վերեից ներքև: Ստորին անդամները հպտտակվում եյին վերիններին: Բարձրագույն իշխանութիւնը կենտրոնացած եր մի մարդու — պապի ձեռքին:

Արհեստավորները.— Տեխնիկայի զարգացումով, մարդկանց վրա բնութեան ունեցած իշխանութեան թուլացումով, առանձին համայնքների աշխատանքի բաժանումն ու փոխանակական հարաբերութիւններն ավելի ու ավելի զարգանում ու ծավալվում եյին: Կոմունիստական և նահապետական հասարակութիւնների բնական անտեսութիւնը, վորի ժամանակ համայնքի բոլոր պահանջները բավարարված եյին համայնքի միջոցով, նրա ներսում փոխարինվեցին փոխանակական անտեսութեամբ: Աշխատանքի բաժանումն առանձին համայնքների միջև այնպիսի չափեր ընդունեց, վոր ամեն մի առանձին հասարակութիւն առանց ոգնութեան, առանց զրացիների հետ մթերքներ փոխանակելու գոյութիւն ունենալ չեր կարող: Ֆեոդալական համայնքում ևս համայնքի առանձին անդամների միջև կատարվեց աշխատանքի լիա-

կատար բաժանումն: Մինչդեռ նահապետական հասարակութեան անդամը միաժամանակ պարսպում էր թե հողագործութեամբ, թե անասնապահութեամբ, թե արհեստով, միացնելով իր անձի մեջ յերկրագործին և արհեստավորին, — ֆեոդալական հասարակութեան մեջ կատարվում է մասնագիտացումն: Հողագործը պարսպում է միայն յերկրագործութեամբ, արհեստավորը միայն իր արհեստով:

Արհեստավորի աշխատանքի արդյունքը գլխավորապես փոխանակման առարկա չէ: Այդ պատճառով անհրաժեշտ է, վոր նա գտնվի փոխանակման կենտրոնին — շուկային մոտ: Սովորաբար շուկաները սարքվում էին անցուղարձի մեծ ճանապարհի վրա: Ծնորձիվ իրենց ունեցած հարստութեան, շուկաները զրացի ժողովուրդների տենչանքի առարկան էին կազմում և վերջիններս հարձակվում էին նրանց վրա թալանելու համար:

Շուկա կոչվող հրապարակը հարձակումներից պաշտպանելու համար շրջապատում էին պարիսպներով, յերբեմն էլ խոր փոսերով: Հրապարակի այդ սահմանները հիմք հանդիսացան քաղաքներ կազմելու համար: Յեւ գեպի այդ քաղաքներն էլ վաղեցին գլխավորապես արհեստավորները:

Հարկատու լինելով ֆեոդալին, արհեստավորները տալիս էին նրան վորոշ հարկ իրենց արտադրած ապրանքներով կամ փողով, իսկ մնացած ամեն բանում գրեթե ազատ մարդիկ էին: Գտնվելով քաղաքներում, հեռու համայնական պահպանողական իրավակարգից և տիրոջ ճնշումից, միացած լինելով հարստութեան արտադրողների ընդհանուր շահերով, արհեստավորներն սկսեցին միանալ արհեստավորական-քաղաքական միութեանների մեջ: Ժամանակի ընթացքում այդ միութեաններն այն աստիճան հզորացան, վոր կարողանում էին յերբեմն պաշտպանել իրենց անդամներին աշխարհական և հոգևորական ֆեոդալների լսիստ լայն ախորժակներից: Իսկ այնտեղ, ուր արհեստավորների միութեանները գգում էին, վոր չէին կարող պաշտպանել իրենց, գիմում էին մերթ հոգևորականների, մերթ աշխարհական ֆեոդալների ոգնութեանը: Իսկ ընդհանրապես արհեստավորները քաղաքների մեջ իրենց գգացին իրեն վոչ միայն անտեսական, այլև քաղաքական վորոշ ույժ:

Արհեստավորների համեմատական անտեսական անկախութեանը ավեց այն ժամանակվա համար մարքիմալ հոգեկան անկախութեան: Արհեստը, ազատ լինելով համայնական արտադրական շրջանակի շղթաներից, ավելի քիչ արգելքների յեր հանդի-

պում տեխնիքական գործի զարգացման առաջադիմութեան մեջ: Ֆեոդալը, հազվագեպ բառացութեամբ, չէր սահմանափակում արհեստավորի զարգացումը, վորովհետև նա ինքը շահագրգռված էր այդ զարգացումով: Ընդհակառակը, արհեստավորի արհեստը նույն իսկ քաջալերվում էր սեփականատեր գասակարգի կողմից, վորովհետև նրան տալիս էր փոխանակման և շտաշութեան ավելի կատարելագործված առարկաներ: Այդ պատճառով արհեստավորը չնայած, վոր ֆեոդալի իշխանութեան տակ էր և փաստորեն նրա ճորտը, այնուամենայնիվ իր զարգացման ճանապարհին ավելի քիչ խոչընդոտների յեր հանդիպում, քան հողագործ գյուղացին:

Փեոդալական հասարակութեան կուլտուրական վիճակը. — Ֆեոդալական հասարակութեանը նշանակում է անցումն գեպի կուլտուրական զարգացման բարձր շրջանը: Յերկաթը սկսեց ծառայել մարդուն: Ֆեոդալիզմի հետ սկսվում է վոչ միայն յ'րկաթի սրի, այլ և յերկաթե գուլթանի և կացնի ժամանակը: Յերկաթի գործածումով լայն չափերով տարածվեց հողագործութեանն ու անտառային հողերը փոխվեցին վարելահողերի: Յերկաթն արհեստավորին տվավ քարերից և մնացած բոլոր մետաղներից էլ ավելի սուր ու պինդ գործիքներ:

Յեղերն ու նրանց միութեանները տեղափոխվեցին քաղաք և այդ քաղաքը շրջապատեցին պարիսպներով ու աշտարակներով: Նրանք ապրում էին քարաշեն կամ աղյուսաշեն տներում. սա կառուցման արհեստի առաջադիմութեանն էր: Արագութեամբ զարգանում էր հարստութեանը, բայց նա պատկանում էր առանձին անձանց, առանձին ընտանիքների: Զուլճակութեանը, մետաղի մշակումը և ուրիշ արհեստներ իրենց արտադրութեանը բազմակողմանի զարձարին: Գյուղատնտեսական մթերքներին — հացահատիկներին, ընդդեմին և զանազան բանջարեղեններին — ավելացավ յուզն ու գինին:

Միևնույն մարդն արդեն չէր կարող պատրաստել այդպիսի տարբեր արտադրութեաններ:

Վրա հասավ աշխատանքի քաժանման յերկրորդ մեծ ժամանակը: Արհեստն առանձնացավ հողագործութեանից: Արտադրութեան յերկու գլխավոր ճյուղերի — հողագործութեան և արհեստի — բաժանումով ծագում է արտադրութեանը բացառապես փոխանակելու նպատակով: Սկսվում է ապրանքների արտադրութեանը, այսինքն այնպիսի մի գրութեան, յերբ շուկայում ապ-

բանք շատ կա, իսկ դնողը—գյուղացին կամ արհեստավորը—
չնորհիվ շահագործման միջոցներից զրկված լինելուն անկարող և
գնել իր համար ամենամանրածեղ մթերքը, իսկ զրա հետ միա-
ժամանակ զարգանում և վոչ միայն ցամաքային, այլ և ծովային
առևտուրը:

Այդպես և ֆեոդալական հասարակութան տնտեսական գրու-
թյունը: Իսկ նրանից բղխող հասարակական փոխհարաբերություն-
ները և անձի դերն այսպես են. այժմ, բացի ազատներից և ստրուկ-
ներից, հանդես են գալիս հարուստներ և աղքատներ: Աշխատան-
քի նոր բաժանումով վրա յե հասնում հասարակութան դասա-
կարգերի բաժանումը:

Հակառակ կոմունիստական հասարակութան, նրա հավա-
սարութան և յեղբայրութան, ֆեոդալական հասարակութունը
հիմնված էր անձի շահագործման և ճնշման վրա: Համայնքի ան-
դամ գյուղացու անձի վրա ծանրանում էր համայնքի հեղինակու-
թյունը նրա հնավանդ սովորություններով, հավատալիքներով և
ավանդություններով, վորոնք ճնշում էին ամեն մի առանձին
անձնավորութան կամքի ազատ արտահայտությունը: Համայնքից
հետո գալիս էր ֆեոդալը, համայնքի ամեն մի առանձին անդամի
կյանքի և մահվան տերն ու տնօրենը: Ֆեոդալն էր հավաքում
հարկերը և յեկամուտը ճորտական աշխատանքի և բահրայի ձևով:
Նա նաև որինսղիւր և դատավոր էր: Յեկեղեցին ևս իր կողմից
համայնքի և նրա ամեն մի անդամի վրա նայում էր, իրբև յեկա-
մբարի մի առանձին աղբյուրի վրա և իր ոգտին կորզում էր տա-
սանորդներ և ուրիշ որինական թե ապորինի տուրքեր: Յեկեղե-
ցին համայնքը շահագործում էր վոչ միայն նյութապես, այլ և
համայնքի անդամներին փաթաթում էր իր կրոնը և նրանց կաշ-
կանդում իր հեղինակությամբ:

Համայնքի անդամ գյուղացին շրջապատված էր տերերի
սեղմ ողակով, վորոնցից ամեն մեկը նրան յենթարկում էր իր կամ-
քին: Գյուղացին զրկված կամքից, հարստահարված, վորպես
համայնքի անդամ, փոխանակ ազատության ծգտելու, իր սե-
փական ընտանիքում մտցնում էր այդ հարստահարության
և ճնշման վ. գին: Ընտանիքի հայրը—նրա գլուխը—ընտանիքում
և թագավոր, և աստված էր: Նա իր տանը դաստիարակվածնե-
րից պահանջում էր իր կամքին լիակատար հպատակություն:
Նա կարող էր վճռել իր կնոջ և յերեխաների կյանքի և մահու
խնդիրը: Իր ընտանիքի անդամների ազատության ամեն մի ձրդ-

տումը նա նույնպես անողորմ կերպով էր ճնշում, ինչպես համայն-
քը ճնշում էր ամեն մի անդամի նման ձրտումը:

Համայնքի տերերը, ֆեոդալները և յեկեղեցին, միմյանցից
զանազանվում էին նրանով, վոր ֆեոդալը առավելապես
ներկայանում էր իրբև զինվորական ույժ, իսկ յեկեղեցին իր
վրա նայում էր, վորպես կուլտուրայի, լույսի և գիտության կրո-
ղի վրա: Սակայն, յեկեղեցու գիտությունը ծառայում էր վոչ թե
ժողովրդին, այլ իշխանավորներին: Յեկեղեցու զարգացրած և տա-
րածած գիտությունը կրոնի սպասավորն էր: Իսկ կրոնը ամեն
ժամանակ իշխանավորների, տնտեսապես ուժեղների սպասավորն
էր: Յեկեղեցին իր ծագման մոմենտից դաշն կնքեց վոչ հա-
սարակալթյան ճնշված անդամների հ տ, վոչ ել ստրուկների
եւ գյուղացի երի յետ: Յեկեղեցին վոչ միայն չազատեց
ստրուկներին, այլ յեվ ի՞րը դարձավ ավելի խտրո ստրկատեր:
Յեկեղեցին վոչ միայն չբողոքեց գյուղացու ճորտական կախ-
ված դրության դեմ, այլ աստծու անունից որնեց մարդու
ճնշումը, նանուն սեփականատերերի իշխանության ուժեղ ց-
ման: Ինքը ճորտատեր լինելով, ընականաբար չէր կարող
կովել ճորտատիրական իրավունքի դեմ:

ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանր բուրժուական հասարակության հիմնական գծերը.— Նատուրալ տնտեսութեան վրա ծագած ֆեոդալական հասարակութեանը, շնորհիվ իր արտադրական ուժերի արագ զարգացման, սկսեց խիստ արագութեամբ վերակազմվել մանր բուրժուական տնտեսութեան:

Մանր բուրժուական հասարակութեան հիմքն է արտադրութեան խիստ բաժանումը սպառողից: Մի տեղ արտադրված մթերքն սպառվում էր շատ հեռու տեղեր, այնպիսի տեղեր, վորոնք արտադրողներին բոլորովին անձանոթ էլին: Ինչպես նատուրալ տնտեսութեան ժամանակ էր, յերբ գյուղացին արտադրում յեզ ինքն էլ ոգտվում էր նրանից, այժմ արտադրողը, սպինքն բանվորը դարձարեց անմիջական սպառող լինելուց: Այժմ բանվորն արտադրում է քիչ քանակութեամբ ծախսելու համար: Հանուն առևտրական շուկաների ընդարձակման, հանուն փոխանակման զարգացման, մանր բուրժուական հասարակութեանը զբաղվում էր ճանապարհների բարելավումով, կամուրջներ և մեծ նավեր շինելով: Տեխնիկայի զարգացումն ու ազգայնականութեան բանակի աճումը թույլ տվին մեծացնել հասարակական աշխատանքը:

Շնորհիվ հաղորդակցութեան ճանապարհների զարգացման, դյուրացավ ճանապարհորդութեանը: Ժանապարհորդութեանը լայնացնում է մարդկանց մտավոր հորիզոնը, տալիս է գիտելիքների նոր պաշար, տալիս է ծանոթութեան ուրիշ յերկրների մասին, ծանոթութեան ուրիշ ժողովուրդների բարքերի և սովորոյթների մասին: Փուլ յեկան դարավոր ավանդները, վորոնք կասեցնում էլին անձի ամեն մի ազատ զարգացում: Թուլացավ իշխանութեանը մարդու վրա:

Մանր բուրժուական հասարակութեան արտադրական յեզ բաշխողական հարաբերութեանը.— Թվում էր, թե մարդկանց գիտելիքների զարգացումով, մտավոր հորիզոնի լայնացումով, բնութեան իշխանութեանից ազատումով մարդկային անձնավորութեանը պետք է դառնա ազատ: Բայց մանր բուրժուական հասարակութեանը իր հետ բերում է իսկապես վոչ թե աշխատավորների ազատագրումն, այլ նրանց ճորտացում:

Մանր բուրժուական արտադրական հարաբերութեանը կրում են յերկրի մի բնույթ: Ամեն մի արտադրող, այսինքն ամեն մի բանվոր կարող է ազատորեն արտադրել այն, ինչ նա ցանկանում է: Նա ինքն է կազմակերպում իր արտադրութեանը, բայց արտադրում է վոչ թե իր համար և վոչ էլ իր ընտանիքի, այլ շուկայի համար: Այն ժամանակ, յերբ նահապետական և ֆեոդալական հասարակութեանների մեջ շուկայի հանվում մթերքների ավելորդը միայն, մանր բուրժուական հասարակութեան մեջ շուկայի հանվում արտադրութեան ամբողջ արդյունքը: Կոշկեղեն արտադրող կոշկակարը բոբիկ է քայլում, վորովհետև իր արտադրած կոշկեղենը նա փոխանակելու չի հացի հետ: Այլապես նա սովամահ է լինելու: Մետաքս գործող շուկայի վոչ միայն մետաքս չի հաղնում, այլ և խիստ հաճախ իր և յերեխայի համար չիթ գնելու փող չի ունենում: Արհեստավորն իր արհեստն ընտրելու դործում ազատ լինելով, մթերքների բաշխման գործում զրկված է ամենայն մի ազատութեանից: Նրա աշխատանքի արդյունքը վոչ թե իրեն է պատկանում, այլ շուկային, այսինքն փոխանակումը կազմակերպողին—վաճառականին:

Վորովհետև մանր բուրժուական կամ փոխանակական հասարակութեան մեջ արտադրութեանը բաժանված է մի շարք մանր տնտեսութեանների միջև, վորոնք կապված չեն զեկավար նահապետի միասնական կամքով, վորովհետև արդյունքների բաշխումը կրում է անկազմակերպ բնույթ, այդ պատճառով էլ զարգանում է ամեն մի առանձին տնտեսութեան կախումը մյուս բոլոր տնտեսութեաններից:

Իսկ ընդհանրապես փոխանակական տնտեսութեան մեջ, այսինքն մի տնտեսութեան, ուր ամեն ինչ արտադրվում է ծախսելու համար, արտադրութեանը և սպառումը այլևս չեն կանոնավորվում: Նահապետական հասարակութեան կազմակերպիչը պետք հանուն ցեղի ծագման հիմքեր վոչ միայն արտադրութեան կանոնավոր կազմակերպութեան, այլև և բաշխում: Արտադրութեան կազ-

մակերպիչը կազմակերպիչն է նաև բաշխման և փոխանակման: Նա իրավունք ունի փոխանակելու միայն ավելորդ միջերջները, վորոնք պետք չեն ցեղին: Յեղի կազմակերպիչը չի կարող վերցնել ցեղի համար սնման շաղկապես անհրաժեշտ միջերջները և փոխանակել: Գործածություն միջերջների պակասությունը առաջ կը բերի ցեղի թուլացումն և վոչնչացումն: Իսկ ցեղի բարորությունն համար պատասխանատու յե ցեղի կազմակերպիչը:

Մանր բուրժուական հասարակության մեջ գործը բոլորովին այլ կերպ է: Մի կազմակերպիչ կամքի վոչնչացումով և մասնավոր սեփականության ծագումով ամբողջ հասարակությունը բաժանվում է յերկու մասի—աշխատողների և սպառողների: Աշխատողն ինքը չի տեսնում սպառողին և նրա հետ վոչ մի փոխաբարեբություն մեջ չի մտնում: Նրանց միջև միջնորդ է դառնում փոխանակման գեկավարը—վաճառականը: Վաճառականը վոչ մի գործ չունի արտադրողի և նրա բարորության հետ: Նրան պետք է միայն շահ: Շահ տալիս է սպրանքը: Այդ սպրանքը նա ստանում և բաշխում է: Արտադրողի, ինչպես և սպառողի ցավերով և ուրախությունը նա չի յեղ հետաքրքրվում:

Վորովհետև սպրանք արտադրող բանվորի և սպառողի միջև կապ չկա, ուստի ստացվում է այնպիսի մի դրություն, վոր բանվորին բոլորովին անհայտ է, թե տվյալ մոմենտում նրա սպրանքը պետք է, թե վոչ, շուկայում իր աշխատանքի արդյունքը գնող գտնելու յե, թե վոչ: Յերբ արտադրությունն ու բաշխումը չեն կանոնավորվում, կարող է ստացվել մի այնպիսի դրություն, վոր կոչակարը, ջուրհակը, սպրանք դուրս բերելով շուկա, չեն կարող գնողներ գտնել կամ գնողները բավական չեն լինում: Յենթագրեք, թե շուկա յե բերված հարյուր դոյգ կոշիկ, հարյուր կոստյում, իսկ գնողներ կան ընդամենը միայն հիսուն, հետևաբար հիսուն դոյգ կոշիկ և հիսուն կոստյում մնում են չծախված:

Բանից դուրս է դալիս, վոր կոչակարների և գերձակների մի մասը արտադրել են սպրանքներ, վորոնք վոչ վորքի պետք չեն: Նրանց աշխատանքը տվյալ մոմենտում դարձել է անսոցուտ: Սակայն կոչակարին և գերձակին, վորոնց չաջողվեց այսոր իրենց սպրանքը ծախել, չի կարող հանգստացնել այն գիտակցությունը, թե նրանք արտադրել են ավելի շատ կոշիկ կամ կոստյում, քան անհրաժեշտ էր, և այդ պատճառով նրանք պետք է յիտ տանեն տուն: Տանը նրանց սպասում են քաղցած կինն ու յերեխաները:

Բանվորն իր սպրանքը չծախելով, հաց գնել չի կարող: Հետևաբար նրան անհրաժեշտ է իր սպրանքը ծախել ինչպես էլ վոր լինի: Բայց վորովհետև բոլոր կոչակարներն ու գերձակներն իրենց սպրանքը ծախելու յեն ինչպես էլ վոր լինի, ուստի նրանցից ամեն մեկը սկսում է իր սպրանքն առաջարկել ավելի պակաս գնով, քան նա արժե իրեն, արտադրող բանվորին: Շուկայում սկսվում է վաճառողների պայքար: Ամեն մեկն սպրանքի գինն իջեցնում է, միայն թե ծախի: Շուկայում գտնված սպրանքի շատությունից սղտվում են գնողները: Տեսնելով, վոր շուկայում սպրանքը շատ է, սպառողն աշխատում է նրանց գնել հնարավորության չափ եժան: Սկսվում է ծախողների կռիվ միմյանց հետ և գնողի կռիվը ծախողի հետ: Սպրանքի գինն սկսում է իջնել սպրանքի իսկական արժեքից. շուկայում սկսվում է մըրցում:

Ծագած մրցումից զլխավորապես վնասվում է բանվորը: Իր սպրանքն ավելի պակաս գնով ծախելով, քան նա արժե իր համար, նա դրանով քայքայում է իր անտեսությունը:

Ճիշտ է, կարող է ստացվել նաև այնպիսի մի դրություն, յերբ շուկայում ավելի շատ գնողներ լինեն, քան ծախողներ, այն ժամանակ սպրանքը բոլորին չի բավականանա: Այդ ժամանակ բարձրանում է սպրանքի գինը: Ամեն մի գնող, վորին անհրաժեշտ է սպրանքը, համաձայնում է ավելի թանգ վճարել, միայն թե գնե այն՝ ինչ անհրաժեշտ է իրեն: Սակայն իր սպրանքը թե գնե այն՝ ինչ անհրաժեշտ է իրեն: Սակայն իր սպրանքը շուկա տանող բանվորը նախորդ չի իմանում, թե շուկայում վորչափ սպրանք կը լինի, այսինքն վորչափ առաջարկ կը լինի և վորչափ գնողներ կը լինեն, այսինքն՝ վորչափ պահանջ կը լինի: Նա իր սպրանքը ծախելու յե այն ժամանակ, յերբ պատրաստ է, վորովհետև իրեն անհրաժեշտ է գնել հաց: Իսկ ինքը պատրաստ է, վորովհետև իրեն անհրաժեշտ է գնել հաց: Իսկ ինքը չունի վոչ մի պաշար: Նա չի կարող սպասել, թե յերբ կը հասնի այն բաղդավոր օրը, յերբ շուկայում կը լինեն ավելի շատ գնողներ, քան թե սպրանք կը լինի: Նա ստիպված է ծախել և միշտ ծախել: Յեով յեթե հանգամանքները նրա համար նպաստավոր չեն, նա քայքայվում և դառնում է պրոլետար, այսինքն արտադրական գործիքներից զուրկ բանվոր:

Հանդես է գալիս վաճառականի վսեմ կերպարանը: Յերբ շուկայում սպրանքը իրատ շատ է և նրա գինն ընկած, վաճառականը գնում է այդ սպրանքը: Նա կարիք չունի իր գնած սպրանքը իսկույն ծախելու: Նա իր ընտանիքի համար առատ

հաց ունի: Նա կարող է ապրանքը թողնել վոր ֆնա: Յեկ նրա ապրանքն սպասում է իր հերթին, մինչև վոր շուկայում ավելի շատ գնողներ լինեն, քան ապրանք կը լինի: Այն ժամանակ վաճառականը իր պահեստից դուրս է բերում իր ապրանքը և շուկա հանում ծախելու: Դրանով նա կանոնավորում է ապրանքի գները, նրա քանակը գնողների հետ հավասար դարձնելով: Նա կանոնավորում է պահանջն ու առաջարկը և դրանով թուլացնում է մրցումը:

Բայց նա իր միջամտությունները վերջնականապես դիմադուրի է անում արտադրող բանվորին: Բանվորն այժմ իր արհեստանոցից դուրս չի գալիս: Նա վորպես մեքենա միայն արտադրում է արտադրում է: Նրա աշխատանքի արդյունքի հետագա բաղվելու են անհայտ է: Նա չգիտե, թե ով է հագնելու իր կարած կոշիկները—թագավորը թե ստրուկը: Նա չգիտե, թե իր արտադրած հացով ով է սնվելու—աղատություն համար կովճղը, թե բանտարկողը: Նրան անհայտ է նաև, թե վորտեղ է ծախվում իր ապրանքը—ի՞ր գյուղում, քաղաքում, թե վորևե այլ հեռավոր վայրերում, հեռավոր իշխանապետություններում: Այն, այդ նրան չի յեղ հետաքրքրում: Նրան հետաքրքրում է միայն մի բան—ի՞ր ապրանքը ծախել:

Այստեղ ևս նա զգում է, վոր ամբողջությամբ գտնվում է վաճառականի իշխանության տակ: Վաճառականը կարող է գնել կամ չգնել նրա ապրանքը: Հետևաբար վաճառականը արտադրողին կարող է թելադրել իր պայմանը:

Բայց վաճառականն ևս բացարձակորեն ազատ չէ: Նա շուկայում մենակ չէ, այլ կան ուրիշ վաճառականներ ևս: Յեկ այդ բոլոր վաճառականները շահագրգռված են ծախելու իրենց ապրանքը: Ամեն մի վաճառական շուկա յե բերում իր ապրանքը: Բայց այժմ ևս, շնորհիվ ապրանքի արտադրության և բաշխման անկազմակերպության, շուկայում կարող է ավելի ապրանք լինել, քան այդ որևէ համար անհրաժեշտ է: Այդ ժամանակ նորից հրապարակ է գալիս մրցումը, բայց այս անգամ վոչ թե յերկու առանձին բանվոր-վաճառողների, այլ վաճառականների միջև: Մըրցումը թուլացնելու համար վաճառականները ժամանակ առ ժամանակ դաշն են կապում իրար հետ: Նրանք պայմանավորվում են ապրանքը գնել և ծախել միասին, նրանք կազմակերպում են այսպես կոչված տրիկտ: Նրանք դրանով իրենց ապատում են մրցու-

մից: Շնորհիվ այդ միություն, նրանք կարող են թելադրել իրենց գները թե բանվոր-արտադրողին, թե գնողին:

Փոխանակումը կազմակերպող վաճառականն ունի մի ուրիշ առավելություն ևս: Նա ժամանակ առ ժամանակ միանձնական իրավունք է ստանում արտադրելու յեկ ծախելու միջոցները: Այդ միանձնական իրավունքը, վոր կոչվում է մոնոպոլիա, հասարակություն է տալիս մոնոպոլիստ-վաճառականին թելադրելու իր պայմանը թե արտադրողին, թե սպառողին: Այդպիսով, շնորհիվ մրցման լիակատար բացակայություն, մոնոպոլիստը շահագործում է ամբողջ հասարակությունը:

Մանր բուրժուական հասարակություններին հարաբերությունները. Մանր բուրժուական հասարակության տիպիկ ընտանիքը արհեստավորի ընտանիքն է: Արհեստավորի ընտանիքը փաստորեն հիմնված է զուտ արտադրական հարաբերությունների վրա: Ընտանիքի հայրը արտադրության կազմակերպողն ու հրամայողն է: Բանվորական ուժի կազմում են վորդիները: Արհեստավորի կիներն ու աղջիկները դեռևս պարապում են բնական տնտեսությունը, սակայն այժմ վոչ թե ամբողջ համայնքի, այլ միայն իրենց ընտանիքի սահմաններում: Արհեստավոր ընտանիքի անդամ կանայք կերակուր են պատրաստում, լվացք անում, կարում են, գործում, բանջարանոց մշակում, մի խոսքով իրենց տնտեսությունը սահմաններում պարապում են պարզ և բազմակողմ տնտեսության սահմաններում պարապում են պարզ և բազմակողմ տնտեսության սահմաններում: Բայց վորովհետև կիներ չի պարապում արմանի աշխատանքով: Բայց վորովհետև կիներ չի պարապում արտադրական աշխատանքով, այսինքն շահ բերող աշխատանքով վորովհետև կիներ տնտեսությունը վարում է ի հաշիվ տղամարդու վաստակի, ուստի և մանր բուրժուական հասարակության մեջ այդ աշխատանքի մասին կազմվում է այնպիսի մի գաղափար, թե այդ աշխատանքն աննշան և անկարևոր է: Կիներ իր աշխատանքով տուն չի բերում շահ, հավելյալ արժեք և այդ պատճառով նա և իր աշխատանքը նկատվում են վորպես մի յերկրորդական, անկարևոր բան: Այդ պատճառով մանր բուրժուական հասարակությունը սկսում է կոտորել իր նայել, վորպես պարագիտի վրա: Սակայն նա բոլորովին պարագիտային կյանք չի վարում, այլ աշխատում է գիշեր-ցերեկ, զբաղվում է տնտեսությունը և կատարում է իր քաղաքացիական պարտքը—ծնում է յերեխաներ և նրանց դաստիարակում:

Բացի վարպետներից, արհեստավորների արտադրական աշ-

թյունը: Պրավոսլավ յեկեղեցին ևս կրօնի ասպարեզում վորոնում-
ների դեմ վարած կռիվի գործում յետ չեր մնում կաթոլիկ յեկե-
ղեցուց: Պրավոսլավ յեկեղեցու պատմության մեջ ազանդավոր-
ների կրած հալածանքները քիչ տխուր եջեր չեն բնում:

Փառասիրությունը կործանեց յեկեղեցուն:

Մնանկացած, ազահ, դաժան յեվ անողոր յեկեղեցու տեղ
յեկավ մի նոր իշխանություն, բացարձակ միահեծանի, ինք-
նակալ-ցարի, վաճառականների պաշտպանի իշխանությունը:

Աստու անունով չեր, վոր կոչված եր ցարը: Աստուց չեր,
վոր ոճված եր նա: Մ ա վարոջ անտեսակ ևն դարաշրջանի ար-
գասիք եր: Մորածագ վաճառական դասակարգին անհրաժեշտ
եր մեկը, վոր պաշտպաներ իրեն, պաշտպաններ խոշոր նյութա-
կան հարստություններ, յեվ այդ պաշտպանը հանդիսացավ ինք-
ն սկալ-միսպետը, վաճառականների իշխանավորը, ինքը զըլ-
խավոր վաճառականը:

Գ Լ Ո Ի Խ VII.

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Գիտության և տեխնիկայի զարգացումը իր հետ բերավ արտա-
դրության ընդհանուր աճումն: Արտադրության աճումն իր կողմից
առաջացրեց ուժեղացած փոխանակումն, առևտրի արագ զարգա-
ցում: Տնտեսական անհրաժեշտությամբ կյանքի կոչված վաճառա-
կան գասակարգն այնպիսի անհրաժեշտ և անխուսափելի մասն է
բուրժուական հասարակության, վորպիսին եր իր ժամանակին
նահապետը—նահապետական հասարակության արտադրության և
բաշխումի ղեկավարը:

Այն ժամանակից, յերբ արտադրողը զադարեց բացառապես
միայն տեղական շուկայի համար արտադրել, յերբ ապրանք ար-
տադրող բանվորը և այդ ապրանքը սպառողը կորցրին իրար միջի
կապը, յերբ նրանց միջև կանգնեց յերբորդ անձնավորությունը—
վաճառականը, այդ ժամանակից արտադրող արհեստավորն ևս
նույնպիսի ստրուկ դարձավ, ինչպես եր և գյուղացին:

Արտադրողը—մանր արհեստավորը—ստիպված է իր ապ-
րանքը ծախել իսկույնեթ: Նա չի կարող սպասել, մինչև շու-
կայում լինեն այնչափ գնողներ, վորչափ ապրանք և տարված
այնտեղ: Անհրաժեշտ է, վոր նա ծախել իր ապրանքը, վորպեսզի
ստացած փողով գնե հում նյութեր—կաշի, մահուգ, վորպեսզի
նրանցից պատրաստե կոշիկ, կոստյում և այլն: Անհրաժեշտ է, վոր
նրանցից պատրաստե կոշիկ, կոստյում և այլն: Անհրաժեշտ է, վոր
նա իսկույն ծախել իր ապրանքը, վորպեսզի ստացած փողերով
իր ընտանիքի համար հաց գնե: Իսկ առևտրականը կարիք չունի
իր ընտանիքի համար հաց գնե: Իսկ առևտրականը կարիք չունի
զտապելու, վոչ ծախելու և վոչ ել գնելու: Յերբ գներն իրեն ձեռք-
տու չեն, յերբ նրանք խիստ բարձր կամ ցածր են, նա չի գնում
և վոչ ել ծախում է: Վաճառականը ողավում է արտադրողի անե-
լանելի դրությունից: Համոզված, վոր մանր արհեստավորին ան-
հրաժեշտ է ծախել ապրանքը, վաճառականն իր զինն է նշանա-
կում և նրան թելադրում իր կամքը: Սակայն առևտրականին

ձեռնառու չի արհեստավորին քայքայել վերջնականապես: Նա արհեստավորին շահագործելու համար շահագրգռված է նրա պահպանությունը և այդ պատճառով վաճառականը դնելով նրա ապրանքը՝ թողնում է նրան վորոշ շահ, սակայն այնչափ քիչ, վոր բանվորները սովամահ չլինեն: Բայց դրա փոխարեն վաճառականըն իրեն է պահում առյուծի բաժինը:

Արհեստավորը կարիք ունենալով փողի՝ հում նյութեր և հաց գնելու համար, հաճախ ստիպված է ապագա աշխատանքի հաշվին վաճառականից նախորոք վերցնել վորոշ փող: Արհեստավորն իր պարտքը վճարում է իր աշխատանքի արդյունքներով— ապրանքով կամ աշխատանքով: Վաճառականն այժմ փոխվում է վաշխառուի— կուլակի: Նա վոշ թե միայն պատրաստի ապրանք և գնում, այլ և փաստորեն դառնում է արտադրություն տերը: Պարտապան արհեստավորն իր պարտատիրոջ մոտ ճորտացավ, նա այլևս չի արտադրում իր ցանկությունը և այնպիսի ապրանքներ, ինչ վոր ցանկանում է ինքը կամ ինչ վոր ինքն անհրաժեշտ է համարում արտադրել: Նրա արտադրական գործունեություն մեջ մտնում է վաճառականը, վորն արհեստավորին մատակարարում է և՛ փող, և՛ հում նյո թեր: Նա արտադրողին թելադրում է իր արտադրական պայմանը, կերպարանափոխում է ամբողջ արտադրությունը համաձայն իր պահանջի և հաշիվների, և ազատ արտադրող արհեստավորը դառնում է վաճառականից կախում ունեցող ստրուկ:

Վաճառականը փաստորեն դառնում է արտադրության կազմակերպիչը, նա իր վրա յե վերցնում հում նյութեր բերելը, նա արհեստավորին մատակարարում է անհրաժեշտ գործիքներ և փող: Իսկ արտադրողն անկախ արտադրողից դառնում է վարձու բանվոր, վորն իր աշխատանքի համար ստանում է նախորոք պայմանավորված վճար:

Արտադրության ազատ ընտրությունը փոխարինվում է շուկայի պայմանների թելադրած միատեսակ արտադրությամբ: Թեև ամբողջ արտադրությունը գեոևս ցաքուցրելվ է, վորովհետև յուրաքանչյուր արհեստավոր շարունակում է աշխատել իր տանը, բայց բոլոր արտադրողներն ընդհանուր առմամբ կախված են պատվեր սվող վաճառականից, վորը արհեստավորներին մատակարարում է թե հում նյութ և թե արտադրության գործիքներ:

Արտադրության այդ ձևը կոչվում է անային կապիտալիստական արտադրություն:

Հասարակություն անդամների ներքին հարաբերությունը առեվտրական կապիտալի դարաշրջանում.— Արտադրության անային կապիտալիստական դարաշրջանում արհեստավորական առանձին տնտեսությունները մտում են անձևանմխելի: Բայց արտադրողի ուսերին ծանրացած վաճառականի ճնշումը անդրադառնում է նաև նրա ամբողջ ընտանիքի վրա: Քանի վոշնչանում է արհեստավոր-արտադրողի ազատությունը, քանի մեծանում է նրա կախումը վաճառականից, այնքան մեծանում է նաև արհեստավորի ընտանիքի ճնշումը: Հեողհետե աղքատացող արհեստավորն ամբողջ իր ուշժերով ձգտում է պահել իր քայքայվող անտեսությունը և անկախությունը: Լինելով կախված վաճառականից, նա դիմում է իր ընտանիքի անդամների շահագործման: Իր աշխատանքով վաճառականից աննշան մի վարձ ստանալով, արհեստավորն այլևս անկարող է իր միանձնական աշխատանքով կերակրել իր ընտանիքը: Նա իրեն սգնություն է կանչում կնոջն ու յերեխաներին, վոշ միայն հասակավորներին, այլև փոքրահասակներին: Այժմ գիշեր ու ցերեկ, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, աշխատում է արհեստավորի ամբողջ ընտանիքը, վորպեսզի մի քիչ մեղմացնի իր կարիքը: Բայց հասակավորներին և մանր յերեխաների աշխատանքը վոշ մի ոգուտ չի տալիս: Նոր տերը— վաճառականը— աշխատավարձն անդադար պակասեցնում է: Յեվ այժմ, յերբ արհեստավորի ընտանիքի բոլոր անդամները կանչված են արտադրական աշխատանքի, նրանց ընդհանուր վաստակն այնուամենայնիվ չի բարձրանում ընտանիքի ամենամանհրաժեշտ պահանջները ծածկելու գումարի չափ: Արհեստավորը գուրս է գալիս կաշուց, նա խղճալ չգիտե, նա անողոք է իր յերեխաների վերաբերմամբ: Բայց ընտանիքի բարբոթության փոխարեն, շնորհիվ ուժեղացած շահագործման, ընտանիքն այլասերվում, անդամավուծվում է:

Առևտրական կապիտալն արմատական փոփոխություն է առաջացնում արհեստավորի նահապետական ընտանիքի անդամների փոխհարաբերություններին մեջ: Քանի գեո ընտանիքի միակ կեկերակրողը հայրն է, — նա յե ընտանիքի տերը, նա յե վճռում ընտանիքի անդամների բաղղը: Քանի գեո կինն արհեստավորի ընտանիքում պարապում է բացառապես անային տնտեսությունը, և վոշ-արտադրական աշխատանքով, նա ը՝ տանիքում հալատակվող և յերկրորդական դեր ունի: Բայց առևտրական կապիտալը, վորը ձգտում է ծծել բանվորի հյուծը, գանազանություն չի դնում վոշ-սեուի և վոշ ել հասակի: Կնոջ միջոցով ստացված շահը նրան նույն-

կան կապիտալի քայքայիչ ուժերի դեմ, այլ ընդհակառակը, ոչ-
նում են կապիտալիստին, ներսից սրայթեցնելով համբարակուն
կազմակերպությունները:

Տնտեսապես զիմացիուն արհեստավորը վոչ միայն արհես-
տավոր է, այլև ապրանք գնող: Նա ինքն է կապիտալիստ: Համ-
բարություն որենքներն ևս նրան խանդարում են: Նրան ձևոնտու-
չե արտադրություն կոնտրոլը և արտադրություն սահմանափակու-
մը: Նա հրաշալի կերպով գիտե, թե վորչափ շատ բանվորներ ու-
նենա, վորոնց նա կարող կը լինի շահագործել, նույնչափ ավելի
շատ շահ կը ստանա ինքը: Շահելու ձգտումը վարպետին գրգռում
է: Յեվ նա քանդում է բոլոր արգելքները: Նա ավելացնում է ա-
շակերտների և քարգահների թիվը, նա յերկարացնում է բանվո-
րական որը: Ավելի ուժեղ վարպետները կհանում են ավելի թույ-
լերին: Կոիվն ընթանում է կյանքի ու մահու համար:

Յերբեմն ել այն համբարական վարպետները, վորոնք թշնա-
մական արամադրություն ունին միմյանց վերաբերմամբ, իրենց
կապիտալիստական հզորությունն ուժեղացնելու համար կազմում
են ամբողջու ընկերություն, ընտանիք: Այստեղ նրանց միջև տա-
րածայնություն չկա, այստեղ բոլորն ել միտակալ ուժերով ձրդ-
տում են բանվորից շատ ստանալ և հնարավորություն չափ քիչ
տալ:

Վարպետները հորինում են տմեն տեսակի զվարություններ
ու ճնշումներ, վորպեսզի քարգահներին հնարավորություն չտան
վարպետներ դառնալու, վորպեսզի նրանց մուտքը համբարության
մեջ սահմանափակվի: Բայց այդ բոլոր սահմանափակումները
վարպետների վորդիններին չեն վերաբերում: Վարպետների վորդի-
ները խիստ գյուրությունը են վարպետ դառնում: Այստեղ կար-
ծես պահպանվում է ժառանգական իրավունքը, վորն համբարու-
թյունը զարձնում է նեղ, փակված կազմակերպություն, մտաչիլի
միայն աշխատանքի արխտոկրատիային—վարպետներին և նրանց
վորդոցը:

Վարպետների այդպիսի ճնշման դեմ վտարի յեղավ ամբողջ
քարգահությունը: Շահագործման դեմ վարած այդ կանոնավոր
կովի համար նրանք համախմբվեցին միությունների մեջ նախ ըստ
արտադրության և քաղաքի սահմաններում, իսկ այնուհետև նույն-
իսկ միջազգային արտադրական միությունների մեջ, այսինքն
բոլոր կոչկակար քարգահները համախմբվեցին մի միություն մեջ,
բոլոր գերձակներն ուրիշի մեջ և այլն: Քարգահները ոգտվելով

իրենց կազմակերպչական ուժերից՝ շատ անգամ շահագործող
վարպետների դեմ տանում էյին հաղթանակներ և նրանց թելա-
զրում իրենց պայմանները:

Քարգահներին շատ անգամ աջողվում եր իրենց ոգտին վո-
խել համբարական որենսդրությունը: Քարգահները կովի սովորա-
կան միջոցները գործադուլն ու բոյկոտն էյին, այսինքն աշխա-
տանքի զազարեցումը կամ կազմակերպված կերպով հրաժարվելը
վորոշ վարպետի մոտ աշխատելուց և կամ հրաժարվելը նրանից
սպրանք գնելուց:

Առևժտրական կապիտալի շրջանի կազմակերպություն
ըստըստական ձեվը մոնարխիստական է: Զարգացող կապիտա-
լի շահերը պահանջում էյին ստեղծել այնպիսի միահեծան հզոր
մի իշխանություն, վորը պաշտպան կանգնելով կապիտալին՝ ըս-
տեղծեր նրա զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները
և հեռացներ այդ զարգացումը խանգարող բոլոր արգելքները:
Այդպիսի իշխանություն դառնալ կարող եր միայն բացարձակ
մոնարխիստական իշխանությունը: Միահեծան մոնարխը ստոծու
ոճյալը չէ, միքնակալությունը արգասիք է կապիտալի պահանջների:

Բացարձակ իշխանությունն իր գործունեությունը հավեր-
ժացրեց նրանով, վոր ի փառս զարգացող կապիտալի վոչնչացրեց
ֆեոդալիզմի բոլոր մնացորդները, վորն արտադրության կազմա-
փեոդալիզմի բոլոր մնացորդները, վորն արտադրության կազմա-
կերպողից և իր համաքաղաքացիներին պաշտպանողից դարձել եր
մեծ ձանապարհները վրայի ամենասանձարձակ կողոպտիչ: Մո-
նարխիստական իշխանության յերկրորդ նպատակն եր ճնշել գյու-
ղացիական ապստամբությունները: Ֆեոդալների և հոգևորակա-
նություն հարկահանություններից տանջված գյուղացիները մի
շարք ապստամբություններ հարուցին, վորոնք շնորհիվ պետու-
թյան առանձին շրջանների պինդ կապերի, վոր առաջացել էյին
փոխանակման զարգացումից, ընդգրկում էյին ամբողջ յերկրներ:
Իրենց գյուղացիական բուռնտիրով հայտնի յեն առանձնապես XIII
— XVI դարերը: Բայց ճնշելով գյուղացիական բուռնտիրը, միահե-
ծան իշխանությունը կանգնեց գյուղացիներին ճորտությունից ա-
զատելու խնդրի առաջ: Այդ խոշոր քաղաքական նշանակություն
ունեցող գործը սակայն միահեծան մոնարխի ապստամբություն
արգասիք չեր, այլ նա առաջ եր յեկել անտեսական անհրաժեշ-
տությունից: Ճորտատիրությունը մեծ արգելք եր կապիտալիզմի
զարգացման համար:

Կապիտալիստներին անհրաժեշտ գարձան բանվորական ձեռքեր, վորոնց կարելի լիներ ազատորեն տնտրինել, առանց կողմնակի արգելքների և միջամտութեան: Կապիտալիստ գասակարգին բավական չէր իր իշխանութիւնը տարածել արտադրող քաղաքների վրա: Նրան անհրաժեշտ դարձավ իր իշխանութիւնը տարածել նաև գյուղատնտեսութեան վրա, վորը մատակարարում էր գլխավոր հում նյութերը: Յեւ այդպիսով, գյուղացիների ազատագրումը, վորը մասին այնչափ շատ զբոյժեց ու խոսովեց, վորպես ինքնակալ մոնարխի մարդասիրական մի գործողութեան մասին, իրապես կատարվել էր զուտ տնտեսական անհրաժեշտութեամբ: Ինքը ազատագրման փաստը կսպված էր գյուղացիներին վերաբերմամբ կատարված մի շարք աչք ծակող որինազանցութեանների հետ: Բազմաթիւ դեպքերում գյուղացիք ազատագրվելու ժամանակ զրկվում էին այն հողերից, վոր մշակել էին նրանք իրենց ամբողջ կյանքի ընթացքում, վորոնց հագեցրել էին իրենց քրքրախնայով ու արշուճով: Հողից զրկված գյուղացիք, խիստ հաճախ չիմանալով վորեւ արհեստ, բառիս իսկական իմաստով գատապարավեցին սովամահութեան: Զրկվելով արտադրական գործիքներից, վերածվելով սլոբուտարների, նրանք ստիպված էին սովից չմեռնելու համար ծախել իրենց բանվորական ուշիներն ինչպիսի պակաս գնով էլ լիներ: Ամենալավ դեպքում, գյուղացիներին ազատագրելու ժամանակ թողնում էին միայն հողի մի մասը, բայց զրա համար նրանք կալվածատիրոջը այնպիսի հատուցում էին տալիս, վոր շատ ավելի յեր լինում հողի արժեքից: Այդպես էր գյուղացիութեան ազատագրման քողարկված կողմը: Գյուղացիներին ազատելով ճորտութեանից, ինքնակալ կառավարութեանը գյուղացիներին շահերով առաջնորդվում էր շատ քիչ: Գյուղացիութեան ազատագրման գրգայատճառը կալվածատերերի և գլխավորապես զարգացող կապիտալիստ գասակարգի շահերն էին:

Վոչնչացնելով աշխարհիկ ֆեոդալներին, ինքնակալ կառավարութեանը բնականաբար պետք է վոչնչացներ նաև հոգևորական ֆեոդալներին—յեկեղեցին, վորը ձգտում էր զարգացող կապիտալիստական աշխարհում գրավել վորոշ տեղ: Սակայն յեկեղեցու կապիտալիստական-շահագործական ձգտումները հանդիպեցին միահամուռ գիմադրութեան միահեծան մոնարխի—կապիտալիստ գասակարգի ընտրյալի, ինչպես և գյուղացիների կողմից, վորոնց յեկեղեցին հարստահարում էր, թալանում ամեն տեսակի սուրքերով ավելի մեծ գաժանութեամբ, քան կալվածատերը:

Յեկեղեցին, վոր կյանքի յեր կոչված ֆեոդալական հասարակութեան տնտեսական շրջանում և հատկ էր իր զարգացման բարձր աստիճանին, վորպես արտադրութեան կազմակերպիչ, պետք է զիջեր իր տեղը նոր ուշի—տնտեսական կապիտալիստաշ, վոր կազմակերպում էր վոչ միայն արտադրութեանը, այլ և փոխանակումը:

Մտավոր զարգացումը տեղափոխական կապիտալի շրջանում.— Երկրորդականութեան զարգացումով և փոխանակման լայնացումով, լայնանում է նաև մանր բուրժուական հասարակութեան մտավոր հորիզոնը: Այն, ինչ վոր իր համայնքի սահմաններից դուրս չեկած հասարակտական հասարակութեան անդամին անհասկանալի յեր թվում, լիովին հասկանալի յե գտնում մանր բուրժուական հասարակութեան անդամին: Տեղափոխվելով մի տեղից մյուսը, ծանոթանալով նոր մարդկանց հետ, նոր կարգերի, նոր սովորութեանների, գոյութեան կովի նոր յեղանակների հետ, մանր բուրժուական հասարակութեան անդամը ավելի ու ավելի ազատվում է սովորութի իշխանութեանից, կենդանի մարդկանց վրա մեռածների ունեցած իշխանութեանից:

Իր դարն անցկացրած յեկեղեցին, կորցնելով իր տնտեսական հզորութեանը, կորցնում է նաև իր քաղաքական ու կուլտուրական նշանակութեանը: Հոգևորական դպրոցի տեղ այժմ գրավում է աշխարհիկ դպրոցը: Զարգացող կապիտալի պահանջները բավաբար կուր կոչված աշխարհիկ դպրոցի հիմնական խնդիրն է տեխնիկական գիտութեանների զարգացումը, վորոնց վերջին ժամաքական գիտութեանների զարգացումը, վորոնց վերջին ժամաքացման գործում տպագրութեան գյուտը և թղթի արտադրութեանը ծառայում են վորպես հեղաշրջական գործոններ:

Հազորդակցութեան ճանապարհների զարգացումով, գիտութեան և փոխանակման ընդլայնումով վերջնականապես թուլանում է բնութեան իշխանութեանը մարդու վրա. մարդը կարող է ազատորեն առաջ շարժվել և վորոնել իր համար ուտելիք ամբողջ լայնատարած յերկրագնալի վրա:

Նա այլ ևս բնութեան սարուկը չէ: Նա գիտութեան միջոցով սկսում է գտնուլ բնութեան թագավորը:

կայում մրցման չենթարկվի, վորպեսզի կարողանա եժան ծախել և վաստակել ավելի շատ, շահագրգռված և նրանով, վորպեսզի ապրանքի արտադրութեան վրա գործադրվեն փոքրագուշն քանակի աշխատածամեր: Իսկ զբան հասնել կարելի չե միայն աշխատանքի այնպիսի բաժանումով, յերբ ամեն մի առանձին բանվոր դառնում և մի փոքրիկ մեքենա կամ նրա լրացուցիչ մասը:

Վաճառականն այժմ փոխանակման կազմակերպչից դառնում և ամբողջ արտադրութեան կազմակերպիչը: Ընդհատ և, նա այդ աշխատանքով ինքը չի արտադրում: Նրան ոգնութեան են գալիս մի շարք վարձու անձինք, վորոնք նրա համար կատարում են գործի մի մասը: Ծարտարապետներ, հաշվապահներ, գործավարներ, տեսուչներ և այլն կատարում են պարագիտ-կապիտալիստի համար ամբողջ աշխատանքը, և այստեղ ևս կատարվում և աշխատանքի վորոշ բաժանումն: Բայց կազմակերպչական շրջանում մենք արդեն աշխատանքի այդպիսի բաժանումն տեսանք նաև նահապետական հասարակութեան մեջ, ուր արտադրութեան զարգացման և փոխանակման ընթացքում նահապետական հասարակութեան մեջ մի կազմակերպչի տեղ հանդես են գալիս մի խումբ կազմակերպիչներ: Նույնը տեսանք նաև Ֆեոդալական հասարակութեան մեջ:

Բայց յեթև արտադրութեան մանուֆակտուրային դարաշրջանում կազմակերպչական աշխատանքի բաժանման իմաստով նոր վոչինչ չկա, յեթև այստեղ աշխատանքի այդ տեսակը միայն ընդարձակվեց և կատարելագործվեց, ապա զբա փոխարին այդ դարաշրջանում բոլորովին փոխվում և իրեն արտադրողի, այսինքն բանվորի տնտեսական և իրավական դրութեանը:

Կապիտալիստական արտադրութեան եյուլթյունը.— Կապիտալիստական տնտեսութեան հիմնական առանձնահատկութեանը կայանում և նրանում, 1) վոր այդ տնտեսութեանը վարում են վարձու աշխատանքով, 2) վոր արտադրութեան միջոցներից— գործիքներից յե՛վ արհեստանոցից զուրկ ըսնվորը ծախում և իր միակ կարողութեանը, իր բանվորական ուժը, 3) վոր ըսնվորական ուժը հանդիսանում և ապրանք:

Ճորտութեանից ազատված բանվորն ազատորեն կարող և ծախել կամ չծախել իր բանվորական ուժը: Բայց նա ազատ և փոչ միայն ստրկութեանից կամ ճորտութեանից, նա ազատ և նաև

ամեն տեսակի արտադրական գործիքներից: Ուրիշ վոչինչ չունենալով, բացի իր ձեռքերից, և բավարար բաշխութեան չունենալով քաղցից մեռնելու, նա ստիպված և ծախել իր բանվորական ուժը: Սոսքով ազատ, բայց գործով նոր զարգացող կապիտալիստարեկն և նա: Նա ստիպված և կապիտալիստի ստրուկը դառնալ, ստիպված և իրեն ծախել ինչպիսի գնով ևլ լինի, միայն թե սովից չմեռնի կամ իր կնոջն ու յերեխաներին չտեսնի սովից ուռած:

Բայց վորովհետև բանվորական ուժը կապիտալիստական հասարակութեան մեջ ապրանք և, ուստի այդ ուժն ևս ծախվում և վորոշ գնով: Բանվորական ուժի գինը վորոշվում և ամենաանհրաժեշտ մթերքների քանակով, վորոնք հարկավոր են բանվորին իր կյանքը և աշխատունակութեանը պահպանելու, ինչպես և ընտանիքը կերակրելու և սերունդը շարունակելու համար:

Կոմմունիստական և նահապետական հասարակութեանց մեջ, ուր բոլոր աշխատունակ անդամներն արտադրողներ էլին, հասարակութեան ամեն մի անդամ իր ամենաանհրաժեշտ պահանջները բավարարում էր հասարակական մթերքներից: Մթերքների լինաբարավարում էր հասարակական մթերքներից: Մթերքների լինացորդները նույնպես ծառայում էլին հասարակութեանը, փոխանակելով ցեղին անհրաժեշտ ուրիշ մթերքների հետ:

Բոլորովին այլ կերպ և դրված գործը կապիտալիստական հասարակութեան մեջ: Բանվորների ձեռքով արտադրված արդյունքն այն ամբողջ հասարակութեան ձեռքի արդյունքը չե, վորի անդամներն են իրենք բանվորները: Բազմաթիվ բանվորների արտադրած արդյունքը մի անձի— հում նյութերի և գործիքների, այսինքն արտադրութեան գործիքների տեղ կապիտալիստի սեփականութեանն և:

Կապիտալիստը բանվորական ուժը գնում և անսահմանափակ թվով ժամերի— ամբողջ օրվա համար: Կապիտալիստի մտքով արձված բանվորները պարտավոր են աշխատել այնչափ, վորչափ վարձված բանվորները պարտավոր են աշխատելով 12—14 և նույնիսկ հաճելի չե գործատիրոջը: Սակայն աշխատելով 12—14 և նույնիսկ հաճելի չե գործատիրոջը, այլ միայն վորոշ քանակի իր ամբողջ աշխատածամերի համար, այլ ինքն այնչափ ժամերի համար, վոր կոթյամբ ժամերի համար, այսինքն այնչափ ժամերի համար, վորչափ անհրաժեշտ և գործադրել բանվորի որական ամենաանհրաժեշտ պահանջների— հացի, մսի, փայտի և այլն արժեքը հասուցանելու համար: Սովորաբար աշխատանքի միջին արտադրականութեան ժամանակ այդ բոլոր մթերքների արժեքը ճարելու համար պետք և ծախել բանվորական հինգ ժամ:

դրանքը՝ անցնում և հարյուր հազարավոր մանր սեփականատերերի գիտնիների վրայով և անշեղ կերպով ընթանում և առաջ կապիտալի կենտրոնացման, հազարավոր մանր կապիտալները միայն մի քանի հարյուր խոշոր կապիտալիստների ձեռքի մեջ միացնելու գծով:

Ուժեղների հաղթությունը թույլերի վրա կատարվում և անորոք մրցման շնորհիվ:

Այդ պատճառով մանուֆակտուրային շրջանի հիմքը կազմում և մրցումը զանազան ձևերով, հարստություն կուտակելու ծարավը և անսահման շահագործումն, կապիտալների կենտրոնացումն, ավելացումն բանվոր ձեռքերի քանակի, բանվորական որվա յերկարացումն, նմանապես և կանանց ու յերեխաների շահագործման ծագումը:

Գ Լ Ո Ի Խ IX.

ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԸ

Կապիտալիստական հասարակության մեջ վորչափ զարգանում էյին փոխանակական հարաբերությունները, նույնչափ էլ աճում էր կապիտալիստների հարստությունը կուտակելու, շահ ստանալու ծարավը: Եւհը ստացվում և միայն բանվորի չվճարված հովելյալ աշխատանքով: Սակայն անկարելի յե բանվորին ստիպել աշխատել անսահման, վորովհետև մարդու ույժը ունի իր սահմանը: Կապիտալիստը տեսավ, վոր անհրաժեշտ և մարդու աշխատանքը փոխարինել մեքենայական աշխատանքով, վորը շարժվում և բնություն ույժերով—չրով, բամբակով, շոգիով և այլն: Երա համար այդ բանն անել հեշտ էր մանավանդ այն պատճառով, վոր մանուֆակտուրային շրջանն արդեն պատրաստ էր աշխատանքի մարքիմալ բաժանումն, ամեն մի առանձին բանվորի շարժումը հասցնելով աշխատանքի այս կամ այն մասի մեքենայական կատարման:

Մեքենաներն սկսեցին յերևան դալ կապիտալիստական արտադրությունից շատ ավելի վաղ: Այսպես, գեո սորկություն շրջանում հայտնի էյին քամու և ջրային աղացները, ջրհանները և այլն: Բայց արտադրության մեջ մեքենաների նշանակությունն այնքան աննշան էր, վոր հարկ չկա իրոսելու նրանց մասին:

Սակայն արտադրության մեջ մեքենայի աննշան դերի պատճառը վոչ թե տեխնիկայի թույլ զարգացումն էր, վոչ թե ոգտակար մեքենաների բացակայությունը, այլ գուտ անտեղական համար զամանքներ: Մեքենաների գեմ կուվում էր մեռնող արհեստը, վորի համար մեքենան մահացու մրցակից էր: Մեքենաների գեմ գրգռում էյին նաև բանվորներին, վորոնց վախեցնում էյին, թե մեքենաները նրանց զրկում են վաստակից: Մեքենաների հնարողներին

ձեռնում և ամեն տեսակ հայրածանքների էյին- յենթարկում, իսկ մեքենաները շարժում էյին:

Մեքենաներին բոլորովին այլ կերպ է վերաբերվում վաճառական-կապիտալիստը: Մեքենան նրան խոստանում է շահ, ուստի արտադրական աշխարհում մեքենային տրվում է պատվավոր տեղ: Բայց կապիտալիստը մեքենային մոտենում է վոչ թե ոգուտի կամ վնասի տեսակետից, այլ զարձյալ շահագիտական տեսակետից: Յեթե մեքենան կծանացնում է մթերքը, յեթե նա ձեռնուտու յե, քան բանվորական ձեռքը, կապիտալիստը նրանից ոգուտվում է: Իսկ յեթե մեքենան տնտեսումն չի տալիս, շահավետ չէ, վոչ մի դեպքում կապիտալիստը սյն չի կիրառում, թեկուզ մարդու գործադրած աշխատանքը տաժանակիր և սպանիչ լինի: Նա գործ չունի բանվորի հետ, նրա մահու և կյանքի հետ կապիտալիստի համար կարևորը շահը և շահն է: Յեվ նա կիրառում է մեքենան միայն այն ժամանակ, յեթե նրա գինը պակաս է այն բանվորական ուժի գնից, վորին փոխարինելու յե մեքենան: Բնական է, վոր վորչափ պակաս է աշխատավարձը, նույնչափ էլ քիչ շահ կա մարդկային աշխատանքը մեքենայով փոխարինելուց: Այդ հանգամանքով էլ բացատրվում է այն, թե ինչու Ռուսաստանում մեքենայական արտադրությունն այնքան թույլ է զարգացած: Ռուսաստանում շատ ավելի, քան ուրիշ յերկրներում, մեծ է այն քաղաքացիների թիվը, վորոնք գուրկ են արտադրական գործիքներից, այսինքն պրոլետարներ են: Իսկ այդ ձեռնուտու յե կապիտալիստին: Կապիտալիստը ունենալով գերարտադրություն, բանվորական ավելորդ ձեռքեր, կարող է նրանց աշխատավարձը ցածրացնել մինչև մինիմում և այդպիսով բանվորներին աշխատանքը դարձնել իր համար ավելի ձեռնուտու, քան մեքենայի աշխատանքը: Գյուղացիական պրոլետարիատի—գյուղական չքավորության ստատությունը և բացատրվում նույնպես Ռուսաստանի հողագործական անտեսություն մեջ մեքենաների թույլ կիրառումը: Մեքենայի գործադրումը ամենալայն չափեր ստացավ այն ժամանակ միայն, յերբ մեքենա արտադրելը մեքենայական զարձակ, յերբ մեքենայի արտադրությունը ծայր աստիճան կծանացավ:

Հասարակակ սն նարաբերությունները մեքենայական կապիտալիզմի շրջանում.—Կոիվը մեքենայի գեմ, վորպես բանվորին աշխատանքից զրկող գործիքի գեմ, բոլորովին ավելորդ և անմիտ էր: Մեքենայական արտադրության զարգացումը իր հետ

րեբեց բանվոր ձեռքերի վոչ թե կրճատումն, այլ ուժեղացած պահանջ: Այդ բացատրվում է հետևյալ հանգամանքներով: Մեքենաների գործադրումը առաջ բերեց 1) շուկայի ընդարձակումն, 2) ապրանքների կծանություն և այդտեղից բղխող 3) ապրանքների պահանջի ուժեղացումն:

Կապիտալիստական արտադրության բնորոշ յերևույթն է, դեռ նրա ծագման առաջին մոմենտից, խոշոր արտադրությունների սրայքարը մանրերի հետ: Այս պարագայում մեքենան ոգնություն է գալիս ավելի ուժեղին, անխուսափելի կորստյան մատնելով արհեստավորին, մանր ձեռնարկողին:

Մեքենայով դինված խոշոր ձեռնարկողների և փոքր արհեստավորների կամ մանր ձեռնարկողների միջև կատարվում է պայքար գնողի, շուկայի համար: Այդ կովում նա յե հաղթում, ով շատ ապրանք ունի: Յեվ վորովհետև խոշոր ֆարրիկանտի մեքենայական միջոցներով արտադրած ապրանքն ավելի կծան է, քան ձեռքի արտադրածը, ուստի մրցման կովից հաղթող է դուրս գալիս խոշոր կապիտալիստը: Մանր արտադրողը պարտվելու պատճառով քայքայվում և սրտկտար է դառնում:

Կապիտալիզմի զարգացման հետ անդադար պակասում է մանր ձեռնարկողների թիվը, ուժեղանում է խոշոր ձեռնարկողների կապիտալիստական հզորությունը և ավելի ու ավելի պրոլետարիզացիայի յեն յենթարկվում մանր արհեստավորներն ու մանր սեփականատերերը:

Վորչափ առաջ է գնում կապիտալիստական հասարակության զարգացումը, այնչափ խիստ կերպով է սկսում հասարակությունը բաժանվել վորոշ դասակարգերի: Մի կողմում կանգլությունը բաժանվել վորոշ դասակարգերի: Փարրիկանտների և կովածատերերի գասակարգը, մյուս կողմում շահագործվողների գասակարգը—բանվորները և չքավոր գյուղացիությունը: Այդ յեր գասակարգը—բանվորները և չքավոր գյուղացիությունը: Այդ յեր գասակարգերի, միջև, գասակարգային շահերի հակադրությունների խիստ արտահայտությունը, մտնում է բուրժուական թյունների խիստ արտահայտությունը, մտնում է կապիտալի ինտելիգենցիան, վորն ամբողջությամբ գտնվում է կապիտալի ծառայության մեջ և կյանքի վորոշ հարմարությունների համար բուրժուակային ծախել է իր միտքը, գիտությունը և նույնիսկ իր խիղճն ու հոգին:

Կապիտալիստական դարաշրջանում արտադրության կազմակերպիչը կապիտալն է: Նա այնպես է կազմում անտեսությունը, ինչպես այդ ձեռնուտու յե կապիտալի շահերի տեսակետից: Կապի-

տայի շահերը պահանջում են բանվորին զարձնել մեքենայի լրացուցիչ մի մասը և նույնիսկ վոչ թե ամբողջ մեքենայի, այլ նրա մի մասի լրացուցիչը: Կապիտալը պահանջում է վոչ միայն բանվորին զարձնել մեքենայի մի մասը, նա պահանջում է նաև անսահմանորեն կապել նրան մեքենայի մասի հետ, իրավունք չտալով բանվորին աշխատանքի ուրիշ ճյուղի անցնելու: Բանվորի այդպիսի ճորտացումը կապիտալի կողմից լիովին հնարավոր է դառնում իրականացնել մանավանդ կապիտալի զարգացման առաջին շրջանում: Լիովին հասկանալի չէ, վոր բանվորի այդ դրուժյունը ներգործում է նրա հոգեբանությունը, նրա զարգացման վրա խիստ բացասական կերպով: Բոլոր բանվորները, հազվադեպ բացառությամբ, կատարում են մեքենայի մոտ միևնույն կամ իրար շատ նման ֆունկցիաներ, և նրանց ամբողջ աշխատանքն ընդունում է հասարակ աշխատակցություն զծեր:

Աշխատանքի այդ միտրինակությունը յեթև ունի իր բացասական կողմերը, միաժամանակ ունի և իր դրական կողմերը: Այսինքն բանվորների միանման պայմանները նրանց մեջ ստեղծում են նման ձգտումներ, իսկ այդ իր կողմից ստեղծում է բանվորների համար նպաստավոր պայման՝ միանալու կյանքի պայքարի համար:

Արտադրական նարաբերությունները ամբողջ յերկրագնտի վրա.—Աշխատանքի հասարակական բաժանումը, վոր նախապեսական հասարակության մեջ արդեն խաղում էր հսկայական դեր, կապիտալիստական հասարակության մեջ հասնում է իր կատարելության: Առանձին ձեռնարկների և արդյունաբերական ամբողջ ճյուղերի փոխադարձ կապն այնչափ է ուժեղանում, վոր համաշխարհային ամբողջ արտադրությունն ընդունում է մի միաձույլ և անբախտելի ամբողջություն ընույթ:

Մրցումը կլանում է այն ամենը, ինչ վոր թույլ է և անկենսունակ: Առանձին խոշոր ձեռնարկներն ամբանում են ի նաշիվ հայուր հազարավոր մանր ձեռնարկներ: Արտադրական հասարակական բնույթն հասնում է այնտեղ, վոր ամբողջ յերկրներ իրար հետ հաստատում են խիստ սերտ արտադրական կապեր: Զանազան պետությունների արտադրությունը շնորհիվ փոխանակման այնչափ է միանում, վոր նրանց առանձին տնտեսական գոյությունը դառնում է անմտություն: Այս պարագայում խիստ բնորոշ է և ամենից ավելի խոշոր արդյունաբերական յեր-

կրների գրությունը, վորպիսիք են Գերմանիան և Անգլիան: Արդյունաբերական Գերմանիան բացարձակորեն հում նյութեր չունենալով, անկարող է գոյություն ունենալ, վորպես ինքնուրույն տնտեսական ամբողջություն: Նույնպիսի գրություն մեջ է նաև Անգլիան, վորի գործածած հացի մի մասը ներմուծվում է ուրիշ յերկրներից:

Խոշոր կապիտալն իր յերկրում կլանելով մանր արտադրողին, մանր ձեռնարկները, դեռ հաղթանակը չի տարել վերջնականապես: Նրա առջև ծառայավ դարձյալ յերկու խնդիր. նախ՝ մի կամ յերկու կապիտալիստներ պետք է դառնային իրենց յերկրում առաջինն ու միակը, և յերկրորդ՝ համաշխարհային շուկայում նրանք պետք է գրավեյին ստեղծողի և հրամայողի առաջին տեղը:

Ինչ վերաբերում է առաջին խնդրին, այսինքն իրենց յերկրում տիրապետող գրություն գրավելուն, այդ բանն աշոգություն ամբողջապես կատարել է ամեն մի յերկրի կապիտալիստական մի խմբակ: Այսպես, որինակ, ամերիկական մի գույք բանկիրներ այժմ տիրապետում են Ամերիկայի բոլոր կապիտալներին, 2—3 ֆրանսիական կապիտալիստներ հարստահարում են ֆրանսիական ամբողջ ժողովուրդը: Ավելի քիչ թվով միլիարդներն տիրապետում են Անգլիային և Գերմանիային:

Յերկրորդ խնդիրը—տիրապետել համաշխարհային շուկային՝ ավելի դժվար կատարելիք գործ հանդիսացավ, և դրա համար էլ բանկիրից համաշխարհային պատերազմը: Հինգ տարի անդադար էլ բանկիրից համաշխարհային պատերազմը: Զինգ տարի անդադար գետերի նման հոսում էր բանվորների և գյուղացիների արյունը: Այդ խնդիրը լուծելու համար կործանվեցին միլիոնավոր մարդ-կային կյանքեր, վորոնք վոչնչով մեղավոր չէին: Պատերազմը իր հետ բերեց տամայակ միլիոնավոր հաշմանդամներ, այրիներ իր հետ բերեց տամայակ միլիոնավոր ժողովուրդները, և վորերը: Ամայացան դաշտերը, աղքատացան ժողովուրդները, և փայտայվեցին տամայակ հազարավոր դյուղեր և քաղաքներ, բայց քայքայվեցին տամայակ հազարավոր դյուղեր և քաղաքներ, բայց խնդիրը դարձյալ չի լուծվել—թե համաշխարհային շուկայում թվ խնդիրը դարձյալ չի լուծվել—թե համաշխարհային շուկայում թվ պետք է գրավի առաջին տեղը: Յեվ նորից կոիվն ընթանում է, հոսում է բանվորների և գյուղացիների արյունը, նորից կործանահոսում է բանվորների և գյուղացիների արյունը, նորից կործանվում են միլիոնավոր կյանքեր, իսկ խնդիրը՝ վորի լուծումը կաբեր է միլիոնավոր կյանքեր, իսկ խնդիրը՝ վորի լուծումը կաբեր է միայն մի յերկու տամայակ միլիարդներին համար, դեռ բոլորովին լուծված չէ:

Յերկի չիմացողները հարց կը տան, թե ինչով են ուժեղ

այդ մի բուռ միլիարդերները, վոր անարինում են հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքն ու մահը:

Նրանք ուժեղ են յերկու բանով. ուժեղ են նրանով, վոր իրենց և պատկանում աշխարհի ամբողջ հարստությունը: Բոլոր ֆարբիկաները, դավոճները, ամբողջ կապիտալը, հողը—բոլորը նրանց և պատկանում: Նրանք ուժեղ են նաև իրենց ներդաշնակորեն համախմբված կազմակերպությամբ:

Հարստությունը տալիս և մի բուռ ֆարբիկանտներին և կալվածատերերին սարսափելի իշխանություն հարյուր միլիոնավոր չքավոր-աշխատավորների վրա: Կապիտալիստները տիրում են ֆարբիկաներին, մեքենաներին, յերկաթուղուն, հանքերին, հողին, շողենավերին, մի խոսքով—ամեն ինչի: Զարմանալի չէ, վոր այդպիսի պայմաններում կապիտալիստների համար հեշտ և հրամայել միլիոնավոր սովածների և դժբախտների: Յեթև ավյալ մոմենտում կապիտալիստին ձեռնառու չէ պարապել արտադրությամբ, նա գուրծ չի յեկ տա բանվորին, վորը մի գույզ ձեռքերից և գատարկ ստամոքսից, իսկ յերբեմն ել մի խումբ քաղցած յերեխաներից դատ ուրիշ վոչինչ չունի: Կապիտալիստը ֆարբիկայում թագավոր և աստված է: Նրա ձեռքումն և հարյուր հազարավոր բանվորների և նրանց ընտանիքների կյանքը: Յեթև կապիտալիստը ցանկանում է, նրանց աշխատանք կը տա, իսկ յեթև չի ցանկանում—նրանց մնում և միայն սովից մեռնել: Ֆարբիկան կամ գավոզը պատկանում է նրան, կապիտալիստին, այդ նրա մասնավոր սեփականությունն է: Յեկ արտադրության միջոցների այդ մասնավոր սեփականությամբ ել ուժեղ և նա, նրանումն և կապիտալիստի ուժով:

Բայց այստեղ նորից հարց է ծագում, թե ինչպես կորոզ են մի փոքր խումբ կապիտալիստներ պահել այդ մասնավոր սեփականությունը:

Այդ մի խումբ միլիարդերներին ողնության և դալիս բուրժուական պետությունը:

Ֆեոդալական հասարակության փոխարինելու յեկած մանր բուրժուական պետությունը առաջ քաշեց անտեսական նոր կառույցվածքի հետ նաև իր վարչական ձևը—անսահմանափակ մանարխիան: Զարգացող կապիտալիստական հասարակության պահապան, անսահմանափակ իրավունքների տեր մանարխը ամենաջերմ պաշտպանն է այդ հասարակության իրավունքների և շահերի:

Բուրժուական կառավարությունը ստեղծեց հատուկ որևնրս-դրություն, վորպեսզի պաշտպանե բուրժուազիայի հարստությունը սոված բանվորներից և գյուղացիներից. այդ որևնսդրությունը խիստ կերպով պատժում է սովածներին, իսկ միշտ արդարացնում է կուշտերին, հարուստներին: Նա ստեղծեց իր կողիտ ուժը հանձինս լրտեսների, վոտիկանների, ժանդարմների, գահիճների, բանտերի, կախաղանների, վորոնցով ծածկել և նա ամբողջ յերկրագունտը: Բուրժուական պետությունը իր վրա վերցրեց յեկեղեցու և գալրոցի պաշտպանությունը, վորոնց առաջ նա դրեց վորոշ խնդիր—գաստիարակել սեփականատերերին հպատակվելու և խոնարհության վողով:

Լրտեսները, վոտիկանները, ինչպես և յեկեղեցին ու բուրժուական դպրոցը, վոչ թե վախից, այլ խղճի թելադրանքով կատարեցին իրենց վրա դրված «ագնիվ» խնդիրը, այսինքն խեղդել սոված բանվորների և գյուղացիների ամեն տեսակի ապտուրթյան ձգտումները:

Բացի թված ծառայություններից, կապիտալն ունի զեռ ուրիշ վոչ պակաս նվիրված ծառաներ, վորոնք փողի համար նրան ծախել են իրենց հողին և մարմինը: Այդ ծառաներն են մինիստրները, բանկերի տեսուչները, գավոճների վարիչները: Նրանց ալըրները, բանկերի տեսուչները, գավոճները: Պաշտպանյետից գնում են ցածր աստիճանի պաշտոնյաները: Պաշտպանների այդ կոմպանիայի մեջ պակաս տեղ չեն զբաղում նաև բուրժուական պարոնայք գիտնականները:

Սակայն, բացի պաշտպանողների այդ բանակից, կապիտալիզմը ուժեղ է նաև իր միությամբ: Կապիտալիստները թեև իրենց ժողովուրդներին ստիպում են համաշխարհային շուկային տիրապետելու և իշխելու համար թափել իրենց արյունը, բայց տիրապետելու և իշխելու համար թափել իրենց արյունը են ձեռնարկողոր կապիտալիստներն այնուամենայնիվ միացած են ձեռնարկունների համաշխարհային կուռ կազմակերպության մեջ:

Համաշխարհային կապիտալի միության իրրե լավագույն նմուշ ծառայում է ժամանակակից իմպերիալիստական պատերազմը: Կռույցին բոլոր յերկրներ ի կապիտալիստները իրար հետ, բայց հենց վոր բանվոր գասակարգն առաջին վործն արավ իրենից թող թափելու համաշխարհային կապիտալի լուծը, համաշխարհային բուրժուազիան իսկույն մոռացավ իր բոլոր տարածախնությունները և համերոշխաբար հանդես յեկավ միացած, վորպես մեկ մարդ, ընդդեմ պրոլետարիատի: Միտնույլ թշնամու -- ադատու-

թյան ձգտող պրոլետարիատի հանդեպ մոռացված են բոլոր տեղ-
չանքները, մոռացված է նաև թշնամանքը:

Բանվորների համաշխարհային կազմակերպությունը.—

Այն ժամանակ, չիրք ամեն մի աշխատող կոմունիստական հա-
սարակություն մեջ պետք է խմանար անել ամեն ինչ, իսկ մանու-
ֆակտուրային շրջանը պահանջում է ամեն մի արտադրողի մաս-
նագիտացումն, զանազան բանվորներ կատարում են տարբեր,
իրար հմանող գործեր: Կապիտալիստական-մեքենայական ար-
տադրությունը բանվորի վոչ մի մասնագիտացում չի ձանաչում:
Նա ամեն մի աշխատողի աշխատանքը դարձնում է հասարակ, այ-
սինքն շատ քիչ ուսուցում և զարգացում պահանջող գործ:

Մանուֆակտուրային շրջանում բանվորը պետք է սովորած և
նախապատրաստված լիներ իր գործը կատարելու համար: Մանու-
ֆակտուրայի ժամանակ պահանջվող ձեռքի աշխատանքը, շատ
քիչ բացառություններով, անկարող էին կատարել կանայք ու յերե-
խաները: Մեքենայական արտադրության ժամանակ գործը զբո-
ված է բոլորովին այլ կերպ: Բացի բարձր վորակյալ տեխնիկնե-
րից և մեխանիկներից, ամբողջ բանվորական մասսան զտանում է
հասարակ, սև աշխատանքի բանվորներ, վորսնց աշխատանքն այն-
չափ էլ բարդ չէ, և այդ աշխատանքը կարող են գյուրությունը
կատարել թե կանայք, թե յերեխաները:

Աշխատանքի այդ պարզությունը աշխատանքի շուկա յե քա-
շում բանվորական նոր խմբեր և վոչ միայն տղամարդկանց, այլ
և կանանց ու յերեխաներին: Բանվոր ձեռքի առաջարկի շատու-
թյունը առաջացնում է մրցում բանվորների մեջ: Ամեն մեկը ցան-
կանում է գործ ստանալ ինչ գնով էլ վոր լինի, միայն թե չմեռնի
սովից: Պայքարը մի կտոր հացի համար ձեռնուտ յե կապիտա-
լիստին: Նա ոգտվում է բանվորների անբարեհաջող դրությունից
և ձգտում է պակասեցնել աշխատավարձը վորչափ հնարավոր է:

Արժեքի որենքի համաձայն, աշխատավարձը պետք է համա-
պատասխանի բանվորական ընտանիքի գործածություն սովորական
միջոցների արժեքին: Յերը ընտանիքում միակ բանվորը տղամարդն
էր, ամուսինը, նրա վաստակն էլ հավասար էր բանվորական ըն-
տանիքի կենսական պահանջները ծածկելու գումարին: Այժմ, յերը
ֆարրիկա յե գնացել բացի հորից, նաև մայրը, իսկ նրա յետևից
և յերեխաները, նրանց ընդհանուր վաստակը միջին թվով դար-
ձյալ չի բարձրանում բանվորական ընտանիքի նույն կենսական

պահանջների գումարից: Այսպիսով բանվորի վիճակն արդյունա-
բերություն մեջ մեքենաներ գործադրելուց և արտադրություն մեջ
կանանց ու յերեխաներին քարշ տալուց հետո վոչ թե լավացավ,
այլ վատացավ:

Բանվորական ձեռքերի քանակի մեծացումը ամեն մի բան-
վորի դնում է ձեռնարկողից կախված վիճակի մեջ ավելի, քան
առաջ: Բանվորին փոխարինելը դյուրանում է, նրա կարիքն այժմ
ավելի քիչ ունեն, քան առաջ:

Գործազուրկների թիվը աճում է: Յեթե գործազրկությունը
ձեռնուտ յե կապիտալիստին, բանվոր դասակարգին բոլորու-
ձեռնուտ չէ: Նա իր հեռ բերում է սով, ցուրտ, զրկանքներ,
պրոտիստուցիա և վոճիքներ:

Բանվոր դասակարգի առաջ կանգնում է մի կենսական հարց—
թուլացնել շուկայում բանվորների մրցումը և անգործությունը
իրենց ցավալի հեռանքներով: Աջող կովի միակ յեղանակն է
կոփ կուռ կազմակերպված միություն սցնությունը:

Կապիտալիզմը բանվորներին սովորեցրեց միություն և բան-
վորական դիցելիքներ, վորն անհրամաշտ է մեքենայական ար-
տադրության ժամանակ: Նա միաժամանակ բանվորներին յըթա-
նեց կազմակերպվել՝ միտձույլ և կանոնավոր կազմակերպությամբ
կովելու համաշխարհային կապիտալիզմի ճնշման դեմ:

Այն հանդամանքը, վոր բանվորները հարկադրված են կու-
տակվել մի վորքը տարածություն վրա, նրանց հասցնում է մեծ
վրաս: Բայց նույն այդ պայմանը նպատում է և մարդկային ա-
զատությունը զարգացմանը: Ամեն մի յոռչոր ֆարրիկա կամ ար-
հատանոց ըստինքյան արգեն այնպիսի մի քաղաքական կազ-
մակերպություն է, վորի հանդեպ անգոր են բոլոր սրենքները և
վորը փակել չի կարող վոչ մի դատավոր:

Դեռ ևս 1780 թվին ֆրանսիական բանվորները փորձեցին
կովել կապիտալի ճնշման դեմ:

Բանվորների և արհեստավորների առաջին ընկերությունը,
վոր կազմակերպված էր մի միություն մեջ 1792 թվի գարնանը
կապիտալի ճնշման դեմ պայքարելու համար, «Լոնդոնի հազար-
զակցությունների ընկերությունն» էր: Այդ ընկերությունը իրա-
սարգությունարեական կենտրոններում:

«Լոնդոնի ընկերությունը» պրոլետարիատի առաջին քաղա-
քական կազմակերպությունն էր: Արգեն 1792 թ. նա զիմեց ֆը-

ըրջանում բուրժուական ինտելիգենցիան և նրա համար տեխնիկայի և գիտութեան զարգացումը յուրատեսակ պրոֆեսիա յե Գիտութեան ասպարեզում ամեն մի քայլի համար բուրժուական գիտնականները համապատասխան վարձատրութիւնն են ստանում: Բուրժուական իր վարձու բանվորները դարձրեց բժշկին, իրավաբանին, տերտերին, բանաստեղծին, գիտնականին: Յեվ նրանք, վորպես իշխող կապիտալի հավատարիմ ծառաներ, մշակում են գիտութեան այն մասը միայն, վորը կարող է կապիտալիստներին սպասել բանվորներին ճորտացնելու ավելի շատ, ավելի լավ:

Այստեղ հետաքրքրական է ընդգծել այն հանգամանքը, վոր բուրժուական գիտնականները, հազվագեպ բացառութեամբ, ավելի թշնամի չեն սղատագրվող բանվոր դասակարգին, քան իրենք կապիտալիստները:

Համաշխարհային կապիտալիզմի զարգացման շրջանում բնական ֆեոդալիզմը վերջնականապես կորցնում է ամեն մի հենարան: Բնական ֆեոդալիզմին փոխարինելու յե գալիս յերևոյթնութի պատճառականութեան իմացութեան աճումը: Մարդու իշխանութեանը բնութեան վրա հասնում է իր ամենարարձր զարգացման:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Կապիտալի միացումը փոքրածիվ ձեռքերում.— Կապիտալիզմի զարգացումը, նրա աճումն ու միացումը մի բուռ կապիտալիստների ձեռքին կոտորվում է մոշ միայն աշխատանքի բատալիստների կատարելագործումով և այստեղից բղխող չվճարված ժանման կատարելագործումով և այսինքն հավելյալ արժեքի մեծացումով: Կապիտալի աճումը և արտադրութեան միացումը փոքրածիվ անձանց ձեռքին հետեանք է կապիտալիստների հարստե մրցման և ավելի ուժեղների հաղթութեան ընդդեմ թույլերի: Կոտավութեանը, թագավորը, վորպես կապիտալիստների արբանյակ, թույլերի և ուժեղների այդ պայքարի մեջ միշտ կանդնած է ուժեղների կողմը:

Կապիտալիստն իր կապիտալիստական հզորութեանն ուժեղացնելու կովում, բացի գնողների յետեից ընկնելուց և փոքր սեփականատերերի զեմ պայքարելուց, կատարեց նաև հակայական կազմակերպչական աշխատանք կապիտալի կենտրոնացման և կապիտալիստական արտադրութեանը փոքրածիվ մարդկանց ձեռքին կենտրոնացնելու գործում:

Այդ կազմակերպչական միացման աշխատանքը փաստորեն սկսվեց մասնավոր սեփականութեան ծագման առաջին սրերից: Նա ձեռակերպված ընույթ ստացավ մանուֆակտուրային շրջանում, նա ձեռակերպված ընույթ համաշխարհային պատեխիկ նրա ավարտը կարելի չէ վերագրել համաշխարհային կապիտալիստների շրջանին, յերբ կապիտալիստների և կապիտալիստական արտադրութեան միացումը արտահայտվեց պետական կապիտալիզմի ձևով: Կապիտալիստական շուկայի կովի ընթացքում կապիտալիստներին ակնհայտ դարձավ, վոր անվտաս կը մնա այն կապիտալիստը, վորի գրպանը ավելի լիքն է:

Արդեն տասնիններորդ դարի ութսունական թվերին մի քանի ձեռնարկների կապիտալիստների միացումը մեկ ձեռնարկի մեջ

կապիտալիստներն իրավունք ունեյին, նույն այդ գորահավարի հիման վրա, տեղափոխելու նրանց այնտեղ, ուր կը ցանկանար կապիտալիստը, նույնիսկ հեռու, շատ հեռու դադուքներ: Այն ժամանակ, յերբ պատերազմի ընթացքում կյանքի թանգությունն աճեց անհավատալի չափերով, բանվորները աշխատավարձը բարձրացվեց ամենաչնչին չափով: Իսկ բանվորները չէին կարող պահանջել աշխատավարձի բարձրացումն, վերջինս նրանք, համաձայն կապիտալի շահերի, յենթարկված էին գորահավարի, և իրենց զբոսը բարելավելու համար արած ամեն մի փորձի համար նրանց սպառնում էր խիստ պատիժ, մինչև անգամ նրանց ուղարկում էին ստաջավոր դերքերը, կրակի մեջ, ուր նրանց հավանորեն մահ էր սպասում:

Լիովին հասկանալի չէ, վոր այդպիսի հիմքերի վրա կառուցված հասարակութունը պետք է փուլ գար, և նա փուլ չեկավ, գիջելով իր տեղը նոր, կոմունիստական հասարակութան:

Պրոլետարիատի դիկտատուրան.— Կապիտալիստական հասարակութունը փոխելու, կոմունիստական հասարակարգին իրականացնելու համար անհրաժեշտ էր, վոր բանվոր դասակարգին իշխանութունը իւր մի խումբ Ֆարբեկանաների և գավոզչիկների ձեռքից և պահեր իր ձեռքում: Անհրաժեշտ էր, վոր նա բանվոր հին, փառած կապիտալիստական հասարակութունը և սկսեր նրա ավերակները վրա կառուցել նոր հասարակութուն: Բայց վերջինս երբ ընդունեցին հասարակութունը իշխանութունը ժողովրդին անցնելու դեմ ցուցահանեց և ցուցահանում և ամենամահաբեր մտադրութուն, ուստի բնական է, վոր բանվոր դասակարգին ևս հարկադրված լինեց ցուցադրել իր իշխանութունը մարտիմալ վերձուսականությամբ ու հաստատակամությամբ: Պրոլետարիատի դիկտատուրան պետք է անողորմ լինեց հատկապես քաղաքացիական կալի ժամանակ, յերբ դասակարգը դասակարգի դեմ դուրս չեկավ կապելու մինչև ստամները գինված:

Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանը կապիտալիստական հասարակութունից կոմունիստականին անցնելու շրջանն է: Նոր հասարակութուն ստեղծելու գործում դա ամենազգալի կտորն է:

Այստեղ հարց է լինում շինել միայն մի ձեռքով, այն էլ ընդհատումներով, վերջինս յերկրորդ ձեռքը, իսկ յերրեմն յերկու ձեռքերն էլ դրադված են լինում բոլոր իմպերիալիստական յերկրների հարվածներին դիմադրելով: Այդ պատճառով հաս-

կանալի չէ լիովին, վոր պրոլետարիատին առայժմ աջողկեց գծել միայն կոմունիստական հասարակության ուղին իշխելով: Բայց այդ ուղին իշխելը չույց են տալիս, թե ճանապարհն ուղիղ և ճիշտ է, վոր այնտեղ չկա և չի կարող լինել վոչ մի շեղում, վոչ մի շրջում վոչ դեպի աջ, վոչ էլ դեպի ձախ: Կոմունիստական կուսակցության ծրագիրն աննահանջ և կես առ կես կիրառելով, պրոլետարիատն առաջ և շարժվում դեպի իր վերջնական նպատակը— դեպի կոմունիզմ:

Ինչո՞ւ համար է պետք իշխանութունը կապիտալիստին յիվ բանվորին.— Բուրժուազիայի դիկտատուրայի և պրոլետատարիատի դեկտատուրայի միջև նույնպիսի տարբերութուն կա, տարիատի դեկտատուրայի և սարուկների դասակարգի միջև: Ինչպես տեղերի դասակարգի և սարուկների դասակարգի միջև: Բուրժուազիան իշխանութունը զավթեց իր ձեռքը, վորպեսզի ամբողջ աշխարհի հարստությունը կենտրոնացնե մի փոքր խումբ բողջ աշխարհի հարստությունը կենտրոնացնե մի փոքր խումբ կապիտալիստների ձեռքին: Բուլ ժուազիային իշխանութունը պետք է, վորպեսզի ճնշե, հարստանարե միլիոնավոր աշխատավորներին:

Պրոլետարիատը իշխանութունը զավթեց իր ձեռքը, վորպեսզի նրա ողնությամբ վոչնչացնի մարդկանց անհավասարությունը, դասակարգի բաժանումը: Բանվոր դասակարգը դիկտատուրայի ճանապարհին իր առաջին քայլն հավերժացրեց արտադրության միջոցների մասնավոր սեփականությունից հասարակական սեփականություն դարձնելով:

Ընդհանուր-քաղաքական բնագավառում բուրժուազիան միայն խոսքով էր խոստանում տալ ամենքին քաղաքական ազատութուն, սեռերի հավասար իրավունք, ազգերի հավասարութուն և այլն: Իսկ իրականության մեջ կապիտալիզմը վոչ ազատութուններ, վոչ սեռերի իրավահավասարութուն, վոչ ազգերի հավասարութուն տվեց, և վոչ էլ կարող էր տալ, վորովհետև այդպես և կապիտալիստական հասարակության էջուքները, վորը կառուցված է հարվածների, ամենքին ճնշելու վրա, ով չի պատկառուցված է հարվածների, ամենքին ճնշելու վրա, ով չի պատկառուցված է հարվածների դասակարգին: Իսկ կապիտալիստների նում կապիտալիստների դասակարգին: Իսկ կապիտալիստների դասակարգին չի պատկանում ամբողջ բաղամտիսին դյուրացի շրջանը, ամբողջ համաշխարհային պրոլետարիատը:

Միայն պրոլետար-դիկտատորն առաջին անգամ իրականացրեց բոլոր քաղաքացիների իրականաբար հավասարութունը նացրեց բոլոր քաղաքացիների իրականաբար հավասարութունը առանց սեռի յիվ ազգի խտրության: Խորհուրդների իշխանու-

մասնավոր սեփականությունը, վոր հատկապես ներկայումս, յերբ բոլոր կապիտալները միացած են փոքրաթիվ սեփականատերերի ձեռքին, ամբողջ աշխարհի աշխատավոր ազգաբնակչությունը զրկված և մասնավոր սեփականությունից: Վոչ թե կոմունիստները, այլ կապիտալիստական հասարակությունն և, վոր վաղուց ի վեր մարդկության մեծամասնությունը զրկել և մասնավոր սեփականությունից: Բայց, մասնավոր սեփականությունը մի խումբ կապիտալիստների ձեռքից խլելով, մենք յերբեք ցանկություն չունենք այն տալ մի փոքրեւ նոր գոտակարգի ձեռքը: Մենք խլում ենք կապիտալիստների հարստությունը, վորպեսզի գրանով զրկենք նրանց հնարավորությունից իշխել հարյուր միլիոնավոր մարդկանց վրա, վորպեսզի նրանց թույլ չտանք աշխատավորներին ճնշել: Մենք մասնավոր սեփականությունը դարձնելով ամբողջ աշխատավորության սեփականությունը, գրանով վաճառեցնում ենք ամբողջ աշխատավոր ժողովրդի անհավասարությունն ու շահագործումը:

Բանվոր գոտակարգը և զիտակից գյուղացիությունը 1917 թվի հոկտ. 25-ի հեղափոխությամբ իշխանությունը վերցրին իրենց ձեռքը և միանգամից կանգնեցին հասարակությունն այնպես վերակազմելու խնդրի առաջ, վոր այլևս հնարավոր չլիներ վերագոտնալ կապիտալիզմին: Յեւ համաշխարհային շինարարական միակ նոր ձևը ձանաչված և կոմունիստական հասարակությունը:

Կոմունիստական հասարակարգի ժամանակ հարստությունը պատկանում և վոչ թե առանձին մարդկանց, վոչ թե առանձին գոտակարգերի, այլ ամբողջ հասարակությանը: Ամբողջ կոմունիստական հասարակությունը ներկայանում և իրրե հսկայական աշխատավորական մի արտել: Սակայն այդ արտելի զլխին ակեր չկա, վորովհետև արտելի բոլոր անդամները—աշխատավորները բոլորն էլ իրար հավասար և ընկերներ են: Հակառակ կապիտալիստական հասարակության արտադրական անարխային, կոմունիստական հասարակության մեջ արտադրությունը կազմակերպված և մինչ ամենափոքր մանրամասնությունը:

Կոմունիստական հասարակության մեջ բոլորն էլ աշխատում են միասին, մշակված և հաշվառված աշխատանքային նախագծի համաձայն: Այստեղ հաշվի չեն առնում բոլոր մեքենաները, ամբողջ հում նյութը, հասարակության ամբողջ բանվորական ուժը: Հաշվի չե առնված նաև հասարակության տարեկան սպա-

ռուսը: Արտադրված մթերքները գոտավորվում են հասարակական պահեստներում, վորտեղից էլ ըստ պահանջների բաշխվում են կոմունիստական հասարակության անդամների միջև: Այստեղ տեղ չունեն պարազիտները—մարդիկ, վորոնք ապրում են ուրիշի աշխատանքի հաշվին: Կոմունիստական հասարակության մեջ ու չի աշխատում, նա չի ուտում:

Կոմունիստական հասարակության մեջ աշխատում են միայն խոշոր ֆարրիկաներն ու զավոյները ամենախոշոր և ամենալավ մեքենաներով, վորովհետև նրանք պահպանում են աշխատավորների աշխատանքը: Ծանր, առողջությունը փոստակար ու կոպիտ աշխատանքները կատարելու համար հնարվում են հատուկ մեքենաներ: Այդ արտադրության մեջ մեքենան պետք և փոխարինե մարդուն:

Կոմունիստական հասարակության մեջ, ուր բոլորը պետք և աշխատեն ամբողջ հասարակության համար և փոխադարձաբար իրար համար, բոլորն էլ շահագրգռված կը լինեն նրանով, վոր բոլոր առարկաները լինեն ամենալավ վորակի և պատրաստվեն հնարավորության չափ արագ: Ընդհանուրի շահերը բոլորին էլ կը զրդի ձգտել, վոր աշխատանքը կատարվի լավ, պարզ և արագ: Կոմունիստական հասարակության մեջ մեքենաների կատարելագործումը և նոր մեքենաների հնարելը կը գրավեն հատուկ ուշադրություն: Վորչափ կատարելագործված լինեն մեքենաները, նույնչափ էլ հեշտ կը լինի և ավելի քիչ սևողություն կունենա հասարակության ամեն մի անդամի աշխատանքը:

Բուրժուական հասարակության մեջ վորչափ շատ խոշոր գյուտեր և սաղանդավոր հնարագետներ վաճառեցան միայն նրա համար, վոր այդ մեծ գյուտերը սպանում էին քչացնել կապիտալի շահը: Կոմունիստական հասարակության մեջ չի կարող խոսք լինել շահի կամ վատտակի մասին, վորովհետև արտադրված մթերքները վոչ թե ծախելու համար կը լինեն, այլ իրենց արտադրողների սպանման համար: Յեւ այդ պատճառով էլ հասարակությունը շահագրգռված կը լինի նոր գյուտերով, վորոնք կատարելագործում և դուրսացնում են արտադրությունը:

Կոմունիստական հասարակությունը կազմում և հավասարների միություն: Այստեղ չկան գոտակարգեր, վոչ էլ հարուստներ և աղքատներ կամ տերեր և ստրուկներ: Այդ հասարակության մեջ բոլորն էլ պարտադիր կերպով աշխատում են հասարակության մեջ բոլորն էլ պարտադիր կերպով աշխատում են հասարակության բարբորության համար: Հետևաբար այդպիսի հասարակության

զարգացումն ունեցած ուրախ զգացման շնորհիվ ամեն մի մարդ
րնականից զեղազեւ կը լինի վարեւ տեսակետից: Բնական հա-
կումները տարբերությունները զեղարվեստի մեջ կը ստեղծեն ան-
շափ բազմապիսի ուղղություններ:

Յեւ նոր զոլրոցը միայն զեղարվեստի զանազան ուղղու-
թյուններ չե, վոր սաշու յե: Յերթասարդության զարտիարակ-
ման հիմնական խնդիրը կը լինի, անկասկած, ձգտումն արթ-
նացնել սարգա քաղաքացու բոլոր ընդունակությունները, վոր-
չափ ել նրանք բազմակողմանի լինեն: Այդ ուղիով ել գնում ե
մեր միտանական աշխատանքային զոլրոցը: «Կապիտալի» Վին
հատորում Մարքսը բերում ե Սան-Ֆրանցիսկոյից (Ամերիկա) վե-
րագարծած Փրանսիական մի բանվորի հետեյալ խոսքերը. «Յես
յերբեք ել չեյի հավատում, թե կարող եյի աշխատել այն բոլոր
արհեստներում, վորոնցով հարկադրված եյի պարապել Կալիֆոր-
նիայում: Յես պի՛նզ հզմովված եյի, թե պիտանի եյի միայն կազ-
մարար լինելու... Լնկնելով արկածախնդիրների այդ աշխարհը,
վորոնք իրենց արհեստները շապիկներից ավելի հեշտ են փոխում,
ճիշտն ասած, յես ել ուրիշների նման սկսեցի աշխատել: Յերբ
հանքերում աշխատանքը դարձավ քիչ ձեռնտու, յես թողի այդ
աշխատանքը ե փոխադրվեցի քաղաք, ուր հերթով դարձա սպա-
զրիչ, ձուլարանի բանվոր ե այն: Փորձով համոզվելով, վոր
յես ընդունակ եմ ամեն աշխատանքի, յես այնուհետեւ ինձ
զգում եմ ավելի քիչ լծուլամորթ յե՛վ ավելի շատ մարդ»:

Ահա թե կոմունիստական հասարակության խնդիրն ինչու՛մն
ե — մարդուն չզարձնել միայն կաղնարար, կոշկակար կամ գեր-
ծակ, նրան չզարձնել թուրամորթ, վորպեսզի նա իրեն ավելի
շատ մարդ զգա:

Չափազանցություն չի լինի, յեթե ասենք, թե մեր իգեալն
ե ստեղծել այնպիսի մարդիկ, ինչպիսիք եյին Լեոնարդո-դա-
Վինչին, Աբրահամ Լինկոլնը կամ Բենվինուտո Չելլինին: Կոմ-
ունիստական հասարակությունը ե միայն նա հնարավորություն
կը սա մարդկային ընդունակությունների բազմակողմանի զար-
գացման:

Լեոնարդո-դա-Վինչին սքանչելի նկարիչ եր, տկանավոր ար-
ձան սգործ, նշանավոր ճարտարապետ ե ինժեներ, գերազանց զին-
վորական ճարտարապետ, յերածիշտ ե իմպրովիզատոր: Բենվի-
նուտո Չելլինին հայտնի վտակերիչ եր, հիանալի կաղապարագործ,
լավ արձանագործ, փորձված զինվորական ճարտարապետ, գերա-

զանց զինվոր ե հմուտ յերածիշտ: Աբրահամ Լինկոլնը փայտա-
հատ եր, հողագործ, նավաստի, գործակատար, փաստարան ե սպա
Միացյալ Նահանգների նախագահ:

Մեզ հակաճառելու յեն, թե բոլոր այդ մարդիկ դարձան
այն, ինչ վոր եյին, վորովհետեւ նրանք հոշակավոր տաղանդներ
եյին: Բայց չե՛ վոր բոլոր մարդիկ տաղանդավոր չեն: Իսկ մի
տաղանդ հավարյա թե ամեն մարդ ել ունի: Միայն պետք ե
հնարավորություն տալ, վոր այդ տաղանդը զարգանա, ե թույլ
չտալ վոր նա մեռնի, ինչպես թույլ չավին, վոր մեռնի Լեոնար-
դո-դա-Վինչիի, Բենվինուտո Չելլինիի, Աբրահամ Լինկոլնի տա-
ղանդը: Իսկ ընդունակություններն արթնացնել, խրախուսել տա-
ղանդները, նրանց զարգացնել պիտի կարողանա միայն կոմուն-
իստական հասարակությունը: Վորովհետեւ ամեն մի գիտու-
թյուն ամբողջ հասարակության քարոքության համար ե:
Վորչափ զարգացած ե հասարակության ամեն մի ատանձին ան-
գամ, վորչափ նա պատրաստված ե աշխատանքի հոմար, նույն-
չափ հարուստ, նույնչափ արժեքավոր, նույնչափ բազմատեսակ
ե բարք կը լինի ամբողջ հասարակության կյանքը:

Ահա դրանք են կոմունիստական հասարակության առաջ-
մղիչ ուժերը:

Կոմունիստական հասարակության անխուսափելիու-
թյ մը. — Կոմունիստական հասարակարգի հաստատումը վոր-
չափ անխախտ, նույնչափ անխուսափելի յե, ինչպես անխուսա-
փելի եյին մարդկային զարգացման բոլոր ետապները ե նրանց
անցումը զարգացման մի աստիճանից մյուսը:

Կոմունիստական հասարակությունը հիմնված ե յեղբայրու-
թյան ե հավատարության վրա. նրա մեջ չկան ճնշողներ ե ճնշվող-
ներ, հարուստներ ե սղքատներ, այսպիսի հասարակության զա-
րգափարններն անարգման ընդունելի յեն ամբողջ աշխատավորու-
թյան համար:

Կոմունիստական հասարակության զեմ կովում են միայն
մի փորը խումբ կապիտալիստներ ե նրանց սպասավորները, վո-
րոնք չեն ցանկանում ատանց կովի զիջել իրենց անցյալ իշխա-
նությունը: Յե՛վ այդ կոիվն ե, վոր սարսափեցնում ե բազմաթիվ
անգիտակիցների ե աատանփողների: Նրանց հոգուն մոտ են կոմ-
ունիստական հասարակության գաղափարները, բայց... բայց
յեթե կարելի լիներ թեակոխել այդ հասարակությունը աննկա-

տելիտրենն և անվնաս կերպով: Երանք ասում են, թե պետք չի բռնություն գործել, պետք չի քաղաքացիական կռիվ:

Այն, մենք ևս ջանկանում էլինք կապիտալիստական կարգերից կոմունիստականին անցնել խաղաղ ճանապարհով, յեթև... յեթև անտեսական մի ձևից ուրիշին անցնելը կատարվեր խաղաղությամբ, յեթև նոր անտեսական ձևի հետ կապված քաղաքական կյանքի վերակազմությունը և իշխանություն մի դասակարգից մյուսին անցնելը կատարվեր խաղաղ ճանապարհով: Բայց այդ յերբեր մարզկային հասարակության դարգացման ամբողջ շրջանում չի յեղել:

Ամբողջ հասարակության նախկին պատմությունը դասակարգերի կոնֆլիկտի պատմությունն է:

Ազատ և սարսեկ, կարված օտեր և գյուղացի, գործատեր-սրհետավոր և քաղցած, կապիտալիստ և բանվոր, կարձ՝ ճնշող և ճնշվող իրար հետ գտնվում են մշտական հակասության մեջ, վարժում են անզոգար պայքար, յերբեմն գաղտնի, յերբեմն հայտնի, վսրը վերջանում և ամեն անգամ ամբողջ հասարակության հեղափոխական վերակազմություն:

Նահապետական հասարակության մեջ իշխանության անցումը մորից հորը կատարվել և զուտ անտեսական օղղեցություն տակ, յերբ դարգացել էր օղղամարդու, ախիքն ապրուստ հայթայթողի մասնավոր սեփականությունը և անհրաժեշտ էր դարձել պահպանել այդ մասնավոր սեփականությունը ցեղի մեջ: Այդ ատաղին հեղաշրջումը կամ ստաղին հեղափոխությունը խաղաղ ճանապարհով չի կատարվել: Կինը հարստանալով ևր: Մտցված էլին հատուկ սրենքներ, վսրոնք պատժում էլին մասնավոր սեփականությունը խախտողներին: Վստիկանությունը, ժանդարմերիան և բանտերը դարձել էլին նոր հասարակության անհրաժեշտ հիմնարկություններ:

Արտադրականության դարգացումը, նահապետական հասարակության անտեսական գրություն փոփոխումը պահանջում էլին բանվորական ձևերի ավելացումն: Մտցված էր ճսրությունը՝ մարդկային անձի վրա գործ դրվող բոլոր սարսափներով:

Անցումը նահապետական հասարակությունից գեպի ֆեոդալական հասարակություն, վոր հիմնված էր նոր անտեսական փոխհարաբերություններին վրա, յերբ հողագործությունը տիրապետող գերբ էր ստացել անսպասարկության հանգեպ, — կատար-

վեց հին հասարակության ավերակները վրա: Ֆեոդալը էր տիրապետող գերբը յերկրագնաի վրա նվաճեց գեները ձևերին:

Ֆեոդալական հասարակությունը, բաղմաթիվ տարբերի անզոգրում, կատաղի և մարզկությունն հյուժող պատերազմներից հետո, էր. տեղը զիջեց նորածին կապիտալիստական հասարակությանը: Կապիտալիզմը էր իշխանություն ճանապարհին անցավ հարյուր հազարավոր զիակները վրայով: Նա էր գերբը հրով ու սրով նվաճեց զ ֆեոդալից, վսրն ամեն կերպ պայքարում էր նորածին անտեսական ույժերի դեմ: Կապիտալը էր հաղթական յերթի ժամանակ արյունալի հաղթանակ տարավ նուս արհեստավորների վրա: Կապիտալիստ դասակարգն էր համաշխարհային տիրապետության հասավ զիակները յենների վրայով, աշխատավոր ժողովրդի արյան գետերով:

Կործանվող ֆեոդալական հասարակությունից ծագող ժամանակակից բուրժուական հասարակությունը չօջնացրեց դասակարգային հակասությունները: Նա միայն ստեղծեց նոր դասակարգեր, ճնշման նոր պայմաններ, հների տեղ պայքարի նոր ձևեր:

Տնտեսական նոր փոխհարաբերությունները, վսրոնք հիմնված են շահերի ընդհանրություն վրա, ընդհանուր աշխատանքի վրա, յեղբայրություն և հավասարության վրա, պահանջում են քաղաքական նոր ձևեր: Մեռնում և շահագործման և ճնշման վրա հիմնված իրավակարգը: Պարազիտներն ստիպված են իրենց տեղը զիջել ամբողջ աշխարհի աշխատավորների առաջ: Սակայն այդ դարավոր հարստանաբողները չեն ցանկանում զիջել իրենց իշխանությունը: Յեվ ահա վառ բոցերով բռնկում և ամբողջ աշխարհի քաղաքացիական պատերազմը: Հոսում և մարզկություն օղղատագրողների — բանվորների և գյուղացիների արյունը:

Նահապետական հասարակությունն ու կոմունիստական ընտանիքն էրենց հասարակական արտադրական պարզությունը և հասարակական սպասումով պետք և իրենց տեղը զիջելին մասնավոր սեփականատիրական հասարակության յերկու պատճառներով: Կոմունիստական ընտանիքը պետք և կործանվեր նախ՝ նրա համար, վոր նա չէր գինված գիտությունը, յերկրորդ՝ նրա համար, վոր այդ շրջանում մարդը ընություն վսրոմեղի գերին էր:

Կոմունիստական ընտանիքից մինչև իմպերիալիզմ անցնե-

լով զարգացման բոլոր ետապները, մենք այդ յերկար ձանա-
պարհն անցնելիս զինվեցինք մինչև ատանները գիտութեամբ,
մենք հաղթեցինք բնութեանն ու նրա տերը զարձանք:

Ահա յերկու հիմնական զործոններ, վորոնք վստահութեան
են սալիս մեզ մեր այդ հաղթութեան մեջ:

Վորպեսզի համենք մինչև կոմմունիստական հասարակու-
թեան, անհրաժեշտ էր, վոր անցնելին մասնավոր սեփականա-
տիրական կազմակերպչական ձևերի բոլոր ետապները, սկսած
ստրկութեան շրջանից մինչև համաշխարհային կապիտալիզմը:
Մարդկութեան զարգացման այդ ետապները հենվում էին վորոշ
անսեռական փոխհարաբերութեանները վրա: Քանզիցին ավյալ
զարաշրջանի անսեռական ձևերը, նրա հետ քայքայվեց նաև ամ-
բողջ քաղաքական և հոգեկան վերնաշերտը:

Վորչափ բնական էր Ֆեոդալական կամ բուրժուական հա-
սարակութեանները, ծագումը, նույնչափ բնական էր և անխու-
ստափելի նրանց անկումը, հենց վոր նրանց փոխարինելու յեկան
նոր անսեռական ձևերը: Համաշխարհային կապիտալիզմի զարգացու-
մը իրեն հատուկ բոլոր քաղաքական և հոգեկան իրավակարգով
մարդկային զարգացման անխուստափելի ետապներից մեկն է:
Կապիտալիստական կարգերի քայքայումը կրող իմպերիալիստա-
կան պատերազմն անխուստափելի չէր: Անխուստափելի չէ նույնպես
բուրժուական կարգերին փոխարինելու յեկող կոմմունիստական
իրավակարգը:

Մարդկային հասարակութեան ամբողջ զարգացումը ներկա-
յանում է իրրե բիշ թե շատ վարագուրված քաղաքացիական պա-
տերազմ գոյութեան ունեցող հասարակութեան ներսում: Սակայն
նախորդ շարժումները փորրամասնութեան շարժումներ էին
փորրամասնութեան ոգտին—նահապետական հասարակութեան
սեփականատերերի մի փոքրիկ խմբակի շարժում ընդդեմ հա-
սարակութեան բոլոր անդամների, կալվածատեր-Ֆեոդալների
մի փոքրիկ խմբակի շարժում ամբողջ աշխատավոր պու-
ղացիութեան դեմ, մի բուռ կապիտալիստների շարժում համաշ-
խարհային պրոլետարիատի դեմ: Պրոլետարիական շարժումը
հսկայական մեծամասնութեան շարժում է նոզուտ հսկայական
մեծամասնութեան: Ահա թե ինչու այդ հաղթութեանը անպայ-
ման կավարտվի աշխատավորութեան հաղթանակով, վորն և կը
մտցնի կոմմունիստական հասարակակարգ:

Միայն սոցիալական հեղափոխութեանը կարող է մարդկու-
թեանը դուրս բերել այն փակուղուց, վոր ստեղծել են իմպե-
րիալիզմը և իմպերիալիստական պատերազմները: Ինչ էլ վոր
լինեն այդ հեղափոխութեան զժվարութեանները և նրա հնարա-
վոր ժամանակավոր անաջողութեանները կամ հակահեղափոխու-
թեան ալիքները,—պրոլետարիատի վերջնական հաղթութեանն ան-
խուստափելի չէ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ Լ ՈՒ Խ Ի

Նամուսնիստական ընտանիքից զեպի կամեմուհիս. հասարակություն

	Եջ
Ի՞նչ բան է կամեմուհիստական հասարակությունը	3
Գոյություն կա՞լը վորպես հիմք ամեն կյանքի	5
Գոյություն կա՞լը կենդանական և բուսական աշխարհում	5
Մարդկային հասարակության գոյություն կա՞լը և գոյություն կա՞լը մարդկային հասարակության մեջ	7
Ի՞նչ ճանապարհով	8
Նախնական ընտանիքի անասական գրությունն ու նրա կազմակերպությունը	9
Գերբնակչության որևէքը վորպես կուլտուրայի առաջնորդ	10
Տեխնիկան կամեմուհիստական ընտանիքի շրջանում	11
Խոսքի սաղմերը հասարակական-աշխատանքային հնչյուններից	14
Նախնական ցեղի ներքին կազմը	15
Նախնական հասարակության հոգեբանությունը	15

Գ Լ ՈՒ Խ Ի Ի

Նախապետական-ցեղային համայնք

Անասնապահություն և հողագործություն ծագումը	17
Անցումը թափառական կյանքից զեպի նստակյաց կյանքը	18
Աշխատանքի բաժանումը	20
Պատերազմը վորպես արտագրություն առանձին ճյուղ	20
Աշխատանքի զեկավարի առանձնացումն	21
Ցեղային համայնքների փոխհարաբերությունը	23
Նահապետական ցեղի առանձնահատուկ գծերը	24
Փոխանակման ծագումը	25
Ցեղային - նահապետական շրջանի հոգեբանությունը	27
Բնական ֆեոդալիզմ	29

Գ Լ ՈՒ Խ Ի Ի Ի

Կ ի ն ն ա ն ց յ ա լ ու մ

Նախնական ընտանիքի ձևերը	33
Արյունակցական ընտանիք	34
Ի՞նչ էր ամուսնական հարաբերությունների և ընտանիքի ձևերի փոփոխման պատճառը	37

Կնոջ իրավական գրությունը նախնական ընտանիքում	38
Փաստագրության իրավունք	38
Միամուսնական ընտանիք	40

Գ Լ ՈՒ Խ Ի Ի Ի Ի

Ասեկուրյան ծագումը յեկ ասեկուսիսական հասարակության անկման պատճառներ

Ստրկության ծագման արտագրական պայմանները	44
Նահապետի սեփականության գաղափար	45
Անձի գրությունը խմբում և հասարակության մեջ	46
Միջխմբական հարաբերությունները	48
Տերերի և ստրուկների գրությունը	49
Ստրկափրական հասարակությունների անկման պատճառները	50
Հոգեբանականություն և ստրկություն	51

Գ Լ ՈՒ Խ Ի Ի Ի Ի Ի

Ֆեոդալական հասարակություն

Ֆեոդալական հասարակության հիմքերը	53
Ֆեոդալական խմբի արտագրական և բաշխողական հարաբերությունները	54
Ֆեոդալական հասարակության միջխմբային հարաբերությունները	58
Կաթողիկ յեկեղեցին	59
Արհեստավորները	61
Ֆեոդալական հասարակության կուլտուրական վիճակը	63

Գ Լ ՈՒ Խ Ի Ի Ի Ի Ի Ի

Մանր բուրժուական հասարակություն

Մանր բուրժուական հասարակության հիմնական գծերը	66
Մանր բուրժուական հասարակության արտագրական և բաշխողական հարաբերությունները	67
Մանր բուրժուական հասարակության ներքին հարաբերությունները	71
Մանր բուրժուական հասարակության միջխմբական հարաբերությունները	73

Գ Լ ՈՒ Խ Ի Ի Ի Ի Ի Ի Ի

Ասեկուսական կապիտալիզմի դարաշրջան

Հասարակության անդամների ներքին հարաբերությունը առևտրական կապիտալի դարաշրջանում	79
Առանձին անասությունների փոխադարձ հարաբերությունները	81
Մտավոր գարգացումը առևտրական կապիտալի շրջանում	85

Գ Լ Ո Ւ Խ VIII.

Արդյունաբերական կապիտալիզմ

Մանուկ աղտուրայի ծագման սոցիալական պատճառները	86
Կապիտալիստական արտադրության ելույթյունը	88
Հասարակական բաշխումը մանուֆակտուրային դարաշրջանում	91
Մանուֆակտուրային շրջանի հասարակական հոգեբանությունը	92

Գ Լ Ո Ւ Խ IX.

Մեկնայական արտադրության քանակի արդյունաբերական կապիտալիզմը

Հասարակական հարաբերությունները մեքենայական կապիտալիզմի շրջանում	90
Արտադրական հարաբերությունները ամբողջ յերկրագործության վրա	98
Բանվորների համաշխարհային կազմակերպությունը	102
Հասարակական հոգեբանություն ամենազլխավոր փոփոխությունները մեքենայական կապիտալիզմի շրջանում	105

Գ Լ Ո Ւ Խ X.

Պոլեմարխատի գիկսատուրան

Կապիտալի միացումը փոքրաթիվ ձեռքերում	107
Կապիտալիստական յերկրների փոխադարձ հարաբերությունները	111
Բուրժուազիայի գիկատուրան	115
Պոլեմարխատի գիկատուրան	118
Ինչու համար և պետք իշխանությունը կապիտալիստին և բանվորին	119

Գ Լ Ո Ւ Խ XI.

Կոմունիստական հասարակություն

Կոմունիստական հասարակության հիմքերը	123
Կոմունիստական հասարակության առաջնիշ ույժերը	126
Կոմունիստակ. հասարակության անխտառփելիությունը	129



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Կովալենկո — «Քաղաքական գրագիտություն»,
գինն Ե 25 Կ.
2. Ս. Կասյան — «Հայաստանի տնտեսական - դասա-
կարգային ստրուկտուրան», գինն Ե : . 15 Կ.
3. Ա. Մարտունի. — «Հովհ. Թումանյանի ստեղծա-
գործության սոցիալական արժեքը», գ. Ե . 15 Կ.
4. Հովհ. Քաջազնունի — «Հ. Հ. Դաշնակցությունն
անելիք չունի այլևս», գինն Ե. 75 Կ.
5. Դեպի նոր կյանք — պիես
6. Կարմիր ոսպնիկի հուշատետրը.
7. Լիլինա. — Կոմունիստական ընտանիքից դեպի
կոմ. հասարակություն 75 Կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

8. Լենին (ժողովածու):
9. Վ. Նիկոլսկի. — Ինչպես ոգտագործել կենդանի-
ների աղբը լավագույն կերպով
10. Ն. Կովազին. — Մեղուներին կերակրելը

Գինն Ե 75 ԿՈՊ.

Դիմել՝

Издательство „Мартакоч“.
Тифлис, уа. Троицкого № 6.